

6799


6800

6801

Թիֆլիս
1911

902.7

L-14



Ե. ԼԱԼԱՅԵԱՆ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Արասպուտ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

12772

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրոնային տպագրության Գործ. Ն. Ազգային Գրադարանի Պոլիգ. Ն 7.
1911

Ա Ջ Դ

«Վասպուրական» աշխատութիւնս բաղկացած է լինելու հետեւեալ վեց մասերից.

Ա. Ամբողջ Վանի նահանգի տեղագրութիւնը, պատմական և ննագիտական տեղեկութիւններով:

Բ. Ամբողջ նահանգի բոլոր վանքերի նկարագրութիւնը:

Գ. Վասպուրականի հայերի և միւս ազգերի ազգագրութիւնը:

Դ. Ամբողջ Վասպուրականի ժողովրդական հաւատքը:

Ե. Վասպուրականի հայ ձեռագիրները, ցուցակը:

Զ. Վասպուրականի հայ բանաւոր գրականութիւնը:

302.7
L-14
41

Ե. Լ Ա Լ Ա Յ Ե Ա Ն
88

Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Արտատպւած
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆ ԴԻՍԻՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեհրաւարտ տպարան օր. Ն. Աղանեանի Պօլից. Աճ 7.
1911

8101

Յ Ա Ն Կ

Մարդաբանական համառօտ տեղեկութիւններ	3—5
Բնակարանը և նրա սլարազաները	5—17
Զգեստ և զարդ	17—27
Ամուսնութիւն և հարսանիքի սովորութիւններ	28—48
Տղաբերք և կնուէր	49—70
Ընտանեկան կեանք	71—77
Մահ, թաղումն և մեռելոց	77—82

2004



3611-519



Աւսնիկի հայ գեղջիկուհիներ.

Paysannes arméniennes de Van (Arménie-Turque).



ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

ՎԱՆ, ՏՈՍՊ ԵՒ ՀԱՅՈՑ-ՁՈՐ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.



Եր ուսումնասիրութեան վայրում, Վանի, Տոսպի և Հայոց-Ձորի գաւառակներում, բացի բնիկ հայերից, վերահաստատուած են նաև եկեղերներ Պարսկաստանի Խոյ, Սալմաստ և Նոր-Ջուղայից, ինչպէս նաև Վանի շրջակայ գաւառակներից՝ Մոքսից, Շատախից, Դէհերից (քրդախօս հայեր), Ողիմից, Սպարկերտից, Կառկառից, Խիզանից, բայց և այնպէս՝ մեծամասնութիւնը կազմում են բնիկները։ Սակայն այս բնիկներէջ էլ Վան քաղաքի և Աւանց ու Շահբաղի գիւղերի բնակիչները միայն խօսում են միանգամայն միեւնոյն բարբառով, մինչդեռ ամբողջ Տոսպի և Հայոց-Ձորի բնակիչները Վանի և սրա գաւառակի բնակիչների հետ մարդաբանական, լեզուաբանական և մանաւանդ ազգագրական տեսակէտներից մի միութիւն կազմելով հանդերձ, փոքրիկ նրբութիւններով տարբերւում են։

Այս բնիկներն ընդհանրապէս միջհասակ են, թխադէմ, կտրմրաթուշ, թուխաչեայ և թխահեր։ Գեր տղամարդիկ սակաւաթիւ

են, որովհետև գիւղացիները չարքաշ աշխատանքի են դատապարտուած, իսկ վանեցիներն ամէն օր ստիպուած են մեծ մասամբ հետի 4—5 կիլոմետր անցնել, գնալ գալով Այգեստանից Քաղաքամէջ, իսկ կանանցից շատ շատերի փորը ուռած է և կախ ընկած, որ հետեանք է բուսական սննդի և նստակեաց կեանքի: Այս երևոյթն աւելի աչքի է ընկնում քաղաքի կանանց մէջ, որոնք շատ աւելի փակուած են քան գեղջկուհիները. վերջիններս նոյնիսկ զարու արտեր են ձեռներով քաղում, հաղարաւոր անգամներ կոտնալով:

Թէ տղամարդիկ և թէ կանայք ընդհանրապէս թոյլ են և դանդաղաշարժ, որ նոյնպէս հետեանք է վատ սննդառութեան:

Վանեցիների գլուխը միջակ մեծութեան է, ծոծրակի և գագաթի միջի մասը փոխանակ ուռուցիկ լինելու, հարթ է, որովհետև մանկական հասակում միշտ մէջքի վրայ են պարկեցնում և գլուխը բրդէ չոր բարձի վրայ դնում: Ականջների բլթիկներն ընդհանրապէս կպած են ծնօտի մօտի կաշուն: Քթերը միջակ են, թէհանրապէս կպած են արծուաքթեր: Աչքերը, որ խոշոր են և նշաձև, պէտև կան նաև արծուաքթեր: Աչքերը, որ խոշոր են և նշաձև, պէտև կան նաև արծուաքթեր: Աչքերը, որ խոշոր են և նշաձև, պէտև կան նաև արծուաքթեր: Աչքերը, որ խոշոր են և նշաձև, պէտև կան նաև արծուաքթեր:

Վզերը երկար են և առաջ ձգուած, այնպէս որ վանեցին գլուխն ուղիղ չի բռնում, այլ առաջ ուղղած և դէպի գետին խոնարհած, հետեանք տաճկական դարաւոր լծի սաստկութեան: Կարճաւիղներ սակաւաթիւ են և ծաղրաբար խոլավիղ են կոչւում:

Մազերը սև են և առատ, մանաւանդ կանանց, որ երբեմն մինչև 50 փոքրիկ հիւսեր են կազմում: Ձայնը ընդհանրապէս աւելի բարակ է քան հաստ, աւելի կանացի, քան առնական: Սոսկի բարակ է քան հաստ, աւելի կանացի, քան առնական: Սոսկի բարակ է քան հաստ, աւելի կանացի, քան առնական:

Սովորաբար յամր են քայլում, գլուխը խոնարհած և հայեացքը գետին ուղղած:

Վանեցիները շատ ընդունակ են և աչքաբաց. սաստիկ արագութեամբ համակերպուում են իրենց միջավայրին և քաղաքակրթւում: Սրանք նաև շատ աշխատասէր են, սակայն չափազանց դանդաղիկոտ, թէ գործելու, թէ քայլելու և թէ նոյն իսկ խօսելու մէջ: Աշխոյժ, եռանդ, ոգևորութիւն՝ մեծապէս պակասում են սրանց: Նոր սերունդը սիրում է խօսել և բաւական պերճախօս է, սակայն պատրաստութիւն, կրթութիւն չունի: Նախնական կրթութիւնը վանում և նոյն իսկ գիւղերում, բաւական տարածուած է, Վանի գրագէտների թիւը հասնում է 800/0, սակայն միջնակարգ և մա-

նաւանդ բարձր կրթութիւն ստացածներ չափազանց սակաւաթիւ են:

Վանեցին առևտրական ջիղ ունի, նա գրեթէ ամէն բանի վրայ նայում է շահագրգիռական նպատակով և պատրաստ է ամէն զոհաբերութիւն անել, ամէն տեսակ հաճոյքներից և կարիքներից զրկել իրեն, միայն թէ կարողանայ փող վաստակել, կայք դիզել: Դարերի ընթացքում ստրկական դրութեամբ ապրելով, յափշտակիչների աչքից իւր ունեցածը միշտ թաքցնելու դատապարտուած լինելով, վանեցին սովորել է մուրացկի կեանք վարելու, ուստի և զարմանալի չէ, որ ահագին հարստութիւն ունեցողների կանայք և աղջիկներն անգամ բոբիկ են ման գալիս, պատառոտուած շորեր հագնում: Համիդիական սոսկալի ըէժիմը նրանց դարձրել է կասկածոտ, շողոքորթ, վախկոտ և նենգամիտ: Յաճախակի սովը, սրանց համար կատարուող ժողովարարութիւնները՝ ոչնչացրել են վանեցու անձնասիրութեան ու վեհանձնութեան զգացումները, այնպէս որ նրանցից ամենահարուստն անգամ ամէն րոպէ լաց է լինում իւր վիճակի մասին և պատրաստ է ձեռք մեկնելու...

Վանեցու մի յատկութիւնն էլ այն է, որ ագուլեցու նման սիրում է գաղթել, ընտանիքը Վանում գրեթէ անխնամ թողած նա երկար տարիներ դեգերում է Պօլիս, Տրապիզոն, Ամերիկա, Թիֆլիս, Բագու, և աշխարհի բոլոր կողմերը:

ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Ընդհանրապէս Վան քաղաքի և մանաւանդ գիւղերի թէ հայ և թէ այլազգի բնակիչների տները միատեսակ են և միանգամայն ողորմելի: Քաղաքում վերջին ժամանակներս շինուել են փոքր ի շատէ յարմարաւոր տներ, սակայն սրանք էլ ճարտարապետական տեսակէտից շատ փոքր արժէք ունեն: Տեղական կլիմայական պայմանները և վառելափայտի չափազանց թանկութիւնն ստիպել են մանաւանդ գիւղացիներին կիսագետնափոր, ցածր տներ շինել, և խոհանոցն ու սենեակը, գոմն ու հիւրատունը միացնել, օրպէսզի խոհանոցի կրակով և անասունների ջերմութեամբ տաքանան: Տնտեսական նեղ դրութիւնն ու քաղաքակրթութեան ստորութիւնը զիջարուեստի և ճարտարապետութեան պահանջները միանգամայն անտես են առել: Երկրի անապահով դրութիւնը, հարկային սխալմի անկանոնութիւնը ստիպել են մարդկանց աշխատել թաղ-ցնիւղ իրենց հարստութիւնը և ոչ մի բանով ցոյց չտալ, որ իրենց վիճակը միւսներից լաւ է, որպէսզի այսպիսով նախ ազատ մնան

գողերի և աւազակների յարձակումներից, երկրորդ՝ միւսներից աւելի հարկի չենթարկուին և երրորդ՝ ստիպուած չլինեն իրենց տանըն ընդունելու բաղձաթիւ պաշտօնեաների, որոնք ճանապարհորդելիս՝ հիւրանոցներ չլինելու պատճառով՝ իջնում են գիւղի ամենալաւ տները և ոչ միայն բնակարանից օգտուում, այլ և պահանջում հիւրասիրել իրենց՝ առանց մի որեւէ վարձատրութեան:

Այս պատճառների վրայ պիտի աւելացնել նաև այն հանգամանքը, որ թուրքերի «աչքը չէր վերցնում», որ գեաւուրը ոչ միայն մասնաւոր, այլ և հասարակական գեղեցիկ շէնքեր կառուցանէ, ապացոյց ասածիս այն դէպքը, որ Վանի ս. Պօղոս Պետրոս եկեղեցու բակի դարպասը մի քիչ շքեղ շինելու համար տուգանքի են ենթարկուել:

Գիւղական տներ.—Գիւղական տները մեծ մասամբ կիսաբետնափոր են, և բաւական ցածր: Պատերը շինուում են կամ անտաշ քարերից, և կամ, որ շատ ընդհանրացած է՝ ցեխից: Պատուհաններ չկան, այլ միայն հերթիկներ՝ կտուրների վրայ: Տները ծածկուում են պատերի և սիւնների վրայ յենած գերաններով, որոնց վրայ շարում են մարդակներ, վերան ածում ձիւ կամ եղեգն, և ապա ծածկում հողով և յարդախառն ծեփով: Կտուրները տափարակ են, միայն հերթիկների շուրջը բոլորաձև դուրս ցցուած: Եւ որովհետև տները միմեանց կից են, առանց մի որեւէ յատակագծի շինուած, այս պատճառով և յաճախ սրանց կտուրները փոխարինում են փողոցների և կամ մինի կտուրը միւսի համար իբր բակ է ծառայում: Այս շրջանի տներն իրենց բաղկացուցիչ մասերով շատ նման են Ռուսահայոց Ախալցխայի, Ախալքալաքի և Աղէքսանդրապոլի հայ գիւղացիների տներին, որովհետև վերջիններս էլ Կարնոյ գաղթականներ են, իսկ Կարնոյ վիլայէթը Վանի վիլայէթից շատ բանով չի տարբերուում:

Տները բաղկացած են հետևեալ մասերից. Ա. յրահ, Բ. Տանտուն, Գ. Մառան, Դ. Փակախ կամ Գոմ, Ե. Դարմնոց:

Ա. Սրահը տան առջև տարածուող բակի այն մասն է, որ կտուրով ծածկուած է, միայն առաջը բաց է, այս պատճառով և տեղական բարբառով «երեսբաց» է կոչուում: Այստեղ են անցկացնում գարնանն ու ամրանը տան անդամներից շատերը. նոյն իսկ գիշերներն էլ այդտեղ են քնում: Երբեմն այս երեսբացը գետնի մակերևոյթից փոքր ինչ բարձր է լինում, և նոյն իսկ, որ շատ հազուադէպ է, ճաղերով պատած:

Տանտուն.—Սա մի բառանկիւնի սենեակ է, որի կտուրը չորս սիւնների վրայ յանկելով կոնաձև բարձրանում է և մէջ տեղում մի հերթիկ բաց անում: Այս հերթիկի հանդէպ, յատակի մէջ թա-

ղուած է մի մեծ թոնիր, ուր սովորաբար հաց են թխում. մի փոքրիկ թոնիր էլ մի քիչ հեռու է թաղուած, որը վառում են ձեռաց մի բան պատրաստելիս: Այս երկու թոնիրներն էլ վառելիս ծուխը բռնում է ամբողջ սենեակը, մանաւանդ երբ դուրսը քամի է լինում, այս պատճառով և թէ առաստաղը և թէ պատերը բոլորովին սևացած են:

Օդա կամ Սարու.—Փայտի մի անկիւնում, գլխաւորապէս դրան մօտ, յարմարեցրած մի սենեակ է, որ փայտից անջատուում է ոչ թէ պատով, այլ միայն մի վանդակով: Երբեմն այս վանդակն էլ չի լինում: Օդայի պատի մէջ շինուած է լինում մի բուխարիկ և սրա երկու կողմը, բուխարիկին ուղղահայեաց ձգուում են երկու դարաբա, մօտ կէս մետր բարձրութեան թախթեր, որոնց երկարութիւնը հաւասարուում է օդայի երկարութեան, իսկ լայնութիւնը հասնում է մինչև մի մետրի: Հարուստ տներում այս դարաբանների մօտ, սրանց բարձրութեան և երկարութեան, միայն կրկնակի լայնութեան կապուում են մի մի թաղթ ևս, ուր նստելուց դատ՝ քնում են ամուսնացած զոյգերը:

Բուխարիկի երկու կողմը լինում է մի մի պահարան, վերևում երբեմն փոքրիկ թարկներ: Բուխարիկի հանդէպ, կտրան վրայ, լինում է մի պատուհան:

Թախթերի վրայ սովորաբար խսիր, և երբեմն նաև թաղիք է քցուած լինում, իսկ երբ մի հիւր է գալիս՝ մի ներքնակ, երբեմն նաև մի գորգ են սփռում և մի բարձ գնում, որ հիւրը կրթնի: Ամենապատուաւոր տեղը համարուում է բուխարիկի երկու կողքը:

Թէև բուխարիկը վառում են քաքորով, սակայն սա աւելի ծխախոտը վառելու, սուրճի, թէյի համար ջուր տաքացնելու համար է լինում, օդան տաքանում է փակախի անասունների ջերմութիւնից:

Փակախ կամ փայախ և գոմ.—Սովորաբար իւրաքանչիւր տան մէջ մի փակախ և մի գոմ է լինում, սակայն հարուստ տներում պատահում են նաև 2—3 փակախ միմեանց մէջ կամ միմեանց կողքի շինուած: Ամենատաք փակախը յատկացրուած է լինում գոմէշներին:

Փակախները հասարակ շէնքեր են, մի կամ երկու հերթիկով: Յատակը յաճախ սալաշատակած է լինում և երկարութեամբ քարէ մսուրք կապուած: Սովորաբար կենդանիները երկու կարգ են կապուում, երեսները միմեանց հակառակ կողմ դարձուած:

Ոչխարների պահպանութեան յատկացրած փակախը, ուր մսուրք չի լինում, կոչուում է գոմ:

Մառան.—Մառանը միշտ կից է լինում տան—տանը և նրա

հետ միացած միակ դռնով: Սա մի փոքրիկ սենեակ է, հարթ կրտսրով և մի փոքրիկ հերթիկով: Սրա մի անկիւնում դրուած է լինում ալիւրի փայտէ կամ կաւէ շտեմարանը: Ընդհանրապէս այստեղ է պահուած տան բոլոր բարիքները՝ իւղը, պանիրը, գինին, զանազան բոնուածքներ, մրգեր և այլն, և սրա բանալին սկսած կամ մեծ հարսի ձեռքն է լինում:

Յարդանոց.—Սովորաբար շինուած է կալի մօտ, որպէսզի հեշտ լինի յարդը կալից այդտեղ լցնել: Սա հարթ կտրով և մի հերթիկով մի ծածկ է, ընդհանրապէս ցելից կառուցած պատերով:

Տները մօտ կան խացի խոր՝ հորեր ցորեն կամ գարի պահելու: Սրանք 2—3 մետր խորութեան և 1—1½ մետր տրամագծով քարաշէն, ծայրից կտրուած կոնուսի ձևով հորեր են, կէս մետրաչափ տրամագիծ ունեցող բերանով, որ ծածկուած է մի սալքարով: Ցորենը կամ գարին լցնելուց յետո՝ երեսին խոտ են դնում, յարդ լցնում մինչև բերան, և ապա սալով ու հողով ծածկում:

Քաղաքի տները.—Վան քաղաքի բնիկները գրեթէ բոլորն էլ սեպհական տներ ունեն, և որովհետև եկեղեցիներն էլ շատ սակաւաթիւ են, ուստի և վարձով տրուող բնակարաններ քիչ կան և եղածն էլ չափազանց արժան են: Երկու յարկից բաղկացած տունը տարեկան 100—150 ռ. հազիւ է վարձ բերում:

Այգեհատանի գրեթէ բոլոր տներն իրենց առջև ընդարձակ այգիներ ունեն, մինչդեռ Քաղաքամիջինից շատ քչերը զարդարուած են փոքրիկ պարտէզներով:

Տները կառուցուած են հում աղիւսից, իսկ հիմնապատերը՝ բարերից, որպէսզի խոնաւութիւն չանցնի:

Աղիւսը շինում են այսպէս. հողակոյտի վրայ ջուր ածելով կոխկրտում են, դարձնում կաւ, յետոյ ձեռով վերցնում լցնում են գետնին դրուած փայտէ կաղապարի մէջ, երեսը հարթում և կաղապարը հանում: 10—15 օրուայ ընթացքում արևի ազդեցութեամբ աղիւսը բոլորովին չորանում է և այնպէս ամրապինդ դառնում, որ նրանով շինուած տները երկու հարիւր տարուց աւելի են դիմանում: Միևնոյն կաղապարով միաժամանակ կտրում են մէկ և կէս աղիւս, մինը քառակուսի 30 սանտ. մեծութեան, իսկ միւսը սրա կիսի չափ: Քառակուսի երկական աղիւսով շարում են տների ներքին յարկերը, իսկ մէկ ու կիսիկանով՝ երկրորդ յարկերը:

Հիմքերն Այգեհատում հազիւ մի մետր խորութեան են փորում, իսկ Քաղաքամիջինում առնուազը 2 մետր, որովհետև դարերի ընթացքում այստեղ տներ շինուելով և քանդուելով մի մետրից աւելի հաստութեան նոր խաւ է կազմուել:

Հնումը քաղաքի տները գիւղական տների պէս են հղիլ հէնց

այժմ էլ աղքատ դասակարգի տները նոյն կերպարանքն են կրում, իսկ հարուստ դասակարգինը բաղկացած են երկու յարկից, որոնցից առաջինը միանգամայն նման է գիւղական տան, ունենալով սրահ, տան-տուն, մառան և փակախ, իսկ վերին յարկը կազմուած է մի քեօշկից և երկու, չորս, կամ աւելի սենեակներից: Առաջին յարկը տարբերուած է գիւղական տներից միայն նորանով, որ հերթիկների փոխարէն լուսամուտներ ունի, սակայն սրանք էլ չափազանց փոքր, հազիւ կէս մետր բարձրութեան և 20 սանտիմետր լայնութեան: Շատ տների մէջ տան-տունը դարձնալ պահանջ է իւր հերթիկը կտրի վրայ, եթէ միայն երկրորդ յարկի սենեակները սրա վրայ չեն ընկել:

Փակախի միջի օդան քաղաքում վերացել է, սրա փոխարէն աղքատ դասակարգի տներում մի սենեակ է լինում, ուր սովորաբար նստում են տղամարդիկ, ճաշում, քնում: Կանայք զխաւորապէս տան-տնում են անցկացնում:


Քաղաքի տների ներքին յարկում անհրաժեշտօրէն լինում է նաև Յանոց, ուր դրուած է տան վառելիքը՝ փայտ, ածուխ, քաքոր, ցան, դաղ, ցախ, պտղտուր (ոչխարի կղկղանք) և այլն: Գիւղական տներում այս աչքը գրեթէ չկայ, որովհետև գիւղացիները իրենց միակ վառելիք քաքորը դարսում են իրենց բակերում բրբրաձև, մէջն էլ դատարկ տարածութիւն են թողնում, ուր ածում են ցան: Քաքորների այս բրբաձև կոյտերը տեղական բարբառով ամբրոց են կոչուում:

Հարուստների տներում լինում է նաև մաղազ՝ սրահի մէջ, գետնի տակ մի փոքրիկ քարաշէն նկուղ, ուր զխաւորապէս պահում են կարասներով գինիներ, տառիխ, պանիր և առհասարակ այնպիսի մթերքներ, որոնք սաստիկ շոգից կամ ցրտից փչանում են:

Սաղոդի այգիներ ունեցողների տներում լինում է նաև շիրախան՝ հնձան, մի ընդարձակ, քարաշէն աւաղանով և գետնում թաղուած կարասներով: Այստեղ են պատրաստում գինիները:

Վերին յարկը ընդհանրապէս բաղկանում է մի ընդարձակ նրբանցքից, որ երեսքայ է կոչուում և երկու սենեակներից: Երեսքայը միշտ շինուած է ներքին սրահի վրայ, որտեղից բարձրանում են փայտէ սանդուխտներով: Յաճախ երեսքայը իւր մի ծայրում քեօշ է ունենում, այսինքն փողոցի վրայ մի պատշգամբ, որ երեք պատուհաններով և երկու գեղեցիկ ողղասներով ծածկուած է լինում: Մի մետրաչափ ևս գուրս ցցուած լինելով, կողքերից ևս միմի պատուհան է ունենում, ծածկը եռանկիւնաձև է, գեղեցիկ քիւրով եզրափակուած (Տես նկար 1).

Այս քեօշները առաւելապէս դէպի հարաւ ուղղուած լինե-



Նկ. 1. Քեօեկ

որ գործածութիւնը դեռ ևս սկսուած չէ:

Տները կտուրները տափարակ են, ծածկելու համար նախ ձգում են գերաններ միմիանցից մօտ $\frac{3}{4}$ մետր հեռաւորութեամբ, ապա սրանց վրայ շարում մարդակներ, որ երբեմն տախտակներ, բայց յաճախ ծառի հաստ ճիւղեր են լինում, սրանց վրայ փռում են ճիւղ կամ եղեգի տապակներից հիւսուած խսիր, յետոյ մի կարգ էլ գազ են փռում, որպէս զի մկները չկարողանան այնտեղ բնակութիւն հաստատել, և ապա մի քանի մատ հաստութեան հասարակ կաւով ծածկելով ծեփում են յարդախառն կաւէ ցեխով:





Ամեն տարի ձեան հալճըլոցը դեռ չսկսուած կտուրների ձիւնը մաքրել են տալիս, ապա թէ ոչ տունը կը կաթի: Նաև կտուրների հողը փոքր ինչ ամրապնդելու համար դրանաձև քարէ ոլորսով կամ կլորսով պնդացնում են: Գարնանը գրեթէ բոլոր կտուրները ծածկւում են կանանչով:

Սենեակների յատակն ու առաստաղը տախտակով պատում են, յատակը սովորաբար առանց ներկելու: Թողնում, որովհետև ծածկում են գորգերով, իսկ առաստաղը բարակ, փայտէ ձողիկներով դանազան տեսակ նշխում են (տես 2—5 նկարները) երբեմն նաև ներկում:

Վերին յարկի սենեակները բաւական մեծ մեծ պատուհան-


լով, ամառը հով, իսկ ձմեռը արեւէմ են լինում, ուստի և տնեցիները մեծ մասամբ այստեղ են անցկացնում, այստեղ ճաշում ու ընթրում:

Այս երեսբացի երկու կողմում լինում են մի մեծ, և մի փոքր սենեակ, որոնցից մինը կարող է համարուել դահլիճ, միւսը ննջարան, թէպէտ և դահլիճն էլ գիշերները ծառայում է իրր ննջարան: Այս սենեակների պատերը, բացի այն, որ ներքին յարկի պատերի հետ պատած են լինում յարդախառն կաւով, ներքուստ սպիտակեցնում են դաճի շաղախով: Պատա-



Նկ. 2—5 Առաստաղի նշխեր

ներ ունենա, ապակիներով ծածկուած, մինչդեռ ներքին յարկի փոքրիկ պատուհանները կամ բոլորովին բաց են և կամ ձիթած թղթով պատած:




Նկ. 6. Բուխարիի

ները պատած են փայտէ ցանցով, որպէսզի կանայք չկարողանան դուրս նայել, և դաշթակղութեան առիթ տալ մուսուլման անցորդին:

Այգեօտանի տների անհրաժեշտ մասը կաղմում են նաև այգիները, որոնց միջին տարածութիւնն անցնում է 2500 ք. մետրից: Այգիները պատած են ցեխի պատով և սովորաբար բաղկանում են երկու մասից՝ ափնի և Թիւփ: Ափնի կոչւում է այն մասը, որ ծածկուած է պտղատու ծառերով, այն է՝ տանձենի, խնձո-

շին տների դահլիճի դռան հանդէպ պատի մէջ տեղում լինում է գեղեցիկ քանդակներով պատած մի բուխարի, (նկ. 6) իսկ դռան երկու կողմում մի-մի բոլորածե ներսանկուած, գեղեցիկ քանդակներով եզրափակուած, ուր սովորաբար դնում են գլղաղ (նարգիլէ): (նկ. 7)

Հարուստների և մանաւանդ թուրքերի տների երկրորդ յարկում, մեր նկարագրած սենեակներին կից, սակայն ոչ թէ փողոցի, այլ յիտէի, պարտիզի կողմում լինում են գրեթէ նոյնպիսի մի երեսը և երկու սենեակ, կանանց յատկացրած, հարեմ: Այսպիսի թըրքական տների լուսամուտ-



Նկ. 7. Ներսանկուածներ

րենի, ծիրանի, սալորենի, դեղձի, ընկուզենի, թթենի, կեռասնի և այլն, իսկ Թիւփ կոչւում է խաղողի որթերով պատած մասը:


Շատ տների այգիներում կամ բակերում լինում են ջրհորներ, նաև աղբիւրներ, որ հանում են քանքան խփելով: Այս արհեստը Վանում շատ յառաջացած է, և ըստ երևոյթին շատ հին, նոյն իսկ խալդական է, որովհետև կան չափազանց հին քանքաններ:

Կահաւորութիւն.— Մի կէս դար առաջ սնան կահաւորութիւնը միայն փողածը է եղել, այսինքն բարձ, ներքնակ, գորգ, փսիաթ, ընդհանրապէս փռուող բաներ, փայտէ կարասիք չեն եղել. այժմ այս սարքը մնացել է միայն աղքատ դասակարգի մէջ, իսկ հարուստ դասակարգը փայտէ կահ-կարասիներ է սկսել գործածել: Միջին դասակարգի մօտ երկու սարքն էլ միախառնուած գոյութիւն ունին:

Փռածքը հետևեալ կերպով է լինում. յատակին, որ ծածկուած չէ լինում տախտակով, քցում են խըսի. սրտ վրայ փրսիաթ կամ գորգ, պատերին կից փռում են ներքնակներ, որոնք կամ այնպէս բաց են մնում և կամ մի ուրիշ, նեղ և երկար գորգով ծածկուած: Ներքնակների կողքից, պատերին յենած շարում են երկար թիկնաբարձեր, որոնք յաճախ խոտով են լցուած լինում: Բարձերի վրայ էլ մի երկար, սպիտակ կտոր են քաշում, որ ծածկում է միայն կէսը: Այս ներքնակների վրայ են նստում ծալապատիկ կամ չորած: Մի փոքրիկ, կլոր և առանց թիկնաբարձի աթոռակ էլ դրուած է լինում մի անկիւնում: Սա գործ են անում գլխաւորապէս ճաշի ժամանակ, դնելով նրա վրայ մի մեծ, պղնձէ սկուտեղ, (սինի), որ փոխարինում է ճաշի սեղանին:

Այժմեան կահաւորութիւնը.— Սենեակի տախտակով պատած յատակը ծածկուած է գորգերով. գլխաւոր պատի մէջ տեղում դրում է մի փայտէ, վորտեքեան բաղկաթու, երկու կողքին կիսաբոլոր փայտէ թախթեր, սաղր, որոնք ծածկուած են յատուկ պատրաստուած ներքնակներով, և պատած գունաւոր կամ սպիտակ կտորով, որ ծոփերով եզրափակուած իջնում է մինչև յատակը, և ամբողջովին ծածկում փայտէ թախթը: Այս ներքնակների վրայ, պատերին կից, շարում են երկար թիկնաբարձեր: Թախթերի կիսաբոլոր շրջանակի մէջ, բաղկաթուի առջև դրում է մի կլոր սեղան: Միւս պատերին կից ձգում են փայտէ երկար բաղմոցներ՝ կանապէ. մի քանի աթոռներ, փոքրիկ, կլոր սեղաններ դրւում են այս ու այն անկիւններում:

Ննջարանում կայ պատի մէջ կամ պատին կից շինուած



Նկ. 8. Կաւէ մոմակալ

իսկ այժմ քաղաքում և մասամբ գիւղերում նաեւ են վառում, միայն չտփսզանց խնայողութեամբ, որովհետեւ բաւական թանգ է, ֆունտը 10 կոպէկ: Սա Բագուի նաւթն է, որ ըստացւում է Տրապիզոնից: Քաղաքի աղքատ դասակարգը և գիւղացիները դեռ շարունակում են ձէթ և կամ սև նաւթ գործածել կաւէ կամ թիթեղից շինուած տափակ, ճրագներով: Գործածական լուցկին իտալական մոմէ լուցկիներն են, որ թանգ արժենալով, չեն կարողացել վերջնականապէս դուրս քշել գործածութիւնից նախապատմական կայծքարն ու կայծհանը:

Կայ նաև տեղական ճարպի մոմ, որ գլխաւորապէս աղքատ

ծալքատեղ, սրահարան, երկու կամ մի փեղկով, ուր ցերեկը դարսում են անկողինները: Մահճակալներ չկան, ընում են դիտին կամ կանապէների վրայ: Զգեստեղէնը պահում են սընդուկների մէջ, որոնցից նշանաւոր է սալվի սնդուկը՝ շինուած սալվի փայտից, որ ախորժելի հոտ ունի և կարծր լինելով չի թոյլ տալիս իւր մէջ ցեցերին բռն դնելու:

Յատուկ լուացարաններ ևս չկան. մի պղնձէ կոնք, և մի սափոր տան փոքրերի կամ հարսի ձեռքով շրջան են կատարում ամեն առաւօտ և ճաշի ժամանակ: Կոնքը ինքնատիպ է. լայն շրջանակ ունեցող մի կարճ գլանաձև ամանի վերայ դրուած է մի ծակ ծակ խուփ, որ բրգաձև բարձրանալով վերջանում է մի կլոր փոսիկով: Այս փոսիկի մէջ դնում են սապոն, իսկ լուացուելիս ջուրը ծակերի միջից թափւում է գլանաձև ամանի մէջ: Սափորները գլանաձև փորով, երկար վզով, գեղեցիկ կանթով և կիւ խողովակով պղնձէ ամաններ են, յաճախ նշխերով պատած:


Հրուսաւորութիւն.—Մի կէս դար առաջ ոչ միայն գիւղերում, այլև քաղաքում լուսաւորութեան համար միայն կթաւտի ձէթ էին գործածում,

քաղաքացիներն են գործածում: Ուշագրաւ է մի հին, կաւէ մոմակալ, որ գտնուած է Վանում, սակայն սա շատ հաւանական է, որ գործածուած է կամ եկեղեցում, և կամ հարստի տանը: (Նկ. 8)

Ուշագրաւ է նաև մի հին ձիթեճրագ, որ նոյնպէս գտնուած է Վանում, և որի նմանը կայ նաև Նոր-Բայազէտում, հաւանաբար էն Հին-Բայազէտից բերուած: Վերջինս այժմ գտնւում է Հայոց Ազգազրական ընկերութեան թանգարանում: Սա երկաթէ եռոտանի, մի մետրաչափ ձող է, որի ծայրին ամրացրած է երկու ձիթաճրագ, իւրաքանչիւրը չորս պատրոյկով վառուող, այսպիսի երկու երեք ճրագներ էլ միացած են ձողի կողքերին, որոնց տակ, իբր զարդ՝ երկաթէ թռչնակներ են շինուած: (Նկ. 9)

Վառելիք.—Գիւղերում իբր վառելիք գործ են ածում քաքոր, ցան, պլաւտուր, ցախ և գազ: Քաքորը պատրաստում են այսպէս.

անասունների աղբը լցնում են տան առջև մօտաւորապէս 10 սանտիմետր հաստութեամբ և շարունակ վերայից ման դալով բաւական պնդացնում են և յետոյ բահով քառանկիւնի ձևով կտրատում, 25—30 սանտիմետր մեծութեան և մի քիչ էլ արևի տակ չորացնելուց յետո՝ բրգաձև շարում: Եթէ թրիքը քիչ բանակութեամբ է լինում, ձեռքով փոքր ինչ շաղախում են, 15—20 սանտիմետր տրամագծով բոլորակներ. շինում և խփում այս ուայն պատին, որ արևի ջերմութեամբ չորանայ: Այսպիսի քաքոր—



Նկ. 9. Ձիթեճրագ

ները ցան են կոչում: Շատ զգուշի է տեսել, թե ինչպես խեղճ կանայք առաւօտները վաղ ձեռքերով հաւաքում են անասունների աղբը և եթէ քիչ է լինում՝ ցան պատրաստում, իսկ եթէ փոքր ինչ աւելի՝ բոբիկ ոտներով կոխկրտում են, և ապա քառակուսի, փայտէ կաղապարի մէջ ածելով, աղիւսների պէս շարում են տան առջև, որ սոսկալի գարշահոտութիւն արձակելով չորանայ: Գիւղերում 100 հատ քաքորը արժէ 7—10 դ. (50 կ.—80 կ.): Գիւղերում փայտ բոլորովին չեն դորձածում, այլ միայն ցախ՝ չորացած ճիւղեր, այն էլ միայն այն նպատակով, որ սրանց բոցով քաքորը կպչի: Սակայն այս ցախը ևս այնքան հեշտութեամբ չի վառում, որովհետև յաճախ թաց է լինում, ուստի և՛ դորձ են ածում զաղ կոչուած փուշը (Spina Hirci): Ընդհանրապէս գիւղերում, ուր նաւթի գործածութիւնը չափազանց խնայողութեամբ է կատարւում, կրակ անելը բաւական դժուար է, ուստի և գրեթէ միշտ թոնրի մէջ կրակ են պահում, որպէս զի նրանից անմիջապէս կպցնեն: Այս պատճառով, վառած թոնիրը հանգչելիս մի կիսավառ քաքոր մոխրով ծածկում են, որը մեծ դանդաղութեամբ վառուելով գրեթէ մի ամբողջ օր վառ է մնում: Թոնիրը կրկին վառելիս երկաթէ մի երկար ձողով, որ անթրոց է կոչւում, բաց են անում այս մոխրաթաղ կրակը, վերան մի երկու ցախ և քաքորներ դնում ու այսպիսով հեշտութեամբ վառում: Այս մոխրաթաղ քաքորը անթնդ է կոչւում:

Ածուխ գիւղերում գրեթէ բոլորովին չի գտնւում:

Գիւղերում բնակարանը տաքացնելու նպատակով չեն վառում, նրանք ապաստանում են ախոռներում, կենդանիների ջերմութեամբ տաքանալու և կամ, երբ հաց թխելու, կամ կերակուր եփելու նպատակով վառուած թոնիրը հանգչում է՝ քիւրսի են դնում, այսինքն թոնրի բերնին դնում են մի քիւրսի, (քառակուսի, չորս ոտնանի ցածր սեղան) վերան ձգում տնփիկ (ցնցոտի) և բրդի մի լէճֆ (վերմակ): Տաքանալ ցանկացողները կախ են անում ոտները թոնրի մէջ և լէճֆով ծածկում իրենց կողքերը: Ոտները տաքանում են, իսկ մէջքը, մանաւանդ երբ դէպի դուռն է ուղղուած լինում, մրսում է:

Հերթիկից, որ միշտ բաց է լինում, ցուրտ, մաքուր օդը շարունակ ներս է թափանցում և փոքրիկ տարածութեան մէջ մեծ բազմութեամբ հաւաքուած մարդկանց լիւրի թթուածին մատակարարում:

Վանում վառում են կամ քաքոր և կամ փայտ ու ծառի արմատներ: Վառարանների մեծագոյն մասը թիթեղեայ հասարակ վառարաններ են: Կան նաև մանկալներ:

Դռները մեծ մասամբ մի փեղկանի են, իսկ վերջին ժամանակներս շինուածներն երկփեղկանի: Դարպասներն ամրակուռ, հաստ, միափեղկ և երկփեղկ դռներ են, վերևի մասում քսան սանտիմետր բացուածքով, որ պատած է երկաթէ վանդակով. սա ծառայում է թէ՛ որպէս լուսամուտ և թէ՛, կարևոր դէպքում, իբր գիտարան: Դարպասի վրայ կախուած է երկաթէ ձկիկ, սովորաբար մի երկաթէ մուրճ, որ յանկում է մի, նոյնպէս երկաթէ, սալի վրայ: Երբ ուզում են իմացնել դուռը բացանելու՝ բարձրացնում են մուրճը և խփում սալին.—բարձր, անախորժ թխկոցներ են բարձրանում: Երբեմն այս ձկիկները ներկայացնում են մարդկային ձեռք՝ մի գնդակ բռնած:

Հին տների դռների յետև կան սողնակ.—10 սանտիմետր հաստութեան քառանկիւնի մօտ 1 և կէս մետր երկարութեան մի փայտ է, որ անց է կացրած դրան կողքի մի պատի մէջ: Երբ կամենում են դուռը փակել՝ այս սողնակը քաշում են և ծայրը անցկացնում միւս պատում յատուկ պատրաստուած ծակի մէջ, այսպիսով այս սողնակը առիշեղ պատելով դուռը՝ թոյլ չի տալիս բացուելու: Այժմ սրա փոխարէն երկաթէ չըխկ, փականք, են շինում, որի մի ծայրն ամրացրած է դրանդիլի վրայ, և կախ է ընկած. երբ ուզում են փակել՝ միւս ծայրը, որ կարթածն է կամ ծակ ունի և վերան մի կարթ, ձգում են միւս կողմի դրանդիլի օղակի մէջ:

ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Մեր ուսումնասիրութեան վայրում, մանաւանդ Վան քաղաքում և սրա շրջակայ գիւղերում, տեղական զգեստները կիսով չափ տեղի են տուել եւրոպականին և ներկայացնում են մի անճաշակ խառնուրդ: Բուռն տեղական տարազը դեռ պահպանում է իւր գոյութիւնը կենտրոնից հեռու գիւղերում, ինչպէս օրինակ Ալիւրում, Խաւենցում, Էրէրինում և այլն:

Թէ քաղաքացու և թէ, մանաւանդ, գիւղացու սովորական, ամենօրեայ հանդերձը չափազանց փոքր բացառութեամբ, ցնցոտիներ են, որ ոչ թէ ուղղակի աղքատութեան հետևանք է, այլ սոսկալի ռեֆիմի ազդեցութեան և սովորութեան, քաղաքակրթութեան ստորութեան: Երեխաներն արդէն կիսամերկ են, կանայք բոբիկ և պատառուտուած, տղամարդիկ ցնցոտիներով ծածկուած, և այսպէս են ոչ միայն աղքատները, այլև հարուստները: Խեղճ ժողովուրդ՝ դարերի ընթացքում արգիլել են նրան լաւ հագնուել, դարերի ընթացքում լաւ հագնողին աւելի լաւ են կե-

3611-51

դիքել և կողոպտել, ուստի և նա ցնցոտիների մէջ է որոնել և որոնում իւր պաշտպանութիւնը հարկահանի և կողոպտողների բռնութիւնների դէմ:

Գիւղացիների զգեստներ. Ա. Տղամարդկանց. — Վասպուրականի տղամարդկանց թէ հայկական և թէ քրդական զգեստներն ընդհանուր առմամբ միմեանց շատ նման են, միևնոյն տարազի են, և միայն մանրամասնութիւնների մէջ են տարբերւում. այսպէս քրդական զգեստի, քեազախիկի վրայ փայլում է կլապիտոնի ոսկեգոյն շերտերը, մինչդեռ հայկականի վրայ ասեղնագործ գեղեցիկ նշխիր: Շալուարը նոյնպէս, հայերինը զարդարուած է ասեղնագործ նշխերով, իսկ քրդերինը՝ ոչ: Քրդերը իշիկի վրայից հագնում են ֆստան, իսկ հայերը ոչ: Ֆստանը իշիկի ձև ունի, միայն փոքր ինչ երկար է, և յաճախ իջնում է շալուարի վրայ: Քրդերի քոլոզը աւելի բարձր է լինում և վերան 3—4 գոյնգոյն եազմափաթաթած, մինչդեռ հայերի քոլոզը ցածր է լինում և միայն մի եազմա փաթաթած:

Հայ գիւղացիները նախ հագնում են շապիկ, երկար թևերով և մինչև ծնկները հասնող փեշերով: Կարում են կտաւից: Սրա կուրծքը բացւում է ոչ թէ մէջ տեղից, այլ աջ կողմից և միայն մի կոճակով կոճկւում: Ամբողջ կուրծքը, մօտ 35 սանտիմետր լայնութեան և նոյնքան երկարութեան ծածկւում է գունաւոր թելերով ասեղնագործած կտորով: Երեք սանտիմետր լայնութեան մի ուրիշ, միևնոյն գոյնների ասեղնագործ էլ պատում է օձիքը: Թեւերի ծայրերն էլ պատած են վեց սանտիմետր լայնութեան ասեղնագործով, որոնց ծայրերին միացած են նոյն լայնութեան, միայն վաթսուս սանտիմետր երկարութեան ասեղնագործ ջալահիկով, որ փաթաթում են շապիկի թևի ծայրերին, որով և արգիւլում են թևերը կախ ընկնելու կամ առաջ գալու: Յաճախ այս թևերի ասեղնագործների երկու կողմը միմեանցից մի-մի սանտիմետր հեռաւորութեամբ կարում են կապոյտ ուլունքներ: Շապիկի շուրջն էլ կարմիր, բարակ դայթան և փոքր ինչ վերև կարմիր կըտորէ ժապաւէն են կարում: Նաև աջ ու ձախ կողքերի փեշերը 14 սանտիմետր երկարութեան՝ ճեղքելով՝ եզրերը և շուրջը պատում են դայթանով և կարմիր կտորի ժապաւէններով. այս ճեղքերը տեղական բարբառով կոչւում են չաք:

Թումպան. Կարում են տեղական կտաւից, հագնում են ոտներին և շապիկի փեշերը դնում սրա մէջ: Փողկերը շատ լայն են, վերին մասի ծայրերը յետ են դարձուած և սրա միջով անցկացրած ամուր թելից գործած մի, 1½—2 սանտիմետր լայնութեան ժապաւէն, որ խոնջան է կոչւում. սրա ծայրերը փնջիկնե-




Paysans du gouv. de Van.

Հայոց-Ջարի գիւղացիներ.

րով են վերջանում: Այս խոնջանով կապում են թումպանը մէջքին: Թումպանը առջևից բացուածք չունի, այլ աջ կողմում, սովորական գրպանի տեղում: Թումպանի լայն փողկերը ուղիղ կերպով քաշ են ընկնում, որովհետև ամառները սովորաբար սրա վրայից այլևս շալուար չեն հագնում: Թէև սա շատ հով է պահում, սակայն փոշին էլ առատութեամբ ներս է թափանցում: Երբ սրա վրայից շալուար էլ են հագնում, որ սովորաբար տեղի է ունենում ձմեռը, սրա փողկերի ծայրերը դնում են գուլպայի մէջ և վերջինիս թելով կապում:

Ումանը էլ ոտներին սախկ են հագնում. սա 35 սանտիմետր երկարութեան և հետզհետէ լայնացող, գլանաձև, բրդէ գործուածք է, որի վերի ծայրին թելէ կապ (կապան) կայ: Թումպանի, յաճախ նաև շալուարի, փողկերը դնում են այս սախկերի վերին ծայրերի մէջ և կապանով կապում:

Շալուար.—կարում են շալից, հագնում են ոտներին, յաճախ թումպանի վրայ, որին և միանգամայն նման է իւր ձևով: Սրա փողկերը ևս չափազանց լայն են, 50—70 սանտիմետր, առջևում բացուածք չունի և խոնջանով է կապւում: Ձախ կողքին կայ մի փոքրիկ գրպան, իսկ աջ կողքին գրպանաձև բացուածք, որից օգտւում են ջուր թափելիս:




Նկ. 10.
Շալուար

Շալուարի փողկերի աջ ու ձախ կողմերը, նաև ներքին ծայրերը պատած են 12—17 սանտիմետր լայնութեան գունաւոր ձեռագործով *):

Շալուարի խոնջանը գունաւոր թելերից է գործած, 2 սանտիմետր լայնութեան և ծայրերին ունի մի քանի փնջիկներ, կապոյտ ուլունքներով զարդարուած:

Իշիկ **).—Հագնում են շապկի վրայ, կարում են մանուսա կոշուած բամբակէ կտորից: Հասնում է մինչև մէջքը, ունի երկար թևեր, կուրծքը յայթափ կոճակներով կոճկւում է, ումանցն էլ վերևում եռանկիւնաձև բացուածք ունի, որպէսզի շապկի կրծքի ձեռագործը ամբողջովին երևայ:



Նկ. 11.
Իշիկ


Մէջաց շալ.—2—3 մետր երկարութեան

*) Ասպիսի ձեռագործ նկատւում է նաև Աղթամարի եկեղեցու Գազիկ Արծրունու բարձրաքանդակի շալուարի վրայ:

**) Այժմ սրա փոխարէն շատերն եւրոպական ժիլետ են հագնում:



մի բրգէ գունաւոր կամ սպիտակ կտոր է, որ փաթթուած են մէջքին, շալուարի և իշիկի վրայով: Այս շալը յաճախ տեղական կամ Շատախի գործ է լինում:



Նկ. 12

Քեազախիկ

Քեազախիկ. — Հագնում են իշիկի վրայ. կարում են յատկապէս այծի չուռից (քրդից) գործած մազոտ կտորից: Իջնում է մինչև գոտկատեղին, ծածկում է ամբողջ թիկունքը և կողերը, ամբողջ լանջը մնում է բաց: Թևերը շատ կարճ են, հասնում են մինչև արմունկը, և ընթի տակից (թևի տակ) կախում են մի մի փնջիկ: Կրծքի եզրերը պատած են կանաչագոյն ժապաւենով և մի սանտիմետր լայնութեան կլապիտոնով:

Ոտներին հագնում են թաթ, (գուլպա), որ գրեթէ միշտ գունաւոր է լինում և զանազան նշխերով պատած: Սովորաբար թաթերը կարճ վիզ են ունենում, 15—20 սանտիմետր, և կապում են նոյնպէս գործուած կէս մետրաչափ թելով, որ վերջանում է փնջերով:

Թաթի վրայից հագնում են չարուխ (տրեխ), որ ամեն մի գիւղացի ինքը կարող է կարել, և կամ սոլ, որ կարում են քաղաքում սովորաբար: Չարուխը սովորական տրեխն է, գոմշի կամ տաւարի կաշուց կարած, իսկ սոլը նման է եւրոպական տուֆուին, երեսը այծի, ոչխարի կաշուց է լինում, իսկ ներքանը գոմշու կաշուց: Սրա մի տեսակը, որի յետևի, կրնկի, մասը նեղ շերտով մօտ 5 սանտիմետրաչափ բարձրանում է, կոչւում է պոչով սոլ: Հագնելիս այս պոչից բռնում, քաշում են:

Գլխին ծածկում են արախչին, քոլոզ, և կամ, շատ սակաւ, ֆէս:

Արախչինը գործում են գիւղացի կանայք բրգէ թելից և կամ կարում կտորից ու ծածկում ասեղնագործով: Արախչինը գլանաձև է, 10—15 սանտիմետր բարձրութեան:


Քոլոզը պատրաստում են գիւղացի տղամարդիկ թաղիքից. սա կտրուած կոնուսի ձև ունի, 15—20 սանտիմետր բարձրութեան. լինում է սովորաբար սպիտակ: Քոլոզի շուրջը անպայման կապում են մետաքսեայ փուշի կամ եազմա: Փուշին 5 սանտիմետր լայնութեան ծալում են և փաթթում քոլոզի ստորին մասի վրայ, ճակատին մօտ, աշխատելով նրա ծոպերը քաշ քցել ճակատի և քունքերի վրայ: Յաճախ այս ծոպերի վրայ անց են կացրած լինում կապոյտ ուլունքներ, որոնք պահպանելու են չար աչ-

քերի աղբեցութիւնից: Եազմաները սովորաբար ոլորում են և ախպէս փաթթում:

Կանանց հանդերձ. — Շապիկ. — Կարում են փաթուխից կամ շիւայից. հասնում է մինչև ոտները և զբոսնի տակից փոքր ինչ երեւում է: Թևերը երկար են. կուրծքը բացւում է մէջտեղից մինչև գոտկատեղին և կոճկում մի կոճկով բկի տակ: Շապիկի քղանցքների շուրջը կարում է կանաչ ու կարմիր դաթման, իսկ փոքր ինչ բարձր՝ 15 սանտիմետր լայնութեան ծաղկաւոր երիզ, որը և զբոսնի տակից երեւում է:


Ատաշոր կամ փոխան. Հագնում են ոտներին, կարում են կարմիր շիւայից, նոյն գոյնի կտաւից և կամ կանաւուրից: Ո՛չ կողքերին և ոչ առջևը բացուածք չունի, և խոնջանով կապւում է կողքից: Փողկերը շատ լայն են, ծայրերը բուլգմայով նեղանում են և, իջնում մինչև ոտների երեսը, գուլպայի վրայ և գրսից, զբոսնի տակից, մօտ 10—15 սանտիմետրաչափ երեւում են:

Զրուն. — Հագնում են շապիկի վրայ. կարում են մանուսայից, չիթից և մետաքսէ կտորներից: Փարաշի ձև ունի, միայն քղանցք-



Նկ. 15. Զրուն

ները աջ և ձախ կողմում մինչև մէջքը ճեղքուած է, և եզրափակուած կարմիր ու կանաչ դաթմանով: Այս ճեղքը կոչւում է չաք: Զրունը իջնում է մինչև ոտները, և շապիկից մօտ 6 սանտիմետր բարձր է մնում: Թևերը երկար են և հասնում են մինչև դաստակը: Թևի ծայրը փոքրիկ ճեղքուած, չաք, ունի, կարմիր ու կանաչ դաթմանով եզրափակուած, երբեմն էլ արծաթէ կոճակներով զարդարուած: Կուրծքը չի կոճկում, այլ քղանցքները միմեանց վրայ են բերւում և կրծոսկրի մօտ փոքր ինչ բաց թողնում: Չաքերի մօտ լինում է մի կամ երկու զրպան: Սովորաբար երկու, երեք, իսկ տօներին նոյն իսկ չորս, հինգ զրուն միմեանց վրայ են հագնում, այնպէս որ մինը միւսից մօտ 5 սանտիմետր բարձր կանգնի, որպէս զի նկատելի լինի: Այս դէպքում զբոսնները տարբեր գոյնի են անում: Սովորական և սիրուած գոյնը կարմիրն է, նոյն գոյնի աստառով:



Նկ. 14.


Կոճիկ կամ կոլոտիկ

Կոճիկ կամ Կոլոտիկ. — Հագնում են զբոսնի, կամ զբոսնների վրայ: Կարում են զոնաւոր կտաւից կամ չիթից: Իջնում է մինչև մէջքը և կուրծքը ամբողջովին բաց է: Աջ և ձախ կողքերից կան մի մի կարճ բացուածք, չաք: Ունի երկար թևեր: Կարմիր ու կանաչ դաթմա-

նով ամբողջովին եզրափակուած է: Կուրծքը չի կոճկուում:

Մէջկապ.—Լինում է շալից 2—4 մետր երկարութեան. փաթաթում են մէջքին, կոճիկի վրայից:

Մեզար կամ զոգնոց.—Կապում են կոճիկի և մէջկապի վրայից: Կարում են գունաւոր չթից, կտաւի աստառով: Մեզարի վերին մասը կապողի կրծքի լայնութեան է լինում և նրա վզի համեմատ էլ փորուածք է ունենում, մի կոճկով, իսկ ներքին մասը հետզհետէ լայնանում է: Թևերի տակ կապան է լինում, որ մէջքի վրայ արծաթէ կոճկով կոճկուում է: Մեզարը զբուսններից հինգ սանտիմետր բարձր է կանգնում, որպէսզի չխանգարէ նրանց երեւալուն:



Նկ. 15. Մեզար
կամ զոգնոց

Դալիմա.—Նորահարսերը և հարուստ, չափահաս կանայք կոճիկ չեն հագնում, այլ դալիմա ուղղակի զբուսնի կամ զբուսնների վրայ, նախապէս կապելով սրանց վրայ մէջկապը: Դալիման կարում են կարմիր մահուդից. միանգամայն նման է բահանների ֆարաջային, միայն կողքերին, գրպանների տեղերում, բացուածք ունի, որ կարելի լինի ձեռքը տանել զբուսնի գրպանը: Այս գրպանային բացուածքի շուրջը և սրանից բարձր մինչև թևի տակը կարուած է կլապիտոն: Նոյնպիսի երիզ է կարուած նաև քղանցքների և թևերի եզրերին: Հարուստ կանանց դալիմայի կուրծքը ևս ծածկուած է կլապիտոնով զարդարուած ասեղնագործով: Դալիման ևս իջնում է մինչև ոտները, միայն վերջին զբուսնից մի հինգ սանտիմետր բարձր է մնում:



Նկ. 16.
Դալիմա

Հարուստ կանայք դալիմայի վրայ, բերն մօտիկ, արծաթէ գեղեցիկ ճարմանդ են կարում: (Տես նկ. 18, 4)

Ազանկիք.—Հագնում են նախ նիշուն գուլպա՝ թաթ, և թաթի թելով վիզը կապում, և ապա կոնտուրա կամ սոլ, որ եւրոպական տուֆուլու նման է:

Վան քաղաքում այժմ չքաւոր դասակարգը, բայց մի կէս դար առաջ գրեթէ բոլորը, մեր նկարագրած տարազով էին հագնուում, այժմ եւրոպական զգեստը հետզհետէ ընդհանրանում է: Միայն քաղաքացի կանայք փողոց դուրս գալիս ստիպուած են եղել ամբողջովին ծածկուել վիրու (վերնի) շապկով և մըխմելով, իսկ աղջիկները մէտակով, որ մինչև այժմ էլ դեռ ևս գործածուելիք ունի: Գիւղերում այս ծածկոցների կարիքը չի զգացուել, որովհետև գեղջկուհին շարունակ դուրսն է, գործով զբա-

ղուած և մեծ մասամբ միայն հայերով շրջապատուած:

Վիրու շապկը կարում են կարմիր շիլայից, որ բամբակէ կտոր է, Բաղէշում գործուած: Սամիանգամայն սովորական շապկի և կամ տիրացուների եկեղեցական շապկի ձև ունի, և իջնում է մինչև ոտքերը: Զուրկ մի որևէ ասեղնագործից և կամ զարդարանքից, օձիքի շուրջը միայն կաթան է կարուած և բերն մօտ մի կայթնի կոճակ ունի:

Այս շապկի վրայից ձգում են մըխմել. կարում է սպիտակ կտորից, որ ընտա է կոչուում և կամ ամենանուրբ բամբակէ գործուածքից: Սա կիսաբոլոր է, շուրջառի պէս, առանց աստառի. ձգում են գլխին և ծայրերը առջևից քաշ ձգում, այնպէս որ ծածկում է ամբողջ մարմինը և նոյն իսկ գլուխը մինչև ոտները: Մըխմելի ծայրերը միացնելով բռնում են աջ ձեռքով կրծքի մօտ, իսկ ձախով քթի մօտ, այնպէս որ միայն աչքերն են բաց մնում:

Աղջիկները փողոց դուրս գալիս ձգում են իրենց վրայ մէտակ, մօտ $1\frac{1}{2}$ մետր մեծութեան քառակուսի մետաքսեայ գոյն-զգոյն կտոր, որի մի կողմի երկու ծայրը իրար հետ կարով կըպցրած է: Մէտակը ձգում են գլխին այնպէս, որ միացած ծայրերը մէջքի վրայ ընկնեն, իսկ միւս երկու ծայրերը ձգում են առջևից ու միացնելով ձախ ձեռքով կրծքի, աջով քթի մօտ բռնում, այնպէս որ միայն աչքերն են երևում:

Գլխի յարդարանք.—Նախ սանրում են մազերը և 15—50 մանր ծամ կամ պոչիկ հիւսում. ապա սրանց վրայ, ուսերի բարձրութիւնից արծաթէ ծամքաղ անցկացնում: Սա արծաթէ երկտակ շղթայ է, 30—35 սանտիմետր երկարութեան, որոնց վրայից կախուած են արծաթէ գնդակիկներ, իսկ մէջտեղից մի մեծ կապոյտ ուլունք, որ աչից ուլնիկ է կոչուում: Առաջինները կախուած են իբր զարդարանք, իսկ ուլունքը իբր յուռութ չար աչքերի ազդեցութեան դէմ: Ծամքաղի երկու շղթաները խաչաձև անց են կացնում բոլոր ծամերի վրայից և իրենց ծայրերի կարթերով ամրացնում ուսերի մօտ: Ծամերը ծայրերին կապում են երեքական սև շերտ, մօտ կէս մետր երկարութեան:

Աղջիկները գլխներին ծածկում են կարմիր ֆէս՝ սև, երկար պոխով, այսինքն մետաքսի սև թելերից մօտ 50 ս. երկարութեան փնջիկ (փիւսկիւլ): Ֆէսի վրայ կապում են արծաթէ զարդեր.—Ճակտի վրայով ձգում են զնծիլ՝ արծաթէ շղթայ, որից կախ են ընկած արծաթէ զրամբեր՝ 20—40 փարաներ: Սրանից բարձր կապում են Թիթրալա.—զարձեալ արծաթէ շղթայ, որից կախուած են նշաձև արծաթէ զարդեր և կարմիր բուստեր: Սրանից բարձր էլ կրկին զնծիլ են ամրացնում, այսինքն նոյնպիսի

արծաթէ շղթայ՝ վրայից արծաթէ դրամներ կախուած:

Ոմանք, ի հարկէ հարուստներից, առաջին զնճիլի ներքև, ֆէսի եզրերին, միայն ճակատի վրայ արծաթէ դրամներ են կախում:

Քուլնքերի մօտ կախում են երեսնոց. սա արծաթէ մի սրտիկ է, մէջտեղում մի կարմիր յակինդ նստեցրած. սրանից կախուած են երկու ուրիշ, նոյնանման սրտիկներ՝ կապոյտ փերուզաներով, իսկ այս վերջիններիցս կախուած են վեց հատ շղթաներ՝ միմեանցից փոքր ինչ երկար, ծայրերին մի մի արծաթէ շրջանակ՝ իսկ մէջ տեղերում մանիշակագոյն, հասարակ ուլունքներ կամ թանգագին քարեր: Այս վեց շղթաներից առաջին երկարութիւնն է 2, իսկ վերջինինը՝ հինգ սանտիմետր: (Տես նկ. 16, 2)

Ապա շաւան անց են կացնում բլի տակով և ամրացնում քուլնքերի մօտ: Շաւան արծաթէ մի շղթայ է, որից կախուած են արծաթէ թելից շինուած սրտաձև զարդեր մի սանտիմետր երկարութեան և բուստեր: Շղթայի երկու ծայրում կան մի մի արծաթէ գնդասեղ՝ գլխներին մի մի մեծ, կարմիր բուստ ամրացրած: Շղթայի մէջ տեղում կայ ալծաթէ նոյնպէս սրտաձև ճարմանդը: Գնտասեղները ամրացնում են քուլնքերին, իսկ ճարմանդը բլի տակ: (Տես նկ. 18, 3)

Կրծքին ձգում են զեարդանլըղ (կրծկալ). երկու շարք կապոյտ և կարմիր ուլունքների մէջ ամրացրուած են ճաճանչաձև նշխրով զարդարուած ականակուռ արծաթէ 12 հատ շրջանակ, քարաստա, ներքևի ուլունքների շարքից կախուած են լինում նոյնպէս արծաթէ 12 հատ շրջանակ, թուփ, որոնց մէջ ևս ամրացած են մի մի կարմիր բուլջ: Սրանցից ներքև ձգում են երկու արծաթէ շղթաներ, համակենտրոն, միայն միմեանցից մի քանի սանտիմետր հեռու: Սրանցից կախուած են արծաթէ դրամներ: Գեարդանլըղի ծայրերին կան ճարմանդներ, որով ամրացնում են կրծքին:

Ականջներից կախում են արծաթէ գինտեր:


Թևերին անց են կացնում կամ արծաթէ ապարանջան և կամ ուլունքներից գործուած կեօլպաղի (բաղպան).— արծաթէ ականա-

կուռ ճարմանդ զանազան գոյնի և տեսակի 78 շարք ուլունքներով:

Կանանց գլխի յարդարանքը բաւական տարբերում է օրիորդների յարդարանքից: Կանայք նոյնպէս մագիբը հիւսում 15-50 ուղիների յարդարանքից: Կանայք նոյնպէս մագիբը հիւսում 15-50 ծամ են շինում, սակայն ծամքաղ չեն անցկացնում: Ի հարկէ նորահարսները բացառութիւն են կազմում:

Մազերի վրայ ծածկում են գլխակ.— չթից կարուած, գլանաձև, բայց շատ բարձր մի գլխարկ: Սրա վրայից ձգում են տակի


փոխելի՝ եռանկիւնաձև մի չթիկտոր, մօտ $1\frac{1}{2}$ մետր մեծութեան, որի երկու ծայրերից կարուած են լինում շորից մի մի կապ, կապան, չափաւորով: Այս փոխիկը ձգում են գագաթի վրայից և կապանները բլի տակով անցկացնում և հակառակ կողմերից բերելով՝ գագաթի վրայ ճարմանդում: Սրա վրայից կապում են ծակտի կապ.— սա քառանկիւնի 10×20 ս. մեծութեան մի կարմիր կտոր է, աստառով, որի մի եզրին, երկարութեամբ շարուած են կապոյտ ուլունքներ: Չորս ծայրերին էլ ամրացրուած են շորէ կապաններ: Այս ծակտի կապը կապում են գլխին այնպէս, որ ուլունքների շարքը ընկնի ճակտի վրայ: Կապանները հանգուտում են ծոճրակի մօտ:



Նկ. 17. Մ ա խ չ ա

Ծակտի կապի վրայ ամրացնում են մախան: Սա լինում է մի քանի տեսակ, որոնցից ես կը նկարագրեմ միայն երկուսը, որ շատ տարածուած են: Առաջին տեսակը (նկ. 17) բաղկացած է 7 արծաթէ տախտակիկներից, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է երեք սանտիմետր մեծութեան քառակուսի, վերին մասը թագաձև բարձրացած մօտ $1\frac{1}{2}$ սանտիմետր և աստղով պսակուած: Քառակուսի մասի մէջտեղում բարձրանում է մի ուղմաձև և շուրջը՝ չորս նշաձև կերտուածներ, որոնց կենտրոններում բաձև և շուրջը՝ չորս նշաձև կերտուածներ, որոնց կենտրոններում է մի ուղմաձև և շուրջը՝ չորս նշաձև կապոյտ յակինթ: Թագաձև մասի վրայ բարձրանում է մի նշաձև զարդ՝ յակինթակիր, ներքևը երկու տերև: Մէջտեղի տախտակիկը, որ համեմատաբար բոլորից լայն է, կրում է իւր մէջ տեղում մի կիսալուսին: Տախտակիկները միացած են է իւր մէջ տեղում մի կիսալուսին: Տախտակիկները միացած են միմեանց հետ թիւըաշ ճարմանդով և վերին մասում ունին մի մի

բուստ: Տախտակիկների ներքին մասից կախուած են գնդակիկներ, իսկ միջին տախտակիկի և սրա երկու կողքի տախտակիկների վերին մասից, աստղերի յետևից, բարձրանում են 5 սանտիմետր երկարութեան արծաթէ մի մի շղթայ, որ միանում են մի թռչնաձև ճարմանդի մէջ՝ իսկ սա ամրացնում են նոյն ճակտի-կապի վերին մասում: Միւս մասից (նկ. 18) 5 արծաթէ տախտակիկներ են,



Նկ. 18, Ձ ա ռ ղ ե ռ

5 սանտիմետր երկարութեան և առ առաւելը 4 ս. լայնութեան: Այս տախտակիկներից իւրաքանչիւրը կիսից բարձր եռանկիւնաձև նեղանում է և 2 սանտիմետր լայնութեամբ կտրւում, ուր և անցը է շինուած թել անցկացնելու: Կիսից ներքև կիսաբոլոր է և ատամնաձև կտրատուած, որոնցից և կախուած են $2\frac{1}{2}$ սանտիմետր երկարութեան փոքրիկ, արծաթէ գնդակիկներ: Արծաթէ տախտակիկների մէջ տեղեւորում կան մի մի սրտաձև բարձրութիւն, թէ վերջիններիս վերայ և թէ սրանց շուրջը ամրացրուած են յակինթ և փիրուզա: Տախտակիկները միմեանց հետ միացած են կողքերից մի մի փոքրիկ օղակներով, իսկ վերևից թելով, որ տախտակիկների միջև շարուած է կապոյտ ուլունքներով: Ճակատի կապի վրայ դնելուց յետ այս մասից նրա կողքերից և վերևից ձգուող կապանները հանգուտում են ծոծրակի վրայ:

Մախչայից յետոյ գազաթի վրայ դնում են կօտիկ.— Սա 11 սանտիմետր տրամագծով և $3\frac{1}{2}$ սանտիմետր լայնութեան փայտէ շրջանակ է՝ պատած կարմիր կտորով: Առաջի մասում, դէպի ճակատը, բուրդ կամ հին կտորներ է դրուած և մի ուրիշ շորով այն-

պէս պատած, որ այս մասը կիսաբոլոր կերպով վեր է ուղղուել: Կօտիկի շրջանակի վերին մասում ամրացրուած է մի ումբաձև երկտակ կտոր՝ շորէ երիզով զարդարուած և կապոյտ ուլունքներով եզրափակուած: Սրա մէջտեղում կարուած է մի սաղաւ կոճակ, շուրջը մի քանի շարք կապոյտ ուլունքներ: Այս կապոյտ ուլունքները, որ չեն երևում, նոյնպէս յուսուածի նշանակութիւն ունին:

Կօտիկի վրայից ձգում են վրայի փոխիկ. Սա տակի փոխիկի պէս է, եռանկիւնի, երկու ծայրերին կապեր, միայն սրա եզրերին կարուած են լինում պուս—մի սանտիմետր լայնութեան գունաւոր կտորից ժապաւէն: Փոխիկը ձգելով կօտիկի վրայ՝ ծայրերը տանում բկի տակից անց են կացնում, և հակառակ կողմերից բարձրացնելով՝ կօտիկի վրայ ճարմանդում են: Ապա ձգում են լալիկ՝ մի եռանկիւնաձև սպիտակ, բաւական նուրբ կտոր: Զգում են գլխին, քաշում մինչև ունքերը, և ապա ծայրերը անցկացնում բկի տակով և հակառակ կողմերից բարձրացնելով հանգուտում գազաթի վրայ և կամ լալիկի աջ ծայրը դնում են ճակտի տակ, իսկ ճակտը անցկացնում աջ այտի վրայ յանկած մասի մէջ: Նոյն կտորի բկի մօտի մասով ծածկում են կզակը մինչև քիթը, երբ պատահում են տղամարդկանց կամ պառաւ կանանց, ի նշան ամօթխածութեան:

Կանայք ևս, մանաւանդ նորահարսները, զարդարում են իրենց կուրծքը գարգանքը, թևերին անցկացնում ապարանջան կամ կեօլպաղ, մատներին դնում մատանիներ: Ուշագրաւ է, որ կանայք աջ ձեռի բոյթ մատին դնում են արծաթէ մատանի, ահագին սարդիոնով: Մատանուն միացած է թռչնաձև ճարմանդով վերջացող 12 սանտիմետր երկարութեան մի շղթայ, որ ամրանում է զբունի թևքի վրայ:

Տոսպի և Հայոց-Չորի յիտ ընկած գիւղերում մէկ մէկ պատահում են կանայք, որ իրենց քթերին խզմա են կրում: Սա երկու սանտիմետր տրամագծով արծաթէ մի շրջանակ է՝ թելքաշ, որի կենդրոնում նստեցրած է մի բաւական մեծ յակինթ: Սրա յետևի արծաթէ կանթը անց են կացնում յատուկ այս նպատակով ծակուած քթի աջ խռչակի մէջ *): (Տես նկ. 18, 5)

*) Վերոյիշեալ զգեստների ձևերը նկարեց Թիֆլիսի նշանաւոր դերձակ Ա. Տէր-Ասատրեանը Հայոց Ազգագրական ընկերութեան թանգարանի այն հանդերձներից, որ այլ իրերի հետ ես գնեցի Տոսպի Ալիւր գիւղում ընկերութեան նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեանի և Փոխ-նախագահ տ. Հ. Մարտիրոսեանի այս նպատակով իմ տրամադրութեան տակ դրած հարկւրական բուրդի գումարով:

ՐՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ*):

Հասակ.—Սովորաբար երիտասարդը 18.—25 և աղջիկը 16—22 տարեկան հասակումն է ամուսնանում. սրանից աւելի բարձր՝ մանաւանդ աղջկայ վերաբերմամբ՝ անցած, դախացած, է համարւում: Երիտասարդին զգուշանում են մատաղահաս աղջիկ տալու, աղջկանն էլ իրանից փոքրահասակ երիտասարդ դժուարանում է առնել: Առհասարակ աշխատում են, որ երիտասարդն աղջկանից հասակաւոր լինի, և այն էլ ոչ աւելի քան 5—10 տարի: Տարիքաւոր աղջիկը կամ երիտասարդը յաճախ ամուսնանում է այրու հետ:

Խնամութեան աստիճաններ.—Թէպէտ եկեղեցական կանոնադրութեամբ պահանջւում է, որ ամուսնացող զոյգը իրարուց ազգակցութեան հօթ և խնամութեան հինգ աստիճանով հեռու լինեն, սակայն պատահում է, որ շատ աւելի մօտիկ են լինում և այսպիսի դէպքերում կարողանում են կամ կաշառելով պսակի թոյլտուութիւն ստանալ, կամ բողոքականութիւն ընդունել և կամ, որ շատ հազուադէպ է, մահմեդական դառնալ, ինչպէս օր. քսան տարի առաջ Ալօմադենց ցեղից հօրեղբոր որդու և հօրեղբոր աղջրկայ միջև տեղի է ունեցել: Աւելի խիղախները կաշառում են մի քահանայի և պսակի խորհուրդը կատարել տալիս թոյրի վրայ:

Ամուսնացողները ըստ ազգութեան.—Օտարազգիների հետ ամուսնութիւն շատ հազուադէպ է և միշտ ահագին դժուարութիւնների

*) Բացի իմ հաւաքած նիւթերից օգտուելի եմ նաև յատուկ իմ պատուէրով հաւաքած պ. պ. Խ. Լեոնիանի և Մ. Տէր Մկրտչեանի նիւթերից: Ի նկատի եմ ունեցել նաև Պէյլէրեան վանեցու «Գեղջկական հարսանիք ի Հայաստան» (Պոլիս 1870) փոքրիկ վիպակը ու Յուսիկի «Վան» յօդուածը «Արձագանք»-ի 1897 թ. №№ 23 և 27.

հետ կապուած, որովհետև կախուած է կրօնափոխութեան խնդրի հետ: Ո՛չ հայը և ոչ էլ թուրքը թոյլ չի տալիս, որ իրենցից մինը կրօնափոխ լինի, կամ նրա ժառանգները ուրիշ կրօնի պատկանին՝ ինչ է նա պիտի ամուսնանայ մի օտարազգու հետ: Դեռ էլի պատահում են դէպքեր, որ հայ աղջիկները բռնութեամբ փախցնում են թուրքերն ու քրդերը և ամուսնանում նրանց հետ՝ ստիպելով հաւատափոխ լինել, սակայն թուրք խուժանը սաստիկ խըստութեամբ է վերաբերւում դէպի այն թրքուհին, որ կը համարձակի սիրել մի հայի. այսպէս ինքս պատահեցի մի հայ վանեցու, որ մեկնում էր արտասահման, յուսալով ազատուել մահուան սպառնալիքից, քանի որ մի թրքուհի սիրահարուել էր իւր վրայ:

Հաղիւ է պատահում նաև, որ լուսաւորչական հայը ամուսնանար կաթոլիկ կամ բողոքական հայի հետ, և այս դէպքում զրբեթէ միշտ երիտասարդի եկեղեցումն է կատարւում պսակը. սակայն կաթոլիկ և բողոքական միսիօնարական միաբանութիւններն իրենց դպրոցների հաւատակից որք սանուհիներին ստիպում են ամուսնանալ միայն այն երիտասարդի հետ՝ որ իւրև ապացոյց իւր սիրոյն՝ կը զօհէ նաև իւր կրօնը: Սակայն լինում են դէպքեր, որ երիտասարդները դրժում են իրենց խոստումը, և իրենց զաւակներին մկրտում են լուսաւորչական եկեղեցում:

Ամուսնացողները ըստ տեղի և դասակարգի.—Վանեցիները գերազատում են ամուսնանալ իրենց ծննդավայրի բնակիչների հետ, ուստի և երկար պանդխտութիւնից յետ վերադառնում են ծննդավայրը, ամուսնանում, մի առժամանակ մնում և ապա կրկին պանդխտութեան ցուպը ձեռներն առնում:

Վանեցի աղջիկը ևս շատ չի ախորժում ամուսնանալ մի օտար երկրացի հայի հետ, որ «կատուի նման իւր ձագերը բերանն առած» երկրից երկիր պիտի անցնի:

Բաղաքացին չի առնում գիւղացի աղջիկ՝ արհամարհելով նրան, գիւղացին չի ուզում քաղաքացի աղջիկ, պատճառաբանելով, թէ նրա քիթը բարձր է, գիւղացու դռնից ներս չի մտնիլ: Սակայն քաղաքացին ուրիշ քաղաքացու, գիւղացին ուրիշ գիւղացու հետ խնամութիւն անում է:

Դասակարգային խտրութիւնն էլ բաւական մեծ արգելք է ամուսնական միութիւններին. շատ հաղիւ է պատահում, որ հարստի տղան աղքատի աղջիկ ուզէ, և կամ գղերի որդին անուստէրի փեսան դառնայ: Տեղական առածն ասում է.

Արե կնտի քե խնամի,

Որ պոչ քո պոչին հմանի,

Չոցին էտ խօսքին կանմիշ կէնի և խօսք կուտայ: Պառաւ իւր թուճապան բաշելէն կը վաղի մօտ նախըրդի լաճ աւետիս կուտայ:

Հարսնացուի ընտրութեան խնդրում երիտասարդից շատ աւելի մեծ դեր խաղում էին աղգական և դրկից պառաւ կանայք, որոնք շրջապատելով տղայի մօրը՝ գովաբանում են իրենց թեւարկած աղջկան հազար ու մի գովքով:—Շատ աղէկ աղջիկ է, շատ էլ անկալատ ի (անարատ), դուլուլայ երես, սիւրահի (օղիի բարձր շիշ) պաժ (ծամ), պիօշ (առատ) ծամեր, աչք ունքն մարդ կը տանի խելաց: Ըսկում (այնպէս) էլ խնաղանդ ի, որ էրկանք աղաս վէր գլխուն՝ ծէն (ձայն) չի խանէ, կիշեր ցէրեկ քուն դադարում չունի՝ պուհ (բու) ասես, հըմէն խունար ձեռիցը կուգայ, պուուկ մը ունի կասես շաքրով շաղատուկ ի, խէր մէրն էլ խօ կասես շաքարի պէս ին: մարդամուտ, բարեկամասէր, աստուածավախ:

Այս պառաւները միջամտութիւնը ահագին ազդեցութիւն է ունենում, ուստի և տեղական առածը ասում է. Երբ տիւռ (դուռ) դրկեց կամենայ, կաղ, կոր (կոյր) կը հարսնանայ:

Աղջիկ տալու խնդրումն էլ աղգական և դրկից կանանց, մանաւանդ քեռեկնկայ, քեռու (մօրեղբօր) կարծիքները ծանրակշիռ են:

Աղջիկտես.—Հնումը բացայայտ կերպով, իսկ այժմ մի որեւէ պատրուակով երիտասարդի մայրը մի քանի աղգական կանանց հետ գնում է այն աղջկայ տունը, որին կամենում է հարսնացնել, յատկապէս նրան գննելու և քննելու: Աղջկայ մայրը հասկանալով սրանց գալու բուն նպատակը, անմիջապէս դարդարում է իւր աղջկան, մազերը գեղեցիկ հիւսում, աչքերը սև դեղդիրով (ծարերով) ներկում, մազխիլով հրեսի մազերը քաշում, կարծր շալով շփում երեսը և կամ բարկ թոնրի վրայ գլուխը կախած մի քանի րոպէ պահում, որպէսզի երեսը կարմրի, բերանը լաւ լուանալուց յետոյ համեմաւոր նիւթեր, օր. մեխակ, ծամել տալիս, որ բերանից անուշ հոտ բուրէ և ապա առաջ է տանում: Շուտաւարձ և յուզուած աղջիկը չօքում է եկած կանանց առաջ, համբուրում նրանց ձեռքերը, գնում իւր գլխին և ապա կրկին համբուրում: Գանայք էլ սրա այտերն են համբուրում և յառած դիտում, գննում նրան: Տղայի մայրը սովորաբար մի փունջ ծաղիկ էր ընծայում նրան՝ եթէ գարուն էր, կամ մի նուռն՝ եթէ ձմեռ: Հնումը աղջկատես եկած կանայք առանց նեղուելու՝ սկըսում էին յայտնի կերպով գննել, քննել աղջկան, քայլել էին տալիս, ձեռները վերև բարձրացնում, մի շիւղ էին ցոյց տալիս, որ վերցնի, շատ ցածր ձայնով բան էին խնդրում, որ կատարի,

ասեղ ու թել էին տալիս որ թելի: Երբեմն նոյն իսկ բաց էին անում կուրծքը, ոտները նայում: Վերջ ի վերջոյ եթէ հաւանում էին, տղայի մայրը մի շարոց ոսկի ձգում էր հարսնացուի վիզը և կամ մի արծաթէ կամ ոսկէ մատանի դնում նրա աջ ձկոյթը, նախապէս առնելով նրա ծնողաց համաձայնութիւնը: Անմիջապէս հարսնացուն իւր ձեռով օղի էր բաշխում, որ բարեմաղթութիւններով խմում էին, ապա հիւրասիրում էին ճաշով, եթէ նոյն իսկ ճաշի ժամանակ էլ չլինէր:

Իսկ եթէ աղջիկտես եկողները աղջկան չէին հաւանում, առանց միտրեւէ բան ուտելու կամ խմելու՝ հեռանում էին:

Նշանօրհնէք.—Աղջկատեսից մի քանի օր կամ շաբաթ յետոյ նշանադրուած տղայի և աղջկայ ծխատէր քահանաները մի մի վկայի հետ առնելով սրանց համաձայնութիւնը*) միմեանց հետ ամուսնանալու՝ գնում են առաջնորդարան և այս մասին յայտնում կրօնական ժողովին: Այստեղ քննում են նշանադրուողների աղգակցական կամ խնամիական աստիճանները և եթէ չհասութիւն չեն նկատում, արձանագրում են մի առանձին մատեանի մէջ: Փետայացուի ծխատէր քահանան տալիս է կրօնական ժողովի նախագահին—առաջնորդին—սովորաբար մի արծաթէ տուփի մէջ դրած և մետաքսէ թաշկինակով փաթաթուած մատանի, որ ստացած է լինում փեսայացուի ծնողներից: Առաջնորդը օրհնում է այս մատանին և յանձնում հարսնացուի քահանային, որ տանում տալիս է հարսնացուի ծնողներին:

Այս ծիսակատարութեամբ աղջկայ ու տղի նշանադրութիւնը կատարուած է համարում և շատ հազիւ է պատահում, որ մինը խուսափէր ամուսնանալուց, առանց չափազանց յարգելի պատճառներ ունենալու:

Պէտք է նկատել նաև որ եթէ տղայի կողմից ետ կանգնեն և չկամենան պսակուել՝ հարսնացուին տրուած ընծաները և նշանի մատանին յետ չեն տրուել, իսկ եթէ աղջկայ կողմից լինի այս դրժումը՝ յետ կը տրուեն:

Նշանդրես.—Նշանօրհնէքից յետոյ երբեմն քաղաքացւոյց մէջ նշանդրեսի հրաւեր էլ է կատարում: Փեսացուի հայրը իւր եր-

*) Եթէ աղջիկները համաձայն չեն, ասում են, իսկ եթէ համաձայն են՝ նազեր են անում, թաքնում, դուրս չեն դալիս, այն չեն ասում, ոչ էլ գլխի շարժուածքով իրենց համաձայնութիւնը տալիս, վերջապէս քահանան ասում է, լաւ, եթէ համաձայն ես, մօրդ ձեռքը համբուրէ: Եւ նա այս անգամ կոտորուելով համբուրում է:

կու սեռի աղգականների ու բարեկամների հետ գնում է հարսնացուի տունը, տանելով իւր հետ հարսնացուի համար ընծաներ՝ ժամացոյց, ապարանջան, մանեակ և այլն:

Հանդիսաւոր ընդունելութիւնից յետոյ՝ քաւորի խնդրանք հարսնացուն զարդարուած և քողով ծածկուած մի հարսի առաջնորդութեամբ առաջ է գալիս և համբուրում խնամի հրաւիրեալների ձեռքերը և ապա, բարե բռնած կամ ձեռքը սրտին դրած կայնում: Խնամին տալիս է բերած նուէրները, քողը վերցնում եւրեսից և խնդրում հրաւիրեալներին մի մի բաժակ օղի հրամցնել, որից յետոյ կրկին քողարկւում է և փեսայացուի հետ նստում մի բարձի վրայ: Այդ երեկոյի խօսակցութեան զխաւոր առարկան հարս ու փեսայի բարեմասնութիւններն են կազմում, հարսնացուի բարեկամները հաղարաւոր գովքեր են թափում հարսնացուի մասին, շեշտելով, որ նա այն աստիճան հնազանդ է, որ «երկանքի քարն աղաս գլխին՝ ձէն չի խանէ»: Փեսայի բարեկամներն էլ փեսային են գովում շեշտելով նրա ճարպիկութիւնը առևտրի մէջ, պատմելով նրա քրդերին խաբելու հնարագիտութիւնները:


Շուտով մատուցւում է ընթրիք, նախ տղամարդիկ և ապա կանայք առանձին ընթրում են և ցրւում:

Նշանդրեսից յետոյ փեսացուն իրաւունք է ստանում ժամանակ առ ժամանակ այցելել իր հարսնացուին, մինչդեռ հնումը այս խստիւ արգելուած էր. նշանաւոր տօներին նա ընծաներ է տալիս հարսնացուին, որ մնացորդ է այն սովորութեան, որ հնումը փեսայացուի տնից փայ կամ բաժին էր ուղարկւում հարսնացուի տունը:

Նշանադրուած մնում են 2—6 ամիս, երբեմն և մի տարի: Հարսանիքները տեղի են ունենում գլխաւորապէս աշնանը և ձմերանը, մանաւանդ բարեկենդանին:

Կտրուածք.—Գիւղերում փեսայացուի կողմից մի գումար է տրւում հարսնացուի ծնողներին՝ օժիտ պատրաստելու նպատակով: Այս գումարի քանակը որոշելու համար փեսայացուի հայրը մի քանի բարեկամ տղամարդկանց հետ գնում է հարսնացուի տունը, որ ճաշով հիւրասիրուելուց յետոյ երկար սակարկում է և վերջի վերջոյ որոշում են 4—25 ոսկի (30—160 ռ.) և մի քանի նուէրներ տալ հարսնացուի ծնողներին ու բարեկամներին: |

Քաղաքում առաջները հարսանիքից ութ օր առաջ փեսայացուի հայրը մի նամակով յայտնում էր հարսնացուի հօրը հարսանիքի օրը: Այս նամակի մէջ ուշագրաւ են հետեւեալ բառերը. «Աստուած ձեզ ամօթով չանի, դուք ալ մեզ ամօթով չանէք մեր տոստ, դիւշմանի առջև»: Այս խօսքերի իմաստն այն է, թէ հարսնացուի



Les arméniennes récoltent de l'orge.

Հայուհիք հայ գեղջիկութենէր գարի քաղելիս.

օժիտն այնպէս պատրաստէք, որ մեր բարեկամները չտխրեն և թշնամիները չուրախանան:

Այն օրը հրաւիրագրեր են գրւում նաև քաւորին, մի գլուխ շաքարի հետ, չորեքշաբթի օրը հրաւիրում են բարեկամ կանանց իսկ շաքաթ օրը՝ տղամարդկանց: Հնումը փոխանակ հրաւիրագրի, մի մարդ էր ուղարկւում, որ մի փունջ ծաղիկ կամ մի խընձոր և կամ մի նուռ տալով բերանացի հրաւիրում էր, ինքն էլ մի որևէ նուէր ստանում հրաւիրեալից:

Տաշտադրէս. — Այս սովորութիւնը Վանում գրեթէ դադարել է, և միայն գիւղերումն է տեղի ունենում: Հարսանիքի չորեքշաբթի օրը, փեսայացուի մայրը հրաւիրում է իւր ազգական կանանց և սրանց ներկայութեամբ մաղել տալիս հարսանիքի հացի ալիւրը: Տաշտը գրւում է տան մէջ տեղը, շուրջը վառում են մոմեր, հրաւիրուած նուագածուներն սկսում են նուագել, և հացթուխը մաղը ձեռին պարում է տաշտի շուրջը և ապա սկսում ալիւր մաղել, ասելով. «Շնորհ լցէք». — Նախ փեսայացուի մայրը և ապա հրաւիրեալ կանայք մի քանի ղուրուշ են ձգում մաղի մէջ՝ իբր նուէր: Հացթուխը վերցնում է և հազար ու մի բարեմաղթութիւններով սկսում մաղել, իսկ տղաներն ու աղջիկներ տաշտի շուրջը պար բռնած պարում են: Հրաւիրեալ կանայք հիւրասիրութեամբ յետոյ ցրւում են, իսկ միքանի մօտիկներ մնում են օգնելու:

Հարսանիքի նախորդ օրը փեսայացուի տնից ուղարկւում է հարսնացուի տունը «թապախը», իբրև վերջնական նշան հարսանիքի հրաւերի: Թապախը պատրաստւում է այսպէս. մի մեծ մատուցարանի մէջ շարում են գունաւոր թղթերով և մետաքսէ թելերով փաթաթուած շաքարեղէններ, կարմիր խնձորներ, նուռներ, լիմոններ, ծաղիկներ, մի գլուխ շաքար և ծածկում մի նուրբ շալով: Մօտիկ անցեալում թապախի հետ ուղարկւում էին նաև երկու մետրանոց մի հաստ ծաղկեղարդ կերոն, որ վառում էին հարսանեկան երթի միջոցին և վերջը նուիրում եկեղեցուն:

Շատ հին ժամանակները սովորութիւն է եղել, որ քաւորը ձեռին մի թուր է ունեցել, և երբ թագաւորը մի որևէ շէմքից կամեցել է անցնել, սա թրի ծայրը խրել է կամարակալ փայտին, որպէսզի թագաւորը այս թրի տակով անցնի և ազատ լինի չարքերի ազդեցութիւնից: Երբ տաճիկներն արգելել են հայերին իրենց մօտ գէնք պահել, հարսանիքների միջոցին սկսել են մի ուրևէ թուրք զինուորից վարձով վերցնել, և որովհետև թուրը մահմեդականի լինելով պիղծ է համարուել, նախ օրհնել են և ապա գործածել: Ծերունիների ասելով մեզանից կէս դար առաջ Վանի

մեծամեծներից մինի, Ախիճան Ղարասեֆիրեանի, կարգադրութեամբ այս թուրի փոխարէն սկսել են մեծ կերոն գործածել, ուստի և այժմ էլ այդ կերոնը թրի մոմ է կոչուում, այս կերոնի գործածութիւնն էլ վերացել է: Գիւղերում տեղ տեղ մնացել է թրի գործածութիւնը:

Ազգայնատում. — Պսակի նախորդ օրը հրաւիրուում են փեսայացուի երիտասարդ ընկերները, որոնք փոքր ինչ խմելուց յետ, աճուրդի են դնում «աղապաշու փէտը», որի գնողը դառնում է աղապաշու: «Աղապաշու փէտը» մի ձեռնափայտ է, թիթեղի կտորներով զարդարուած և գլխի մօտ մոմակալներ շինուած, ուր մեղրամոմեր փակցնելով աղապաշին ձեռն է առնում: Աղապաշին համարուում է հարսնեոր ամուրի երիտասարդների պետը, և հարսանեկան պնացքի առաջնորդը և հիւրասիրութեան վերահսկիչը. բոլոր ծառաները նրան են հպատակուում և ուսեւ խմելու վերաբերմամբ եղած պահանջները հարսնեորների կողմից նրան են ուղղուում: Աճուրդը կատարուում է այսպէս. քահանան, եթէ ներկայ է, և կամ քաւորը վերցնում է աղապաշու փէտը և ձայն տալիս, ով է ուղում առնել: Մինը վերցնում է և գետին խփելով բղաւում. Տուրի Շահբալի մի պողիկ (գաւ) գինի, բէշբարմաղայ մի լիտր ժաժիկ, բուղունով (կանանչով) մի չափ սոխ: Մի ուրիշն առնում է նրա ձեռից փայտը, աւելի ուժով խփում գետին և բղաւում. Տուրի երկու գաւ գինի և այլն: Այսպէս պատուում է այդ փայտը հարուածներ ուտելով՝ մինչև որ քահանան մի պահպանիչով յանձնում է ամենից աւելի առատ նուէր տուողին: Սա վերցնում է փայտը կեցցէներէ և ծափահարութեան աղմուկի մէջ և բոլորին լեցնում՝ ստիպելով համբուրել այդ փայտը՝ ի նշան հպատակութեան: Փայտի աճուրդի պատճառով խոստացուած ուտելիքն ու խմելիքը տրուում է աղապներին, որոնք պսակից յետոյ կրկին հաւաքուելով քէֆ են անում: Երբեմն աղապաշուց երաշխաւոր էլ էին պահանջում, որ խոստացածները տայ:

Հինադրէս. — Հնումը Վան քաղաքի մէջ, իսկ այժմ միայն գիւղերում, այն էլ ոչ բոլոր, կատարուում է հինադրէսի հանդէսը: Ազգայնատումի երեկոյեան փեսայի տանից սովորաբար փեսայի քրոջ կամ մի հարսի գլխին դրած հինան դիւֆ ու գուռնի առաջնորդութեամբ աղապները տանում են հարսնացուի տունը: Հինան շաղախուած, մի ափսէի մէջ է լցուած լինում և դրուած մի մեծ մատուցարանի վրայ, որի եզրերին փակցրած են վառուած մոմեր: Հինայի ափսէի շուրջը ածուած է լինում զանազան շաքարեղէններ և մրգեր:

Հարսնացուի տանը հինաբերողը հինայի մատուցարանը

գլխին դրած պար է գալիս, և ապա հինան տալիս տնեցիներին՝ նախապէս մի նուէր ստանալով: Անմիջապէս առաջ են բերում հարսնացուին, գլխին երկու հաց դնում խաչաձև ու բղաւում. «Աստուած շատ հաց տայ» և ապա հարսնացուի ձեռներին հինայ դնում: Բոլոր կանայք ևս, բացի սգուորներն ու պառաւածները, հինայ էին դնում:

Փեսայացուի տանը ևս փեսացուն իւր ձեռները հինայ էր դնում: Աղապաշին էլ իւր փայտի ծայրն էր հինայտում:

Փեսային սափրելու ծէսը. — Պսակի օրը, երբ հարսնեորները սկսում են հաւաքուել, հրաւիրում է սափրիչը՝ փեսացուին հանդիսաւոր կերպով սափրելու: Փեսայացուն համբուրում է իւր ծնողների և քաւորի ձեռքը և նստում սենեակի կենդրոնում, շրջապատուած երկսեռ հարսնեորներով. նուագախումբը սկսում է նրաւազել. սափրիչը առատութեամբ քսում է սապոն մորուսին և բարձր ձայնով ասում. «Օրն էն օրն էլնի, որ մեր թագաւորն ծերանայ էսպէս ձերմակամուրուս էլնի»: — Ամէն, ամէն, ձայնում են հարսնեորները: — Սափրիչը նորից ձայն է տալիս. «Թագաւորի հէր ու մէր, ածելին չի կտրեր, սրել կուզէ»: Թագաւորի ծնողները զրամական նուէր են տալիս: Գիւղերում սափրիչը, մանաւանդ հնումը, մորուսը և գլուխը սափրելիս ածուների նման տեղ տեղ մաղերը թողնում էր և ապա «ծախում», այսինքն հարսնեորներից նուէրներ առնելով ածելում, այժմ ածելում է և ապա իւր հայիկին հարսնեորների առջև պըտտեցնելով նուէրներ խնդրում: Հարսնեորները $\frac{1}{2}$ —5 զուրուշ դրամ են դնում հայելու վրայ: Այս միջոցին սէ կարմիր, թաշկինակով բռնում է և տալիս թագաւորին, որը մեծ մասամբ բերնին դրած պահում է հարսանիքի ամբողջ ընթացքում և միայն կըրարի ժամանակ քահանային տալիս: Մօտիկ աղգականներից ոմանք էլ գուլպա կամ ֆէս են նուիրում թագաւորին:

Երբ սափրիչը աւարտում է սափրելը, հարսնեորները ասում են. «Աստուած շնորհաւոր անէ, մէկ էլ չտեսնաս էս օրեր», այսինքն կրկին չամուսնանաս: Ծնողները և մօտիկ աղգականներ մօտենում են և համբուրում են փեսայացուին:

Հալաւօրհնէր. — Սափրուելու ծիսից յետոյ քահանան օրհնում է թագաւորի շորերը և տալիս աղապաշուն, որ տանի թագաւորին հագցնէ: Աղապաշին աղապների հետ առանձնանում և նւորին հագցնէ: Աղապաշին թագաւորին հագցնել. Ամեն մի շոր մի ուրիշ սենեակ և սկսում թագաւորին հագցնել. Ամեն մի շոր հագցնելիս՝ երեք անգամ պտտեցնում են թագաւորի գլխով և բղաւում. «Բարով վայելէ թագաւոր»: Հանգիսականները կրկնում են.

«Հազար բարով վայելէ»: Այս միջոցին թագաւորի մայրը պարէ է դալիս, իսկ ազապները երգում են.

Մեր թագաւոր զարդարեցին,

Զարդ գարբաւներ հագուցին.

Հայոց նշան էր,

Տէր պահպանէր,

Սուրբ Կարապետ արեւն օրհնէր,

Տէր մարգասէր թող պահպանէր:

Մեր թագաւորն զարդարեցին,

Հայոց օրէնք օրէնք էր,

Մեռելարոյցն*) արեւն օրհնէր,

Տէր պահպան էր:

Մեր թագաւորն էր խաչ,

Խաչն ի ծոց խաչ ու մաչ,

Զղէն էր կարմիր, հայ կարմիր,

Արեւն էր կարմիր, հայ կարմիր:

Պսակն էր կարմիր, նարօտն էր կանաչ,

Զիւբէն էր կարմիր, արեւն էր կանաչ,

Արեւ վառ մընէր մեր թագաւորին,

Աստուած պահպանէր մինչի օրն վերջին:

Գօտիկն էր կարմիր, կարէն էր կարմիր,

Սօլերն էր սըրմայ, արեւն էր կարմիր,

Կարմիր հայ կարմիր թագուհուն բարեւ,

Թագուհուն արեւ, ամենին բարեւ:

Թագաւորի շորերը հագցնելիս ազապներն աշխատում են թագաւորի կօշիկը կամ մի ուրիշ հագնելիք գողանալ, որպէսզի ազապաշին ամօթահար իր հսկման մէջ թերանալու վերաբերմամբ, ստիպուել մի նուէր տալ և առնել:

Հանդերձ հագցնելու ամբողջ ընթացքում կնքահօր կողմից եկած երկու երեխաներ ձեռներին թրի մոմերը բռնած կանգնում են թագաւորի երկու կողմը:

Խարսխուր.— Թագաւորի հանդերձը հագցնելուց յետոյ հարսնեւորներին առաւելապէս մօտիկներն ու պատուաւորները սովորաբար կառքերով և ձիով, ումանք էլ հետի թագաւորի ու նրա հօր հետ գնում են հարսնետուն: Առաջին, պատուաւոր կառքում նստում են թագաւորի հայրն ու քաւորը, իսկ երկրորդում, որ յաճախ ծաղիկներով և թարմ ուռենիներով զարդարուած է լինում, թագաւորն ու ազապաշին: Հնումը սովորութիւն է եղել,

*) Աւանց գիւղի մագաղաթէ աւետարանը:

որ թագաւորը գնացել է ուղղակի եկեղեցի, իսկ հարսնեւորներին միջանիսը թագաւորի հօր հետ գնացել են հարսնացուի տունը և հարսնացուին բերել եկեղեցի: Եղել են դէպքեր, որ հարսնացուին բերել են քաւորի տունը և առաւօտ վաղ, դեռ արեւը չծագած պսակել:

Հարսնացուի տանը եկած հարսնեւորներին տղամարդիկ նըստում են առանձին, կանայք առանձին, իրենց մէջ ունենալով հարսնացուն: Այստեղ ևս քահանան օրհնած է լինում հարսնացուի շորերը. նրա ընկերուհիները երգել երգելով հագցրած, կապցրած են լինում նրան: Գալիս է քաւորիկը, վերցնում նրա գլխի քողը և իւր բերած քողը ձգում, նախապէս երկը անգամ գլխի շուրջը պտտեցնելով: Հարսնառ եկած կանայք հիւրասիրւում են սուրճով, շարպաթով, խմորիկներով, և մրգեղէնով: Սուրճ և օղի են բաշխում նաև տղամարդկանց. ի վերջոյ աղապաշին, կնքահօր հրամանով, իւր օգնականի հետ գալիս է կանանց բաժինը և շտապեցնում եկեղեցի գնալու: Անմիջապէս հարսնաքոյրը,—մի պառաւ կամ միջահասակ կին, որ որոշ երախտիք ունի հարսնացուի վրայ,—վառում է փեսայացուի տանից բերուած երկու մետրանոց կիւրծնը և գալիս կանգնում հարսնացուի կողքին: Ազապաշին իւր օգնականով գալիս բռնում են հարսի կրօնիկը: Մօտենում է մայրը և հայրը, համբուրում և օրհնում: Այս միջոցին մօտենում է քաւորը և կամենում է հարսնացուին տանել, սակայն հարսնքուրը ձեռքը դնելով նրա, հարսնացուի, գըլխին չի թոյլ տալիս: Քաւորը մի կամ միջանի մէծիտ է դնում թոյլ չի տալիս, մինչև որ երկրորդ և նոյն իսկ երրորդ անգամ մի մի բան չի աւելացնում: Երբ հարսնքուրը քաշում է ձեռքը՝ քաւորիկինը քիշմիշ կամ շաքարեղէն է լցնում հարսի գլխին *): Քաւորն առաջնորդում է հարսնացուին տղամարդկանց սենեակը և կանգնեցնում փեսայացուի աջ կողքին: Մօտենում է քահանան, ձեռք ձեռքի տալիս թագուհուն ու թագաւորին և այնտեղ կատարում պսակի խորհուրդի մի մասը: Այս միջոցին տեղի են ունենում ճառախօսութիւններ, երգ: Ազապների խումբը երգում է հետևեալ երգը.

Թագաւոր, ինչ բերեմ քե նըման,

Քիոյ կանաչ արեւու նման.

*) Գիւղերում աղանձ ու քիշմիշ են ածում, իսկ աղքատները սոսկ ցորեն:

Մեր վարդինիսն որ բացուէր՝
 Բացուէր քիոյ արևուդ նըման:
 Թագւոր, ինչ բերեմ քիոյ նըման,
 Քիոյ կանաչ արևու նըման:
 Սարի սուսուն որ բացուէր,
 Բացուէր քիոյ արևուդ նըման:
 Թագւոր ինչ բերեմ քե նման,
 Քիոյ կանաչ արևու նման,
 Աղբերանց արուն որ բացուէր,
 Բացուէր քիոյ արևուդ նըման:
 Թագւոր, ինչ բերեմ քե նման,
 Քիոյ կանաչ արևուդ նըման,
 Վարդ մանուշակ որ բացուէր,
 Բացուէր քիոյ արևու նըման:
 Թագւոր, ինչ բերեմ քե նըման,
 Քիոյ կանաչ արևու աննըման,
 Շուշան ծաղիկ որ բացուէր,
 Բացուէր արևուդ նըման:
 Թագւոր, ինչ բերեմ քե նըման,
 Քիոյ կանաչ արևուդ նըման,
 Պալատան ծաղիկն որ բացուէր՝
 Բացուէր քիոյ արևու աննըման:

Ի վերջոյ նստում են կառքեր և կամ հետի ուղևորւում են դէպի Թագուորի եկեղեցին: Այստեղ Թագուորին խոստովանեցնում են, խրատներ տալիս ամուսնական կեանքի վերաբերմամբ: Իսկ հարսին ութ օր առաջ են խոստովանեցրած լինում և հաղորդութիւն տուած: Կատարում են պսակի խորհուրդը և մի բաժակ զինի խմեցնում երկու ամուսններին: Այժմ գիւղերում, ինչպէս և՛ հնումը քաղաքում, Թագուհու ու Թագաւորի զլխներին մի ուրար են ձգում, ի նշան միութեան:

Պսակի խորհուրդը կատարելիս նորափեսան իւր բոլոր պատեմ շաքարի կտորը դնում է նորահարսի բուռը, որպէսզի «իրենց սէրը միշտ քաղցը լինի»:

Պսակը աւարտելուց յետ՝ հարսնուր տղամարդիկ մօտենում են Թագաւորին ու Թագուհուն և շնորհաւորում, Թագաւորի կրթութիւնը կատարած խաչն ու նրա ճակատը համբուրելով և կամ ըստ նոր սովորութեան նրա ձեռքը թոթուելով: Ապա Թագաւորն ու Թագուհին առանձին առանձին առաջնորդւում են դէպի եկեղեցու դուռը, ուր հասած միջոցին Թագաւորը դառնում է դէպի սեղանը և

երեք անգամ խոնարհում, և այս միջոցին բոլոր հարսնուհիները բղաւում են. «Աստուծոն ամանաթ (աւանդ)»:

Դուրս գալով եկեղեցուց կառք են նստում և ուղևորւում դէպի Թագաւորի տունը, միայն ուրիշ ճանապարհով: Հնումը Թագաւորն ու Թագուհին ձիեր էին նստում, և Թագուհին իւր գաւազին ունենում էր իւր հարսնեղբայրը: Այժմ գիւղերում են ձի նստում, միայն Թագուհին Թագաւորի դաւակը: Սրանց առաջնորդում է դաւուլ զուռնան, շրջապատուած ահագին հանդիսատեսներով: Հնումը որոշ տեղ հասնելիս, օր. Յանկիւսներում պսակուող՝ դարի գլուխը, կանգնում էին, Թագաւորը ձիու գլուխը դէպի եկեղեցին էր դարձնում և մի բուռ մանր դրամ շաղ տալիս հարսնուհիների վրայ:

Թագուորի բարեկամների տների առջևից անցնելիս բարեկամները կանգնեցնում են այս գնացքը և հիւրասիրում Թագաւորին ու հարսնուհիներին խմիչքներով ու մրգեղէնով:

Երբ հասնում են Թագաւորի տան փողոցի դռանը, Թագաւորի ու Թագուհու առջև զոհում են մի ոչխար կամ գոնէ մի հաւ, զլուխը դնելով դռան շէմքի վրայ: Սրա արիւնից խաչաձև բըսում են դռան կամարակալ քարի և շէմքի վրայ: Թագաւորը կոխելով այս արիւնը՝ մտնում է ներս, նրան հետևում է Թագուհին, նախ աջ ոտը դնելով շէմքից ներս, որպէսզի բարեբախտ լինի իւր մուտքը: Այս միջոցին ազապները սկսում են երգելով դուրս կանչել Թագաւորի մօրը, որ ըստ սովորութեան չի գնում ոչ հարսնացուի տունը և ոչ եկեղեցի: Ահա այս երգը:

Էկէք բարե, հայ էկէք բարե,

Մեր շնորհաւոր Թագաւորին:

Թագաւորին շատ արե,

Ուր Թագուհուն շատ բարե:

Թագաւորի մէր տիւս արի,

Քե նուշ ամպար*) ենք բերէ,

Վարդ ու ծաղիկ ենք բերէ,

Մեխակ, շուշան ենք բերէ:

Թագաւորի մէր տիւս արի,

Տախտ աւելող ենք բերէ,

Թոնիր վառող ենք բերէ,

Կովեր կթող ենք բերէ:

Թագաւորի մէր տիւս արի,

Քեզ տեղ իսկող ենք բերէ,

*) Ամպարիւս — խմելիք:

ծայրերից և երեսները դէպի արևելք դարձրած կանգնում: Զուռնա նաղարան շարունակում է նուագել և աղապները հրգում են.

Էգ բարև, այ էգ բարև,

Էգն արևուն տանք բարև.

Տայ թագաւորին շատ արև:

Վահէ, վահէ.

Էգ բարև, այ էգ բարև,

Էգն արևուն տանք բարև,

Տայ թագուհուն շատ արև:

Վահէ, վահէ.

Ապա աղապները պար են բռնում հարս ու թագուորի շուրջը և երգելով պարում.

Աստուած պախէր մեր թագաւոր

Եւ թագուհին խէրով մէրով.

Աստուած պախէր մեր թագաւոր

Եւ թագուհին քաւորներով:

Աստուած պախէր մեր թագաւոր

Եւ թագուհին սէրով բարով:

Ապա երկու պառաւ կանայք մօտենում են և երգում.

Բարի լուսու դէմ կայներ ես,

Կանաչ կարմիր դու կապեր ես,

Աստուած պախէր քե պարզերես,

Բարով թագուհիդ վայելես:

Խէք¹⁾ բաղիւքի²⁾ դէմ կայներ ես,

Կանաչ կարմիր դու կապեր ես.

Սուրբ պսակդ վէլես վայելես,

Աստուած պախէր քե պարզերես:

Աղթամարայ դէմ կայներ ես,

Քանձ լոյս խրեշտակ զուարթերես.

Թագուհիդ վէլես վայելես,

Աստուած պախէր քե պարզերես:

Իւրաքանչիւր տունը երգելիս հարս ու թագուորի երեսները դարձնում են այն կողմը, ուր գտնւում է երգի մէջ յիշատակուած սրբութիւնը: Յաճախ այս երգը հրկարացնելով քրիստոնէական սրբութիւններ ևս յիշում են միևնոյն ձևով. օր.

Սուրբ Նշանայ դէմ կայներ ես,

Ալ, նարընջի բաշ կապեր ես,

¹⁾ Հայկ և ²⁾ բոյլք համաստեղութիւններ:

Թագըդ վէլես վայելես,

Տէր քեզի պախի պարզերես:

Զուխտ Վարագայ դէմ կայներ ես,

Ալ, կանանչ, կարմիր կապեր ես,

Բարով թագուհիդ վայելես,

Սուրբ խաչ պախի քե պարզերես:

Անապատայ¹⁾ դէմ կայներ ես,

Քանց կարմիր խնձոր կարմրեր ես և այլն:

Եթէ քահանան ներկայ է լինում, թագաւորի վերայ սուրջառ է ձգում և ձեռքը աւետարան տալիս, ու այս հանդէսն աւարտում պահպանիչով, երբ ծագում է արևը և իւր կենսատու շողերը սփռում նորապսակների վրայ:

Օժիտ.—Պսակի հետևեալ օրը մի պառաւի ուղեկցութեամբ նորահարսի տնից ուղարկւում է օժիտը, որ հարսնետրսերի ներկայութեամբ բացւում և ցոյց է տրւում: Այս օժիտին ուղեկցող և միևնոյն ժամանակ բացող պառաւին դրամական նուէր է տրւում:

Օժիտը բաղկանում է մի սնտկից, որի մէջ դարսած է լինում միքանի ձեռք հանդերձ, զարդեր և զանազան նուէրներ, գլխաւորապէս գուլպաներ, նոր խնամիկների համար:

Պէտք է նկատել, որ օժիտը գլխաւորապէս մայրերն են պատրաստում տարիներ ընթացքում: Քաղաքում այժմ հետըհհետէ ընդհանրանում է դրամական կամ կալուածական օժիտ տալու սովորութիւնը:

Առց կտրել, որ ըստ մաշտոցի պսակ վերացուցանել է նշանակում: Պսակի հետևեալ օրը քահանան գալիս է թագաւորի տունը, և հարս ու թագաւորին կանգնեցնում է գետնին դրած մի բարձի երկու կողմը, գլուխ գլխի տալիս և մի ուրար ձգում նրանց գլխի վրայ. ապա պատշաճ աղօթքները կարդալուց յետոյ վերցնում է ուրարը և թագաւորի կրծքից պսակի ժամանակ կախուած խաչը:

Հնումը այս արարողութեան փոխարէն միայն ուռցն էին կտրում, այսինքն փայտէ ձողի վրայի կանաչ կարմիր բրդէ կամ մետաքսէ թելերը կտրատում էին:

Առաջատ.—Առց կտրելու գիշերը, ընթրիքից յետոյ, թագաւորը առանձնանում է մի սենեակի, ուր արդէն պատրաստուած է լինում առաջատի անկողինը, և մօտը դրուած մի շիշ գինի, մեղր և մրգեղէններ: Տան մեծերը շուտով գնում քնում են, իսկ

¹⁾ Լիմ և Կտուց անապատներ:

հարսները նորահարսին վերցնում են և իրենց տան սենեակները ցոյց տալու պատրուակով՝ բերում առաքաստի սենեակը, ուր փոքր ինչ խօսելուց յետոյ մէկ մէկ դուրս են գնում: Մնում են նորապսակները առանձին, հարսը մի տեղում միխուած, լուռ ու մունջ: Մօտենում է նորափեսան և աշխատում է խօսեցնել նրան, սակայն վերջինս յամառում է, մինչև որ մի ընծայ, օր. միքանի լիրա կամ մի զարդ, նուէր չի ստանում իւր «խօսելայ» կամ «զրուցելայ»: Կցկտուր խօսակցութեան հետևում է հիւրասիրութիւն. նորապսակները խմում են միևնոյն բաժակից ի նշան միութեան և ուտում են մեղր ու քաղցրաւենիք, որպէսզի իրենց միութիւնը քաղցր անցնի:

Կուսութեան ապացոյց սաւանը խստիւ պահանջում է թէ ծնողներից և թէ, մանաւանդ, իրեն նորափեսայից: Եղել են դէպքեր, որ մեղանշած նորահարսին անպատուելով հօր տունն են դարձրել:

Նորահարսն առաւօտեան շատ վաղ վեր է կենում, գնում կեսրայրի զգեստները հագցնում, ձեռքին ջուր լեցնում, որ լուացուի, իւր բերած երեսուրբիչը ձեռքին ձգում, որ սրբուի: Կեսրայրն այդ ժամանակ նրան մի ոսկի ընծայ է տալիս, մի երկու ընծայ էլ սկեսուրն է տալիս իբրեւ «տունամտնելայ» և «երես տեսնելայ»: Այդ օրը սովորաբար «փաշա» են եփում և հիւրասիրում հետաքրքիր ու բամբասաւէր պառաւ կանանց:

Երբեմն նորափեսայի սաստիկ յուզմունքից և կամ այլ, նրանից կախուած պատճառներից յարաբերութիւնը տեղի չի ունենում, այսպիսի դէպքում կարծում են թէ չարքերը «կապ» են ձգել, ուստի և զանազան միջոցների են դիմում՝ արձակելու, այսպէս, օրինակ, յարաբերութեան մտած միջոցին դրսում հրացաններ են արձակում, որպէսզի չարքերը վախենան, փախչեն, ու ազատ թողնեն նորափեսային, թէ հարսանիքի և թէ առագաստի մտած միջոցին նորափեսի ըտրը կոճակները արձակած են պահում, նաև մի կողպէք փակուած պահում են նորափեսի գրպանում, որը բաց է անում առաքաստի գիշերը: Չար աչքի և չարքերի ազդեցութիւնից հարս ու փեսին ազատելու յուսով գործ էր ածում նաև ուռցը.— սա մի փայտ է, ծայրին կանանչ և կարմիր բուրդ կապած, որ պսակի օրից մինչև առաքաստի գիշերը հարս ու փեսի առաջից ման էին ածում, որպէսզի չար աչքերի և չար ոգիների ազդեցութիւնը հարս ու փեսի փոխաբէն՝ նրա վրայ անցնի:

Հարսի լողացումը.— Առաքաստի հետևեալ օրը նորափեսի տան տարիքաւոր կանայք, հարսնետնից դեռ ևս չմեկնած ազգա-

կանուհիների հետ լողացնում են նորահարսին այսպէս.— Տաշտի շուրջը մեղրամոմեր են վառում, յետոյ եօթն անգամ դէպի աջ քաշում են նորահարսի քողը իբր թէ քակում են նրա եօթնատակ կապը, և ապա հանուեցնում, տաշտի մէջ պըպըզիցնելով լողացնում, միանգամայն փորձելով նրա պարկեշտութիւնը և հնազանդութիւնը, այսպէս յանկարծ սաստիկ տաք ջուր են ածում գլխին, մէկ էլ սառը ջուր: Եթէ նորահարսը, նախապէս իւր մօրից խրատուած չլինելով, մի անզգոյշ շարժումն անէ և կամ մի ճիշ արձակէ, անպարկեշտ և անհնազանդ կը հռչակեն նրան և երեսից կը ձգեն: Այսպիսի բարրարոտական փորձեր անում են նաև ուրիշ առիթներով: Պատմում են, թէ մի անգամ նուազում էր և այս պատճառով մինչև այժմ էլ հարսնուկ է կոչուում, որը և այս պատճառով մինչև այժմ էլ հարսնուկ է կոչուում, այսինքն հարսի կուլ տուած:

Խնամապատիւ.— Պսակից երեք կամ մի քանի օր յետոյ նորափեսայի հայրը հրաւիրում է նորահարսի ծնողներին իւր բարեկամների հետ շնորհ բերել իրենց մօտ: Այս հրաւերը ընդունուած չէ մերժել. և նորահարսի հայրը հրաւիրելով իւր մօտիկ և պատուաւոր ազգական տղամարդկանց, 10—20 հոգով գնում է խնամուտը ազգական տղամարդկանց, 10—20 հոգով գնում է խնամուտը, ուր մեծապէս և ճօխաբար պատոււում է: Ընթրիքից մօտ տունը, ուր մեծապէս և ճօխաբար պատոււում է: Ընթրիքից յետոյ գիւրութիւն է տրւում նորահարսի հօրը և մօտիկ ազգային կանաներին առանձնապէս տեսակցելու իրենց աղջկայ հետ: Այս հրաւերը հնումը կոչւում էր վիր իրեքի, այսինքն երեք օրից վերջ, որովհետև սովորաբար պսակից երեք օր յետոյ էր տեղի ունենում:

Այս միևնոյն օրը, առաւօտեան, թագաւորը ազապաշու և ազապների հետ դափի և զուրնայի առաջնորդութեամբ այցելութեան է գնում իւր ազգականների տները, ուր և հիւրասիրում է խորովածով, գինով ու մրգեղէններով: Շատ անգամ ազապները այսպիսի տներում հարբում են, և սկսում են զանազան պահանջներ անել երգելով:

Էսա տուն աղէկ տուն ի,

ինչ անեմ գինի չունի:

Տնեցիները պատասխանում են.

Գինի ունի,

Պերող չունի և անմիջապէս գինի բերում: Սակայն ազապները նորից երգում են.

Էսա տուն աղէկ տուն ի,
 Ինչ անեմ ժաժիկ չունի:
 Տանեցիները կրկին պատասխանում են երգելով.
 Ժաժիկ ունի,
 Պերող չունի:
 Մի երրորդն էլ հաստատում է
 Չէ վալա՜հ, էնէլ ունի,
 Պերող չունի:

Փեսապատիւ.— Խնամապատուից մի երկու շաբաթ յետոյ նորահարսի հայրն է հրաւիրում նորափեսայի ծնողներին և նրանց ազգական տղամարդկանց և հիւրասիրում ընթրիքով:

Գարձ.— Իգական սեռի խնամինները առաջին տարին իրաւունք չունին միմեանց այցելել, ուստի և նորահարսի մայրն ու քոյրերն անհամբերութեամբ սպասում են նրա դարձին, նրա իսկ բերանից լսելու տեղեկութիւններ նրա նոր վիճակի մասին:

Այս դարձը սովորաբար տեղի է ունենում ծաղկազարդին, համբարձման, վարդավառին, վերափոխման, և ամէն անգամ տեւում է 15 օր: Որոշեալ օրը նորահարսի տանից խնդրակ է գալիս, բերելով զանազան թխուցքներ և մրգեղէններ, որ բարե և կոչուում, և տանում նորահարսին, որի հետ խնամինները նոյնպէս «բարեններ» են դնում: Դարձ գնալու միջոցին ընդհանրապէս կեսրանքը նոր հանդերձներ են կարում, իսկ հարանքը՝ մի որեւէ դարդ ընծայում: Ընդունուած չէ, որ նորահարսի դարձ գնացած ժամանակ նորափեսան այցելէ նրան, այլ միայն թոյլ է տրւում տօն օրերին, դատկին, վարդավառին, տեսութեան գնալ, այն էլ նուէրներով:

Թէ տնեցիները և թէ մանաւանդ փողոցի չարածձի երեխաները զանազան կատակներ են անում նորափեսի հետ, երբ նորահարսը դարձ է գնացել: Այսպէս մի բարձ են դնում նրա անկողնի մէջ, ծաղիկներով խփում են նրան՝ և կամ երգում. ծառ-դարդար, զըռթիկ, զըռթիկ, յիշեցնելով որ ծաղկազարդին տարել են նորահարսին: Փողոցում երեխաները երգում են.

Անձրե կուգայ լուլա լուլա,
 Խարսներ կերթան փեսան կուլայ:

ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ.

Ամուսնին.— Ամուլ կնոջ չքեր են կոչում և առանց որոշելու, թէ սրա ամուսնունը իրենից է թէ ամուսնուց, նախատում են նրան, չոր ծառ, չպտղած, չգօրացած անուանարկելով նրան, այս պատճառով և ամուլ կանայք ամեն միջոցի դիմում են երեխայ ունենալու: Այսպէս՝ ուխտ են գնում զանազան սրբերի, մանաւանդ Տէր Յուսէան որդու վանքը, Ոչխարանց գիւղի վերելի Սբ. Աստուծի մատուռին, ուր աքաղաղ, գառ զոհելուց և մոմեր վառելուց յետո՛ւ մի որեւէ իր գողանում են ու իրենց հետ տանում: Եթէ նրանց ուխտը կատարւում է, գողացած իրի նման մինն էլ շինել տալով բերում են և երկուսն էլ թողնում վանքին, իսկ եթէ ոչ՝ նոյն իրը վերադարձնում:

Սրբի տուած երեխային տալիս են այդ սրբի անունը, և կամ՝ Բրիստոստուր, Տիրատուր, Ասուածատուր անուանում: Նրան կնքում են այդ սրբավայրում:

Նոյն, երեխայ ունենալու նպատակով, դիմում են նաև հետեւալ միջոցներին.

Ամուլ կնոջը երեք անգամ անց են կացնում Նարեկացու աղօթատեղու և կամ այլ այսպիսի ծակ քարերից *):

Ուխտ են գնում Լէզքի Նօթ թոնիրներին **):

Վիժնու համար դիմում են հետեւեալ միջոցներին, թէպէտ և շատ սակաւ է պատահում, այն էլ զրեթէ միայն ապօրինի կեանակցութեան միջոցին.

ա. Ծանր բաներ են վերցնում:

բ. Բարձր տեղից թռչում են:

գ. Մոխրաջուր են խմում, որ սիրտը խառնէ:

դ. Փորը տրորում են—մասսաժ են անում:

Յղութեան միջոցին յղի կնոջ ուտելու և խմելու վերաբերմամբ ունեցած բոլոր քմահաճոյքները կատարւում են, որպէս զի ծնունդից երեխայի աչքը ծուռ չլինի:

Պատմում են թէ մի յղի կին իւր ամուսնու հետ ձիով հեռանց տանից վերադառնալիս ցեխի մէջ նստան մի հատիկ է տեսնում, իջնում է ձիուց և վերցնում, ուտում: Ամուսինը սաստիկ բարկանալով սրա որկրամոլութեան վրայ, դաշոյնով խփում սրա

*) Սրանք կտէիսի մնացորդներ են:

**) Տեո Հաւատքի բաժնում:

որովայնը պատուում է և ինչ է տեսնում՝ նոյն հատիկը սրա արգանդի երեխայի բերնում:

Ցանկանալով որոշել ծնունդիք երեխայի սեռը՝ դիմում են հետևեալ միջոցներին.

ա. Յղի կինը իւր վերայի մի ոջիլ բռնում դնում է իւր աջ ձեռի բռան մէջ տեղը և վերան բրգաձև մի քիչ հող ածում ու դիտում. եթէ ոջիլը բրգի գագաթից դուրս եկաւ՝ ծնունդիք երեխան արու է լինելու, եթէ կողքից՝ աղջիկ:

բ. Հացթուխը մի գունտ խմոր ձգում է թոնիր և դիտում, եթէ առանց ճաթելու ուռնում է՝ նշանակում է, որ ծնունդիք երեխան մանչ է լինելու, իսկ եթէ ճաթում է՝ աղջիկ:

գ. Եթէ յղի կնոջ պորտը դէպի վեր է ուղղուած՝ ծնունդիք երեխան արու է լինելու, եթէ ներքեւ՝ աղջիկ:

դ. Եթէ յղի կնոջ ծծի պտուկը սկսեց լինի՝ ծնունդիք երեխան մանչ է լինելու, իսկ եթէ սպիտակ՝ աղջիկ:

ե. Եթէ յղի կնոջ նստատեղին լայն լինի՝ մանչ է ունենալու, իսկ եթէ նեղ՝ աղջիկ:

զ. Եթէ յղի կնոջ երեսը պայծառ է, ուրախ՝ մանչ է ունենալու, իսկ եթէ կախ, տխուր՝ աղջիկ:

է. Եթէ յղի կնոջ փորը կլօր լինի, մանչ է ունենալու, իսկ եթէ կախ՝ աղջիկ:

ը. Եթէ յղի կնոջ արգանդում երեխան շուտ խաղայ՝ մանչ է լինելու, եթէ ուշ՝ աղջիկ:

թ. Եթէ յղի կնոջ երեխան փորի աջ կողմում նկատուի՝ մանչ է լինելու, եթէ ձախ՝ աղջիկ:


ժ. Եթէ յղի կինը քորոց գտնի՝ մանչ է ունենալու, իսկ եթէ ասեղ՝ աղջիկ:

ժա. Եթէ յղի կինը նստած միջոցին ճկուի նստի, այսինքն ոտներն միմեանցից հեռու դրուած նստի, աղջիկ է ունենալու, իսկ եթէ սոմքուի նստի, այսինքն սովորականի համեմատ, ոտները միմեանց մօտ նստի՝ մանչ:

ժբ. Եթէ յղի կինը թեթև շարժմունք, արագ քայլուած, և ուղիղ դիրք ունենայ՝ մանչ է ունենալու, իսկ եթէ ընդհակառակը ծանրաքայլ, փորը տնկած և հտեի վրայ քայլէ, աղջիկ է ունենալու:

ժգ. Յղի կնոջ ստինքից մի կաթիլ կաթ կթում են մի գաւաթ ջրի մէջ, եթէ կաթիլը իջնում է գաւաթի յատակը, ծնունդիքը մանչ է լինելու, իսկ եթէ մնում է ջրի երեսին՝ աղջիկ:

ժդ. Երբեմն յղի կնոջ յանկարծակի ասում են. «Քան ձեռներդ ինչի՞ այդ չափ աղտոտ են» և դիտում, եթէ նա իւր ձեռները



Enfants arméniens villageois.

Հայ գիւղացի մանուկներ.

երեսների վրայ նախ նայէ՝ մանչ է ունենալու, իսկ եթէ բռան՝ աղջիկ:

Ժե. Վանում գաւազդիտուններն այսպէս էլ են գուշակում ծնունդիք երեխայի սեռը. գումարում են հօրն ու մօր անունների և սաղմնաւորութեան տարուայ տանուտէրի տառերի թիւը, եթէ սրանց գումարը զոյգ թիւ ներկայացնէ՝ ծնունդիք երեխան աղջիկ կը լինի, իսկ եթէ կենտ՝ մանչ: Օր. Աննա և Բագրատ 4+6, իսկ այս, 1910 տարուայ տանուտէրի (Այծեղջիւր) թիւը 9, ուրեմն, $4+6+9=19$. հետեւապէս և ծնունդիք երեխան լինելու է մանչ:

Ընդհանրապէս տիրում է նաև այն կարծիքը, որ եթէ ամուսինը կնոջից առոյգ է, գեր և փոքր ինչ հասակով, սրանց զաւակներն առաւելապէս արու են լինում, հակառակ դէպքում՝ աղջիկ:

Ծնունդիք երեխային որոշ առանձնատկութիւններ տալու յուսով յղի կանայք դիմում են հետեւեալ միջոցների.

ա. Ձու են գողանում, եփում և տանում փողոցում ծածուկ ուտում և դնելով մատը իրենց այտերի վրայ ասում. «Էսա տեղանք պուճ կուզեմ» որպէսզի ծնունդիք երեխան ծիծաղելիս այտերի վրայ փոսիկներ գոյանան:

բ. Գնում են Վանայ լճից ջուր խմում, որպէսզի ծնունդիք երեխայի աչքերը կապտագոյն և մազերը խարտաշ լինին:

գ. Ուխտատեղիներում սրբի գերեզմանի հողից ձգում են իրենց բերանը ասելով. «Էթայ ըլի ծծի տակ, չէթայ էլի էրեսի վրայ», որպէսզի ծծի վրայ ծին, (խալ, սև բիծ) գոյանայ:

դ. Հաւատալով, որ երեխան արգանդում եղած միջոցին, ում դէմն որ խաղայ, այսինքն նրա առաջին անգամ շարժուելիս իմ որ նրա մօր մօտ լինի՝ նրա բնաւորութիւնը կստանայ, աշխատում են լաւ մարդկանցով իրենց շրջապատել:

Ծանոթ. — Ընդհանրապէս դէպի յղի կինը յարգանքով են վերաբերում, որովհետև մտածում են, որ նա նախ «մութատի վրայ է» — ակնկալելի բաղդաւորութիւն է սպասում և երկրորդ՝ մահի առաջ է կանգնած, գուցէ չկարողանայ հեշտութեամբ «ազատուել»:

Եւ յիշաւ, թէպէտև վանեցիները ևս բաւական հեշտածին են, սակայն տատմայրների տգիտութեան և զանազան անոտիապաշտութիւնների պատճառով շատ շատերը զոհ են գնում: Այս պատճառով և ծննդեան օրերը մօտենալիս խեղճ կանայք պատրաստուում են կարծես մահին դիմաւորելու և Հագորդութիւն են առնում:

կին նոյն հրեշտակը գալիս է և այդ մեղքերը նորից նրա վրայ ածում: Այս պատճառով և ծննդեան ամենակրիտիքական բողեքին տատմէն ու մանկաբարձները խեղճ ծննդկանի հոգին են հանում, թէ այս վարկեանիս դու շատ արդար ես, օրհնիր մեզ, օրհնիր մեզ:

Երեխան ծնւում է երբ լրանում է բեղմնաւորութեան բուսկից 9 ամիս, 9 օր, 9 ժամ և 9 րոպէ:

Ծնւած բողեքին Գաբրիէլ հրեշտակապետը իջնում է նրա մօտ և նրա ճակտի գիրը գրում և մի բուռ հող ձգում, որը իր երկիրն էր ընկնի, այն երկրում պիտի մեռնի նորածինը, այս պատճառով և օտարութեան մէջ և կամ հայրենիք վերադարձած միջոցին մեռնողի համար ասում են. «Խողը քաշեց տաբաւ նրան իւր մօտ հանգչելու»:

Երբ երեխան ծնւում է՝ տատմայրը կտրում է նրա պորտը, նախապէս մի նուէր պահանջելով: Առջինեկ երեխայի պորտը կտրում են ամուլ կնոջ ըզանցքի վրայ, որպէսզի վերջինիս ամուլութիւնն անցնի: Նորածնի պորտը, եթէ աղջիկ է, ձգում են մառանը, իսկ եթէ տղայ՝ եկեղեցին, որպէսզի նորածինը մեծանալիս տնտես, կամ երգիչ, տիրացու լինի:

Երբեմն պորտը կտրելիս նրանից հոսած արիւնը նորածնի երեսին են քսում, որպէս զի կարմրաթշիկ լինի:

Եթէ ընկերքը շուտ չի ընկնում, ծծումբի ծուխ են տալիս, այսինքն ծծումբը ձգում են կրակի վրայ, և ծննդկանին կանգնեցնում այնպէս, որ այս կրակը լինի նրա ոտների միջև: Միևնոյն ժամանակ ծննդկանի փորը ձխտում են:

Երբ ընկնում է ընկերքը, վերան ասեղ են ցցում, սև սոււնիչ ցանում և փաթաթում մի շորի մէջ և տանում մի չոր տեղ թաղում: Եթէ թաց տեղ թաղեն, երեխայի աչքերը ցաւոտ կը լինեն:

Եթէ նորածինը ուշաթափ է լինում, նրա ընկերքը ձգում են կրակի մէջ, հաւատալով, որ ուշազնացութեան պատճառն այն է, որ երեխայի հոգին ընկերքի մէջ է մտել և որ կրակից նեղուելով կարող է երեխայի մէջ փոխադրուել:

Պորտ կտրելուց յետոյ ծննդկանին սրառկեցնում են տաք մոխրի կամ հողի վրայ, որը երկու ժամը մի անգամ փոխում են և այնպէս պահում մի ամբողջ և կամ երկու օր: Այս միջոցին փորը մի շալով կամ փէշտըմալով կապում են, որ չփաստելի մի շալ էլ գլխին են ձգում, որ չմըսի:

Ծննդաբերութիւնից յետոյ մի քանի ժամ չեն թոյլ տալիս քնելու, որպէս զի «աչքերը նրա ջիգարը չտանեն»:

Ծննդկանին սրառկեցնելուց յետոյ տատմայրը լողացնում է

նորածնին այսպէս. տաշտի մէջ ջուր է ածում, երկու բուռ աղ լցնում, երկու կամ երեք ձու կոտրում մէջը, ապա ջուրը զարնում, փրփրեցնում, երեխային դնում ջրի մէջ, լողացնում և ապա հանում, գլխին, թևերի, ոտների տակ աղ ցանում ու անմիջապէս խանձարուրում:

Երեխային լողացնելուց և փաթաթելուց յետ, տատմայրը երեխան գրկում է և դնելով նրան ծննդկանի անկողնի վրայ հարցնում.

Աղջի, ես եմ թեթև, թէ դու:

Ծննդկանը պատասխանում է. Ես:

— Թեթևութիւնով անցնի, աւելացնում է տատմայրը:

Այս հարցումը երեք անգամ կրկնելուց յետ՝ տատմայրը երեխային դնում է նրա աջ կողմը:

Ապա սկսում է խնամք տանել ծննդկանի վրայ: Նախ սև սոււնիճ փաթաթելով հացի մէջ երեք պրդուճ (պատառ) է շինում և տալիս ծննդկանին ուտելու: Այս պատառները Յուդայի պրդուճ են կոչւում: Սև սոււնիճը արջնդեղի (nigelle, черныха) հունդն է և դիւահալած է համարւում: Ապա ախրա է տալիս ուտի, որպէս զի սանձուն կտրի: Ախրան պատրաստում են այսպէս. եղն ու փոխինդը խառնում են իրար և մի քիչ եփ տալիս:

Մի քիչ յետոյ տալիս է նաև թէյ, շաքարով շարբաթ, կաթ:

Մինչ այս՝ տան երեխաները վազում են ազգականների տներն աչքալուս և ասում. «Ակնջկըլէս տուր, քե մէ լաճմ էլու»: Սրանց փոքրիկ նուէրներ են տալիս և ապա խնձոր, նուռ, լիմոն, ծաղիկ և կամ շաքար առած գալիս են ծննդկանին տեսութեան:

Ահա այս միջոցին մի մեծ կենդանութիւն է ընկնում ծննդկանի տան մէջ, մանաւանդ երբ նորածինը մանչ է լինում: Տատմայրը ձայնը ձգում է և սկսում է երգել.

Նախ դիմելով ծննդկանին՝ երգում է.

Երկինքն ամպե ձիւն կուգեայ,

Սարեր լալու ձէն կուգեայ,

Մեռել յարե տուն կուգայ:

Ապա՝ դառնալով դէպի հիւրերը.

Խաղար մեր բարի խուր,

Աշնան ծառ, դարնան պտուղ,

Խոլամ էլնեմ քո թէրէն,

Էկար, նստի մինարի վէրէն,

Հաց մը թալ քեօյ կէօլտի վէրէն,

Խինք ինչ կուգեայ դիւնյի վէրէն:

Ապա դառնում է դէպի նորածնի հայրը.

Աղա, եկեր եմ քեոյ տան վերէն,
 Լաճմ եմ առե քեոյ ընտանեաց մընէն,
 Խաղեր, տաղեր կասեմ քեոյ վերէն,
 Քե կը պախեմ Քեանտընու վերէն,
 Կառնեմ պանկոթ ու ակնճկըլէն:

Ապա կրկին դառնում է ծննդականին և մի շամփուր տալով նրա ձեռքը երգում.

Խոլամ էլնեմ քեոյ թէրէն,
 Առ էսա Քրիստոսի գաւազան ձեռացդ վէրէն,
 Տեսնանք թէ ինչ կուգեայ քեոյ վէրէն:
 Յիսուսն իրե յիսուն ձիով,
 Քառսունըխինգ աշակերտով,
 Մարթէն առեց, սարէն փաթութեց քեոյ տղէն,
 Խայր Աբրախամ խաչկնքեց,
 Էկան կայնան եօթ գեղով, եօթ գաւառով,
 Քէոյ տղէն աւելցաւ եօթ օխայով:

Աւարտելով երգը տատմայրը վերցնում է մի հաց, դնում ծննդականի փորին և երկու կտոր անելով ձգում շանը, որպէս զի ծննդականի ցաւն ու չոռն անցնի շանը:

Հիւրերը դրամական նուէրներ են տալիս տատմորը և սա աւելի ոգևորուելով, այս անգամ աւելի եռանդով սկսում է գովել ծննդականին, եթէ միայն նա մանչ է բերել, եթէ ոչ, թէ ինքն է լուռ մնում և թէ հիւրերը, որոնք նոյն իսկ սկսում են մխիթարել ծննդականին, թէ ոչինչ, որ աղջիկ է բերել, Աստուած տղայ էլ կուտայ, աղջիկն էլ Աստուած պարգևած դաւակն է: Ահա այդ երգը.

Լաճու մօր տարէք օղէն՝ ջամ փէնճարա¹⁾

Լաճ ի պիրե, լաճ.

Աղջկայ մօր տարէք փակեախ²⁾ կու³⁾ աւիլի
 Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր շարպաթ պիրէք, կուժն ի չինի,
 Կանթ փիրուզա, վարդ վէր պերնին
 Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր պաղ լակ տուէք, կուժն ի կաւէ,
 Կանթն ի կոյէ, պիրթ վեր պէնին⁴⁾
 Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր չորպէն իփէք, պրնձէ չորպէն,

1) Ապակէ պատուհանով, 2) գոմ. 3) աղբ. 4) բերնին.

Մէջ լաւանթա¹⁾,

Լաճ ի պիրե լաճ,

Աղջկան մօր սմուդէ²⁾ փըֆիկ³⁾, աղ մէք թալէ

Անխամ էլնի,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր տանձեր պէրէք, պոչն արծըթէ,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր թթու խնձոր, թող պոչ չէլնի,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր դիւֆ⁴⁾ քէամանի⁵⁾

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր սոխէ տուտուկ⁶⁾, կույն պիւնիկ,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մէր խանէք իգին⁷⁾, վարդ խօտօտայ,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մէր խանէք իգին սոխ մէյմըկե⁸⁾, սխտոր
 քակե, քիթ կըծուըծայ,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր նոնեք պիրէք, ծերն ի շաքար,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր շարան թղեր,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր ամպրաւ⁹⁾ պիրէք, գեող¹⁰⁾, պնտուկ¹¹⁾

խետ, էրթայ խաղայ,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր նոխուտ¹²⁾ պիրէք, բիշմիշ խետ խառ,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր կըռըմ¹³⁾ ճտնոց¹⁴⁾ մարգրիտ վէրէն,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր փերթէ¹⁵⁾ ճղնոց, ուլնիկ վերէն

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր կըռըմ կնդեր¹⁶⁾, ակնունք վերէն

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր փերթէ կնդեր, աչիչ ուլնիկ,

Քաժ ի պիրե, քաժ:

1) Անուշահոտ իւղ. 2) ձաւարի մաղունչք. 3) կերակուր. 4) դայիրա, դէֆ. 5) քնար. 6) փող. 7) այգին. 8) քաղհանել. 9) արմաւ. 10) ընկոյզ. 11) կաղին. 12) սխտու. 13) Խրիմի. 14) մանեակ. 15) կեղծ ոսկի. 16) գնդեր.

Լաճու մօր հալտուղ ¹⁾ դալմէն, ոսկի չափոսս ²⁾

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր չթէ պրուն, թող թե չեղնի,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր ատլաս կիւնոց ³⁾ հալտուղ կայթան,

ոսկի կոճակ,

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր կատըքէ ⁴⁾ կիւնոց, մաղէ լարան,

սիւտակ փլեք

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր ոսկի քամար, ձէրն ի հալտուղ ⁵⁾

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր մաղէ լարան, թող ձէր չեղնի,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մօր բոզ բոզ ⁶⁾ ձեանք, խօրն էլ ջորի,

արծթէ գամ ⁷⁾

Լաճ ի պիրե, լաճ,

Աղջկան մօր գոռոս ⁸⁾ իշուանք, թող պոչ չեղնի,

Քաժ ի պիրե, քաժ:

Լաճու մէրն ի խանըմ, խէրն էֆէնդի,

Լաճ ի բիրե, լաճ,

Աղջկան մօր մէրն ի խացթուխ, խէրն մշակ,

Քաժ ի պիրե, քաժ:

Արու երեխայ ունենալու համար դիմում են հետևեալ սնտոխապաշտական միջոցներին.

ա. Նորահարսը կեսրանց տուն առաջին անգամ ոտք դնելիս մի արու երեխայ են դնում նրա գիրկը:

բ. Երբ նորածնին լողացնում են, եթէ մանչ է՝ կաթսայի մէջ մի քիչ ջուր են թողնում, իսկ եթէ աղջիկ է՝ բոլոր ջուրը ածում են վերան և կաթսան էլ բերնքսիվայր դարձնում, թան էլ կործում վերան, որպէս զի ինչպէս որ կաթսայի ջուրը հատաւ, էլ կործում վերան, որպէս զի ինչպէս որ կաթսայի ջուրը հատաւ, էլ աղջկայ սեռը հատնի, այդ անում են, որ այլևս աղջիկ չծնուի,

Անունների ընտրութիւնը սովորաբար կատարում են տան մեծերը, շատ անգամ մօրը կամ հօրը խորհուրդ հարցնելով, եթէ միայն նորածինը «հետը չի բերել» և կամ տնեցիներին մինը

¹⁾ Ոսկեղօծ. ²⁾ ճարմանդ. ³⁾ գոգնոց. ⁴⁾ տեղական հասարակ կարմիր կտաւ. ⁵⁾ զուտ ոսկի. ⁶⁾ սպիտակաւոյն ⁷⁾ սանձ. ⁸⁾ թարախոտ:

իւր «արևը սրան չի տուել»: Հետը բերում է այն դէպքում երբ տօն օր է ծնւում, և հէնց այդ օրուայ սրբի անունն էլ դնում են: Իսկ եթէ այդ տանից մինը վախճանուել է, նրա յիշատակը վերականգնելու համար՝ նրա անունն են դնում:

Ա. Ր. Ա. Կ. Ա. Գ. Ռ. Ի. Թ. Ի. Ե.

Ա. Սրբերի.

Արբահամ. Աբրօ.

Առաքել. Առակէլ, Ռըկօ.

Աստուածատուր. Աստուր.

Աւետիս. Աւէտ, Աւտօ, Աւտէ, Աւօ.

Գասպար. Գասլօ, Գասլօ, Գասլէ.

Գալուստ. Գալօ.

Գէորգ. Կէլօ.

Գրիգոր. Կէօրօ, Գօրիկ,

Դաւիթ. Դաւօ,

Եղիազար, Եղօ,

Զաքար. Զաքօ, Զքօ, Զքէ.

Զիրաք. Զիրօ.

Թովմաս. Թովմօ, Թովմէ.

Իգնատիոս. Իգնօ,

Խաչատուր. Խաչիկ, Խաչօ.

Կարապետ. Կարօ, Կապօ.

Ղազար. Կազար, Կազօ.

Մատթէոս. Մաթէ.

Մարկոս. Մարկօ.

Մարտիրոս. Մարտօ, Մարտօ,

Մարտէ, Մարտիկ.

Մելքոն. Մէլօ.

Մինաս, Մնօ.

Միքայէլ. Մքէ, Մուքէ, Մուքօ.

Մկրտիչ Մկօ, Մկլօ, Մկրէ,

Մկր.

Մովսէս. Մոսօ, Մուսա.

Յակոբ. Յակօ, Ակլօ, Ակէս,

Յակէ.

Յովհաննէս. Աւանէս, Յովօ,

Յովէ, Յովան.

Պաղտատար. Պաղտօ, Պաղտօ,

Պղտէ.

Պետրոս. Պետօ, Պիտէ,

Պօղոս. Պուղօ.

Սարգիս. Սրկօ, Սրկէ.

Սեդրակ. Սեդօ.

Ստեփան, Սեփան, Սիփօ.

Փանոս. Փանէ.

Փիլիպպոս. Փիլօ

Բ. Հայկական անուններ.

Անուշաւան. Անուշ.

Արամ. Արամ.

Արշակ. Աշօ.

Արմենակ. Արմէն.

Արտաշէս. Արտաշ.

Արտակ. Արտօ.

Գագիկ.

Գարեգին.

Գուրգէն.

Երուանդ.

Լևոն, Լեօ.

Խորէն.

Խոսրով, Խոսրիկ.

Կարդոս. Կարթօ.

Կոստանդ. Կոստօ.

Հայկ. Հայկօ.

Հմայակ, Համօ.

Հրահատ, Հրատ.

Հրանտ.

Մամբրէ.

Մինրան.

Մուշեղ. Մուշօ.

Յուսիկ.

Շարա, Շարայ.
 Շաւարշ, Շաւօ.
 Պարգև.
 Պարոյր, Պարիկ.
 Ռուբէն, Ռըփօ, Ըռուփ.
 Սմբատ.
 Վահան.
 Վահէ.
 Վահրիճ.
 Վաղարշակ. Վաղեր, Վաղօ.
 Վարդան. Վարդօ.
 Վարդ.
 Վարդգէս.
 Վարազդատ, Վարադ.
 Տիգրան, Տիգօ.

Տրդատ. Ծրտադ.
 Տոլակ.
 Դ. Թրքական անուններ.
 Ասլան, Ասլօ.
 Ախիճան.
 Իսախան.
 Կարիպջան.
 Կուշօ.
 Միւրզա, Միւրզօ.
 Միւրզախան.
 Շէրօ.
 Ջնտի.
 Ռաշօ.
 Սաֆար.
 Քէմալ.

Ի գ ա կ ա ն ա ն ու ն ն ե ր

Ա. Սրբերի.
 Գայիանէ, Կայրան.
 Եղիսաբէթ, Եղսօ.
 Հոսփսիմէ, Խոռիկ.
 Մարիամ, Մայրօ, Մարան.
 Շողակաթ, Շողիկ, Շողեր.
 Ա. Հայկական անուններ.
 Աղատունի.
 Ազնիւ.
 Անահիտ.
 Անթառան, Թառիկ.
 Աննաման.
 Աշխէն.
 Աղաւնի, Աղօ.
 Աստղիկ.
 Արմայիս.
 Արաքսի, Արաքս, Արաք.
 Արեգնազան.
 Արշալոյս.
 Արմենունի, Արմէն.
 Արուսեակ, Արուս.
 Բուրաստան, Բուրիկ.

Գեղանուշ.
 Գուլիզար.
 Գոհար.
 Երանունի, Երան.
 Երուանդանուշ, Երուշ.
 Եփրատ.
 Զանազան, Զանօ, Զանիկ.
 Զարունի, Զարեր, Զարուխ.
 Էլման, Ալմօ.
 Թագունի, Թագուխ, Թակեր.
 Լուսնթագ, Լուսիկ.
 Խուշուշ.
 Ծովինար, Ծովիկ.
 Կարինէ, Կարին.
 Համասփիւռ, Խամաս.
 Հայաստան.
 Հայկանոյշ, Անուշ.
 Հրանուշ, Հրիկ.
 Մայիս.
 Մայրանուշ.
 Մանուշակ, Մանուշ.
 Մարանոս, Մարօ.

Մենիկ.
 Մարինէ.
 Նուարդ, Նուիկ.
 Շուշանիկ, Շուշիկ.
 Պայծառ.
 Սիրանուշ.
 Սիրվարդ.
 Սիրուն.
 Սաթենիկ, Սաթին.
 Սանդուխտ, Սանրիկ.
 Վարդունի.
 Վարդիթեր.
 Վարդանուշ, Վանուշ, Վարթեր.
 Վանունի, Վանուխ.
 Վարսենիկ.
 Վերջալոյս.

Տիրունի.
 Տիգրանունի.
 Փալլուն.
 Փառանձեմ, Փռանց.
 Փեփրոն.
 Գ. Թրքական անուններ.
 Ալթուն.
 Ալմաստ.
 Աղմամա.
 Արմաղան.
 Գիւլլիզար.
 Կէօղալ.
 Մարաշ.
 Նարկիզ.
 Պէյզատա.
 Սինամ.

Մկրտումիւն.—Կատարուում է երեսայի ծննդից 3—8 օր յետոյ, առաւելապէս կիրակի և տօն օրերը: Մկրտութեան օրը, առաւօտ վաղ ծննդկանը լուացուում է կիսից ներքե, տատմայրը լողացնում է երեսային և ապա մի փոքրիկ գլուխ շաքար կամ մի զոյգ գուլպա տանելով քաւորին, խնդրում է զալ եկեղեցի, երեսան մկրտելու:

Այս գաւառներում ևս կնքահայրը տոհմական է լինում և մեծ յարգանք է վայելում: Սանամայրը նրանից ակնածելով՝ հետը չի խօսում,—հարսնութիւն է անում: Տօներին սանամօր կողմից նուէրներ է ուղարկւում կնքահօրը և փոխադարձը ստացւում:

Տատմայրը երեսային գրկած մի երկու կանանց ուղեկցութեամբ գնում է եկեղեցի, տանելով իւր հետ 2 հաց և մի կտոր պանիր՝ ժամհարին նուէր և 3—5 դուռուշ դրամ՝ քահանային կնքելու վարձ:

Եկեղեցում տատմայրը մերկացնում է երեսային, փաթաթում «քաւորոջ հալու» կամ «մահրամա» կոչուած շորի մէջ և գնում քաւորի բազուկների վրայ այնպէս՝ որ երեսայի գլուխը նրա աջ բազկի վրայ հանգչի:

Սկրտութեան խորհուրդը կատարելուց յետ քահանան շուրջառը վերան, շարական ասելով գալիս է ծննդկանի տունը, նրան հետևում է քաւորը՝ գրկում երեսան, ձեռներին մի մի վառ մոմ: Երբ տուն են մտնում, ծննդկանը ի պատիւ միւս-

նի, տեղից վեր է կենում և կրկին նստում: Քաւորը երեխային տալիս է ծննդկանին և սա երեք անգամ խոնարհում է նրա առջև և ապա վերցնում երեխային, դնում իւր աջ կողմը:

Հնումը, ինչպէս և այժմ մի քանի գիւղերում, եկեղեցուց երեխային տուն էր բերում տատմէրը, առանց քահանայի, և դնում էր տղոցկանի աջ կողմը, մի ալիւրմաղի վրայ: Հրաւիրւածները համբուրում էին երեխայի երեսը և 10—40 փարա դնում մաղի վրայ իբրև նուէր տատմօրը:

Երեխային եկեղեցուց բերելիս տատմէրը պըպըզում էր տան առաջի շէմքի վրայ և յը՛, յը՛, յը՛ անում, ձեացնելով իբր թէ դուրս է գնում, որպէսզի երեխան շուտ-շուտ հապականէ:

Մաղի վրայ դնելիս էլ, հաւանգը բերում ականջի մօտ ծեծում էին, որպէսզի աղմուկի ընտելանայ ու շուտ չզարթնի: Այս միջոցին նաև, եթէ նոր մկրտուածն աղջիկ էր լինում, պուտկի խուփը բերում երեք անգամ դնում, վերցնում էին նրա բերանի վրայ, որպէսզի խուփ լինի, շատ չխօսի:

Կնուքից յետոյ սովորաբար տեղի է ունենում հացկերոյթ, կնքածաշ: Ծաշում են նախ տղամարդիկ և ապա կանայք: Մատուցանում են չորպա, խորոված, հախնի կամ փաշա ու փլաւ:

Մեռնողները.—Մկրտութիւնից երեք օր յետոյ կատարում են մեռնողները.—գալիս է տատմայրը, նախ մի մաքուր ամանի մէջ լուանում երեխայի այն տեղերը, ուր մեռն է քսուած և ապա դնում տաշտի մէջ, լողացնում: Աւարտին՝ երեխայի գլխից քոնած երեք անգամ բարձրացնում է ու ասում.

Ճըզլաւըզիկ,

Թափ տու ջրիկ,

Ջաղամաթի (բաղմութեան) քունը բըզիկ:

Ճըզլաւըզիկ,

Թապ տու ջրիկ,

Ջաղամաթի միսը բըզիկ:

Ճըզլաւըզիկ,

Թափ տու ջրիկ,

Ջաղամաթի քունը բըզիկ:

«Մեռնողները», այսինքն այն ջուրը, որով լուացել են երեխայի մեռնողտած մասերը, լցնում են տան մի մաքուր խորշի մէջ, և երբ մի որեւէ աման հարամոտում է¹⁾, սրանով սրբում են, այսինքն այդ խորշի միջից մեռնողտած հող են վերցնում. լցնում ջրի մէջ և այս ջրով լուանում այդպիսի ամանները:

*) Մուկ, շուն, մի խօսքով անսուրբ կենդանի է գիպչում նրան.

Ոմանք էլ մեռնողները լցնում են աղբրի աղը և կամ մի մաքուր, անմառնիկ տեղ:

Եթէ նորածինը դեռ չկնքուած մեռնի, մի խաչ են տանում եկեղեցի, քահանային օծել տալիս, բերում տուն՝ բոլորը համբուրում են և դնում մեռած երեխայի կրծքին, պատանքում, ու յանձնում ժամկոչին, որ տանի գերեզմանատուն թաղէ:

Եթէ երեխան մեռած է ծնում, անմիջապէս սրա ծնողները մի խաչ են տանում եկեղեցի, քահանային օծել տալիս և բամբակի մէջ դրած բերում տուն, իբր թէ նորածին երեխային են տարել եկեղեցի կնքելու: Երեք օր այսպէս պահելուց և համբուրելուց յետ, բամբակի միջից հանում են խաչը և տանում եկեղեցի, ու մի որեւէ սրբի պատկերից կախում, իբր թէ այդ նորածինը այդ սրբին են նուիրել, իսկ նրա դիակը տատմայրը, առանց քահանայի, տանում տան այգում թաղում է, երեսը դէպի արևելք դարձրած և պատանքած:

Քառասունք.—Ծննդկանը քառասունք է պահում արեկից ու անկողնուց, այսինքն քառասուն օր չի երևում արեին, և քառասուն օր էլ առաքաստ չի մտնում: Նա սենեակից դուրս է գալիս կամ արեւ մայր մտնելուց յետոյ և կամ դեռ ևս չծագած, այն էլ ձեռին մի շիշ (շամփուր) բռնած, աղօթքներ, կամ Յիսուս Քրիստոսի անունը շարունակ շշնջալով, որպէսզի չարքերը նրան չդիպչեն: Այս քառասուն օրերի ընթացքում ծննդկանի սնարի մօտ շարունակ ճրագ է վառում, որպէսզի չարքերը չկարողանան մերձենալ նրան:

Երեխան քառսնկալոյս է լինում, այսինքն սկսում է լղարիլ, շարունակ լաց լինել ու չքնել, հետեալ դէպքերում.

ա. Եթէ քառասունքի միջոցին երեխայի հայրը կտուրն է բարձրանում:

բ. Եթէ հայրը կամ մի օտար մարդ տուն մտնելիս երեխային տեղից չեն վերցնում:

գ. Եթէ միևնույն տան մէջ երկու ծննդկան են լինում, սրանք ամբողջ քառասունքի ընթացքում միմեանց սենեակ չեն մտնում, որպէսզի երեխաները քառսնկալոյս չլինին, և եթէ ստիպուած են լինում մտնելու՝ սենեակի միջի ծննդկանն իւր երեխան գրկած դուրս է գալիս և այս միւս ծննդկանի հետ միասին ներս մտնում, վերջինս էլ իւր երեխան գրկած պիտի լինի:

Քառսնկալոյսից ազատելու համար դիմում են հետեալ միջոցներին.—

ա. Չորեքմուտք, ուրբթմուտ և կիրակմուտ երեկոները մի

սե կատու դնում են մի ցորենի մուղի տակ, իսկ սրա վերայ պառկեցնում են քառակուսի երեխային և վերան, իւրաքանչիւր անգամ, եօթ թաս ջուր ածում, որ թափւում է սե կատուի վրայ, և այսպիսով երեխայի ցաւը կատուին անցնում:

բ. Նոյն չորեքմուտ, ուրբթմուտ և կերակմուտ երեկոնները երեխային փթրի հետ կշռում են, եթէ հետզհետ ծանրանում է՝ նշան է, որ առողջանալու է, եթէ ոչ՝ կը մեռնի:

գ. Նաև երեխային դնում են երկանքի քարի վերայ և երեք պտոյտ պտըտում:

դ. Թոնրի առաջին լաւաշ հացը ծակում են և երեխային միջից անցկացնում:

Գուշակուծիւններ նորածնի մասին: Ընդհանրապէս կարծում են, որ չորեքշաբթի և ուրբաթ օրեր ծնուած երեխաներն անբախտ, և քնաւորութեամբ տխուր են լինում: Նաև մեծ պասի առաջի երկուշաբթի և կամ առաջի ամբողջ շաբաթի մի որևէ օրը ծնուած երեխան անբախտ և տխուր է լինում:

Նոր-տարու օրը ծնուած երեխան բարի է լինում:

Տէրնդաղի (Տեառնընդառաջի) երեկոյեան ծնուած երեխան շատ չար և կրակոտ է լինում, որովհետև «կրակի հետ է ծնւում»:

Մայիս ամսում ծնուած երեխան դուարթ և բախտաւոր է լինում, և նրա անունը դրնում են Մայիս կամ Արմայիս՝ եթէ աղջիկ է, և Արամայիս՝ եթէ մանչ է:

Ծննդեան և Զատիկի խթման երեկոնները ծնուած երեխաները իմաստուն և «թիակ իրիշկող» են լինում, ուստի և սրանց գլխերի տակ շան թիոսկրն են դնում պահում, որպէսզի երբ մեծանան, նրանց նայեն ու գուշակութիւններ անեն:

Գուշակութիւններ են անում նաև դնելով մանկան մարմինը, այդպէս:

Եթէ ծոծրակը փոս է ունենում, երեխան նախանձոտ է լինելու:

Եթէ ճակատը «դար», լայն և ուռուցիկ է, հանճարեղ է լինելու:

Եթէ ներքանը ուղիղ է և ոչ կամարաձև՝ խարդախ է լինելու:

Եթէ ձեռները միշտ գոց է պահում, ազահ և ժլատ է լինելու:

Մանկատաժութիւն.—Նորածնին առաջին անգամ գիշերը ծիծ չեն տալիս: Արու երեխային նախ քան առաջին անգամ ծիծ տալը դանակի վրայ մի քիչ շաքարաւաղ են ցանում և քսելով նրա բերանին ասում. խօսքդ կտուր՝ (կտրիչ), քաղցրալիզու ընես: Նաև գիրք են դնում բերնին, ասելով երեք անգամ. կարդացուր ընես, ձայնաւոր ընես, ինչպէս և հաց են դնում բերնի վրայ, որ

դըսմթով (բախտաւոր) լինի:

Մայրը նախ կթում է դալը և ապա տալիս երեխային ծծելու՝ նախ աջ ծիծը:

Կաթը աւելացնելու համար դիմում են հետեւեալ միջոցներին.

Արու և էգ զաւակների սակաւակաթ մայրերն առանձնապէս վերցնելով իրենց հետ հաց, պանիր, խաշած հատիկ, մոմեր ու խոունկ, միասին դնում են Վանի կաթնաղբիւրը, մոմերը վառում աղբրի գլխին, խոունկը ծխում աղբրի առջև, իրենց ծծերը լուսնում այդ ջրով, կուշտ խմում, և ապա ծիծ տալիս հետները բերած իրենց երեխաներին, բայց ոչ թէ իւրաքանչիւրն իւր, այլ միևսի երեխային: Վերջում միասին ուտում են իրենց բերած պաշարը՝ հացը, պանիրն ու հատիկը և աւելացածը դնում աղբիւրի գլխին ու վերադառնում:

Կաթը շատ եղած միջոցին կթում են և լցնում կամ թոնրի ալը, կամ աղբիւրի մէջ և կամ արեւելեան կողմի մի պատի մէջ:

Երբ մեռնում է երեխան՝ մայրը իւր ձեռի ափերը դնում է ծծերի պտուկների վրայ և շփելով ասում. «Քո տէրը մեռաւ, դու էլ մեռի», որպէսզի սրանք ցամաքեն:

Սովորաբար երեխային ծիծ են տալիս 1—3 տարի և կամ մինչև կրկին յղանալը:

Սակաւակաթ մայրերը երեխաներին կերակրում են ոչխարի կամ կովի կաթով, սակայն ընդհանրապէս ոչխարի կաթը գերադաս է համարւում: Առաջին երեք ամիսը կաթի մէջ նրանից երկու անգամ աւելի ջուր են խառնում, իսկ յետոյ հաւասարաչափ: Ըսկզբում փոքր ինչ աւելի, իսկ յետոյ հետզհետէ քչացնելով շաքար են ձգում կաթի մէջ:

Իբրև պտուկ գործ են ածում եզան կոտորը՝ ծայրին կովի կամ իծի պտուկ անցկացրած. և կամ ծղօտի մի ծայրը փաթաթում են բամբակով՝ դնում երեխայի բերանը, իսկ միւսը անցկացնում կաթով լի շշի կամ բաժակի մէջ:

Կնոջ կաթը իբրև դեղ ևս գործ են ածում: այսպէս աղջկայ մօր կաթը շաղախում են ալիւրի և իւղի հետ և դնում ձեռքին գոյացած վէրքի վրայ, որ լաւանայ:

Նոյնպիսի կնոջ կաթը կթում են խուստըկող (ցաւող) աչքերի մէջ:

Նաև նոյնպիսի կնոջ աջ ծիծը կթում են շշող ալանջներից ձախի մէջ և ձախ ծիծը՝ աջի մէջ, որ այլևս չընշի, չցաւի:

Ծծից կտրելիս ցիխ, ծեռտ և այլն են քսում ծծի վրայ, որ երեխան զգուի, այլևս չուտէ: Նաև բուրդ, կատուի կամ ձկան ազի են դնում ծծի վրայ և վախեցնում երեխային, ասելով. «Արջաբլուկ

ա, վայ, վայ, վայ», որպէսզի երեսան վախենալով այլևս չմերձենայ ծծին:

Երեսային լողացնում են մինչև քառասունքը ամեն օր, օրը մի անգամ, ապա շաբաթը երեք անգամ, մեղք համարելով չորեքմուտ, ուրբթմուտ և կիրակմուտ օրերը որևէ աշխատանք կատարել:

Ամբողջ քառասունքի ընթացքում լողացնելիս մկրատ, շամփուր, դանակ, մեխ են դնում տաշտի մէջ, որպէսզի չարքերը չխփեն երեսային:

Խանձարուրելիս երեսայի տակը տաքացրած հող են դնում, որպէսզի թէ տաքացնի երեսային և թէ քաշի միզելուց յառաջացած խոնաւութիւնը: «Հողի տղէն (հողի վրայ խանձարուրած տղան) սերսուր, (մաքուր) կըլինի, անուշ հոտ կիզայ»:

Օրական երկու կամ երեք անգամ են խանձարուրում:

Երեսային օրօրոց են դնում միայն մեռնից հանելուց յետոյ:

Օրօրոցի կամարից կապում են «շղջիկ».—մի թելի վրայ անցկացրած խնունջներ, վէգեր և կապոյտ ուլունքներ: Ուլունքներն աչք չտալու համար են, իսկ միւսներն երեսան խաղալու:

Երեսային առաջին անգամ շապիկ հագցնելիս՝ նրան դնում են շապիկի վրայ և այս ու այն կողմ շարժելով ասում:

Տոպրակը իւրին, իւրին (լի)

Չանթիկն իւրին, իւրին:

Եւ այս այն նպատակով, որ երեսան շուտով լցուի, գիրանայ:

Երեսայի եղունգները չեն կտրում, այլապէս «կոխ» կը լինի:

Երեսայի ատամները բշտելիս սոխ կամ մի կարծր բան են տալիս նրա ձեռքը, որ կրծէ. նաև լողացնելիս գլխին խաշած հատիկ են լցնում, որը և տալիս են հաւերին:

Եթէ երեսայի ատամները ժամանակից առաջ դուրս գան, նա «գլխակեր» կը լինի, տնեցիներէից մինը կը մեռնի:

Երեսան կաթնատամները փոխելիս ընկած ատամը դնում են մի դրան փեխի տակ և երեք անգամ դուռը բանալով ու խփելով ասում:

Առ քե գայլու ատամ,

Տու ձիկ գառու ատամ,

որպէսզի նոր գալիք ատամները բարեձև և մանր լինեն:

Եթէ երեսայի մազերը ցանցաւ լինեն, ասում են, թէ նրա ծընողները ստախոս են, ուստի և յաճախ ստախոսներին ասում են. Ճիշտ խօսէ, որ տղուդ գլխը մազ բուսնի:

Երեսայի մազերը առաջին տարին չեն կտրում, այլապէս

գլուխը կը ցաւի: Առաջին անգամ կտրած մազեր դետին չեն ձգում, այլ մի պատի ճեղքի մէջ են ամփոփում, այլապէս երեսան յաճախ գլխացաւ կունենայ:

Ծնողներն ընդհանրապէս ցանկանում են, որ երեսաները երկար բնեն, որպէսզի իրենք ազատ միջոց ունենան, այս պատճառով և դիմում են հետեւի միջոցներին:—

1. Տղի ապակահոլած շորը չորացնում են և դնում օրօրոցի բարձի տակ:

2. Երեսային լողացնելիս մի շատ քնկոտ մարդ է նրա գլխին շուր անում:

3. Ծնողկանը իւր ոտները լուսնում է երեսային լողացրած՝ ջրի մէջ:

4. Մինչև երեսան չբնի, նրա լողաջութը չեն թափում:

5. Լողացնողը ձեռքը երեք անգամ թաթախում է լողաջրի մէջ և խաչակնքում խանձարուրած երեսային:

6. Գերեզմանատնից մի քիչ հող են բերում և շորի մէջ լցրած երեսայի բարձի տակ դնում, որպէսզի «մեռելների քունը նրան փոխադրուի»:

7. Երեսային մի մազի մէջ դրած տանում են նախիրի առջև, երբ սա իրեկոյեան վերադառնում է գիւղ, և ուղղելով խօսքը նախրչուն՝ պսղւմ են. Նախրչի, սարէն կուգաս, իմ տղին քոնէս բերեր:

Եթէ երեսան քուն չէ ունենում, գինու մէջ փուլած արմաւ են ուտեցնում:

Իրեւ քնաբեր դործ են անում նաև խաշխաշը, միայն սրա կեղևի վրայ իւղ են քսում, դնում թոնիր, միջիւ կարմրացնում, յետոյ մանրում, մի քիչ շաքարաւազ աւելացնում, լցնում երեսայի մօրկաթի մէջ և սրանից միջանի գդալ խմացնում երեսային:

Եթէ երեսայի բերնից «թառ» (ջուր) է գնում, կնքահայրը երեք օր յաջորդաբար գալիս է և երեքական անգամ իւր ձկոյթ մատը դնում երեսայի բերնին:

Նոյն նպատակով մայրը երեսան գրկած բոլորովին լուռ գընում է մի այնպիսի տուն, ուր իւր այդ երեսայի հետ դեռ ևս չէ եղել, և այսպիսի թոնրի ալան շորով երեք անգամ սրբում է երեսայի բերանը:

Եթէ երեսայի բերնից խիստ (պնպուլ) է գալիս, ասում են իմաստուն է, «խելքն էկի գլուխ»:

Վախեցած երեսային շուր և կամ իւր մէջն են խմացնում. նաև վերի ծնօտը բռնած մպտով վեր են բարձրացնում արեւով. Պախապան խաչ խրեշտակ, չորս գլուխ աւետարան:

Երեխային վախեցնելու նպատակով ասում են. Սուս, առջաբ-
լէօն (արջը) էկաւ, տաճիկը կուգայ ականջ կտրի, և կամ

Ակլատիգ,

Չվանը վիզ,

Արի կպի էրթ/ւս:

Երբ երեխան առաջին անգամ «նուրու կառնի», — շրթունքները
վրայ վէրքեր է գոյանում, այնպէս որ չի կարողանում ծիծ ուտել,
լուսնի նորին մայրը վերցնում է երեխային և լուսինը ցոյց տա-
լով ասում.

Նոր, նոր շնախաւոր նոր,

Ծեր գնացիր, տղայ էկար.

Տիւ տղայ, տղէն տղայ.

Տղէն տղից չի վախենայ:

Երեխային ոտի կանգնեցնելիս ձեռներէց բռնում են և բարձ-
րացնելով ասում.

Կեկեն, ¹⁾ կեկեն, կէս տարեկան,

Աւրիլի բարէօն ²⁾ ծուռ ³⁾ շինական:

Եթէ երեխան ուշ է ոտք ելնում, նրան դնում են ցորենի
մաղի մէջ, տանում եօթ տան առաջ, դուռը զարնում ասելով.
«Անտան էկե ոտ կուզի»: Տնեցիները հաց, հաւկիթ, չամիչ և այլն
դնում են մաղի մէջ, որ բերում են տուն և քիչ քիչ երեխային
տալիս՝ ուտելու:

Երեխային քալեցնելիս ասում են.

Աթեն, *) աթեն,

Տոտեր **) վարդ են:

Չարքերի ազդեցութիւնից երեխային ազատելու նպատակով
խմորի մէջ սև սուսիչ (արջնդեղ) են դնում, թոնրի մէջ թխում,
և դնում երեխայի օրօրոցի բարձի տակ:

Չարքերը ոչ միայն ֆլաստում են երեխային, այլև փոխում
նրան իրենց երեխաների հետ, ուստի և երբ մի երեխայ տգեղ է
լինում և չար՝ ասում են «փոխածուրիկ է», չարքերը փոխել են:

Եթէ մի մօր զաւակները կամ մեռած են ծնւում և կամ շու-
տով մեռնում, ենթադրում են, թէ նա «թըպըղ» ունի, այսինքն
նրա լեարդի վրայ գորտանման մի ճիճու է գոյացել, երբ այդ
կինը անխոհեմութիւն է ունեցել մի գիշեր թոնրի մէջ ֆնայած
լըով լողանալու:

Թըպղիից ազատուելու համար կախարդներին գիր են անել

¹⁾ Կանգնիր. ²⁾ նմանում է հօրը. ³⁾ խենթ:

*) Երեխայի բարբառով՝ քայլիւր. **) Ոտներ:

տալիս, և երբ սրա ազդեցութեամբ կինն սկսում է օրծըկալ՝ բե-
քանը կրակի վրայ է բռնում, որպէսզի թըպղի ճիճուն ուղղակի
կրակի վրայ ընկնի և վառուի:

Թըպղի ունեցող կանայք իրենց երեխաներին իրենք ծիծ չեն
տալիս, այլ յանձնում են երկարարև երեխաների մայրերին: Թըպ-
ղի ունեցող մայրն ծնած միջոցին գնում եօթ տնից մի մի ա-
սեղ են ժողովում և բերում նորածնի ընկերքի վրայ զարնում ու
այնպէս թաղում, որպէս զի նորածինն ապրի: Եւ երբ երեխան
փոքր ինչ մեծանում է՝ նոյնպէս եօթը տնից շորեր մուրալով մի
զգեստ են կարում և հազցնում երեխային և կամ կապոյտ զգեստ
են հազցնում, որպէսզի չար աչք չդիպչի նրանց, նաև այդպիսի
երեխայի անունը Մնացական և կամ քրդի անուն են դնում:
Քրդուհիներն էլ հայի անուն են դնում:

Նոյն նպատակով երեխայի քաշով մէկ խունկ ու մօմ են
նուիրում մի որևէ սրբի:

Երբ երեխան ուշագնաց է լինում, Թալալում է, տանում
«Թալալոց» կոչուած ծակ քարերի միջից 3 անգամ անց են կաց-
նում: Նաև ուխտ են դնում Արտամետի ս. Թալալոս ուխտատե-
ղին, որ գտնուում է մի թուրքի այգու մէջ:

Նոյն նպատակով մեծ պասի այն շաբաթ օրը, որ ս. Թէո-
գորոսի տօնն է լինում, թալկացող երեխաների մայրերը տօն են
պահում:

Երեխաներին չար աչքի ազդեցութիւնից ազատելու համար՝
գլխարկի վրայ, շալակին, թևերին կապոյտ ուլունքներ են կարում:

Եթէ երեխան չար աչքի ազդեցութեամբ հիւանդացած է լի-
նում, օրօրոցում պարկած միջոցին նրա վրայ մի ափսէ են դնում
և մէջը խաչաձև բամբակ դարսում, ապա այս խաչի թևերի մի-
ջև աղ ածում, նշանակելով այն անձերի անունները, որոնք կա-
րող էին աչք տուած լինել. յետոյ միաժամանակ վառում են խա-
չի չորս թևերն էլ ու դիտում, որ աղի մօտ որ վերջին բոցը
հանգչի, դրա վրայ նշանակած անունը կրող անձն է աչք տուել
երեխային, ուստի և մի դիշեր զաղտնաբար գնում են այդ մար-
դու տան դրսի դռնից փոքր ինչ տաշում և բերում երեխայի օ-
րօրոցի տակ վառում, որպէսզի չար աչքի ազդեցութիւնն անց-
նի: Վառելիս շատ անգամ այս աղօթքն էլ են ընթում.

Չար աչք, չար փուշ,

Չար կրակն իջն իրիցի,

Չարերն սարերն երթան,

Բարին վըր մեր տղի օրրոցին:

Եթէ երեխան շուտով լեզու չի ելնում, եկեղեցու, գլխաւո-

րապէս ս. Նշանի, բանալին երեք անգամ քսում են բերնին. նաև մի առջինակ երեխայի կամ մարդու ճկայթը կոխում են նրա բերանը:

Մանկական բոքովանք

Մա-մա, նա-նա, մայրիկ.
Պա-պո, եա-եա, աղա, հայրիկ.
Տա-տայ, քոյրիկ.
Պապէր, եղբայր.
Պիպիկ, պըպո, փոքր եղբայր.
Պապած, Աստուած.
Պապածին, եկեղեցի:
Փափա, հաց.
Պու, ջուր.
Կաթիկ, կաթ.
Պըժիկ, միս, (կերակրի).
Վու վու, խաղալիք.
Կակա, միրգ.
Ուֆու կամ ֆուֆու, կերակուր.
Ծիծիկ, ծիծ.
Կուկու, հաւկիթ և ընկոյզ:
Թոթոն, թոնիր.
Մամոն, ծամոն.
Տուտուն, տուն.
Տուտուռ, դուռ.
Փշո, փշիկ, կատու.
Կուճու, կուճիկ, շուն.
Տուլիկ, շան լակոտ.
Ճուճու, հաւ.
Թաթան, ձեռք.
Տոտոն, ոտք.
Ճաճիր, աչք.
Կոկոն, գլուխ.
Տատաշ, ականջ.
Լալակ, շալակ.
Տըզիկ, ատամ.

Սիսին, երես.
Կտոն, վիզ.
Լօլիկ, պապալ, կօշիկ.
Լալաւ, հագուստ (հալաւ).
Լալախ, թաշկինակ.
Ճէճէր, ճրագ.
Տըզ, կրակ.
Լէլէ, սայլ.
Տմպո, թմբուկ.
Կէկէն, կայնել.
Տիտիկ, նստիկ.
Աթէն, քայլել.
Յուլու, մէզ, միզել.
Դարդար, քնել.
Մամա, ուտել.
Թա, չկայ.
Բըշ, քշել.
Չոփ-չոփ, լուացուել.
Տատաք, տաքանալ.
Օհօ, պաօ, կով.
Պճօ, պըճիկ, հորթ.
Չու-չու, չշօ, էշ.
Տատաք, ձի.
Ճուճուդ, թոչուն.
Կտօ, կըտիկ, այծ, ոչխար.
Պօլօ, միջատ.
Ծածաղ, ծաղիկ.
Ծածառ, ծառ.
Լալօ, համր.
Բըխ, փու, կեղտոտ, վատ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Թողնելով իրաւաբանական սովորութիւնների բաժնում ման-րամասն խօսելու վանի նահապետական գերդաստանի և ընտա-նիքի կազմութեան և սրանց անդամների փոխադարձ յարաբերու-թիւնների մասին, այստեղ ցանկանում ենք նկարագրել միայն վան քաղաքի ընտանեկան կեանքը, որ բաւական տարբերում է մեր ուսումնասիրած վայրի դիւղական գերդաստանների կեան-քից: Վերջինս միանգամայն նման է վասպուրականի միւս գա-ւառների գերդաստանների կեանքին, ուստի և կրկնութիւններից խոնարհելով նպատակով մենք միայն մի անգամ կը նկարագրենք վերոյիշեալ բաժնում:

Ահաւոտ Կատ վաղ, դեռ արշալոյսը չծագած, կոչնակի ձայ-նով առաջինը վեր է կենում նորահարսը և զալիս օգնում սկես-րոջը հագնուելու: Մի քիչ յետոյ վեր են կենում նաև սիւս հարս-նեքը: Պառաւ սկեսգւրը նորահարսի ածած ջրով լուացուելուց յետ դառնում է դէպի աղօթարան, մի կարճ աղօթք շնջում, և ապա սկսում կերակրի պատրաստութիւն. մեծ հարսը կամ ինքը սկեսուրը վառում է թոնիրը և պատրաստում թանապուր, տա-նեխ ձուկ և մի երկրորդ տեսակ կերակուր: Մինչ այս տղամար-դիկ ևս վեր են կենում. նորահարսը տալիս է սկեսրայրի շորերը հագնելու, ջուր է մատուցանում լուացուելու ինչպէս նրան, նոյն-պէս և մեծ տեգրերին և անմիջապէս տեղաշորերը հաւաքում, անհեղինակներն աւելում: Մկեսրայրը գնում է եկեղեցի և մի կարճ միջոցից վերադառնում: Տղամարդիկ նստում են ձաշում, երբ արդէն արեւը նոր սկսում է ծագել, մօտաւորապէս ժամը 6—7-ը, որից յետոյ գնում են Քաղաքամէջ իրենց խանութը՝ մեծ մասամբ ոտով և կամ իշով, ձիով, կառքով: Մի քիչ յետոյ կանայքն են սկսում ձաշել երեխաների հետ, ու սրանց էլ դպրոց ուղարկում: Այնուհետև կանայք սկսում են տնային գործով զբաղուիլ. սկե-սուրը ճախարակ է մանում, մեծ հարսը կար, կարկատան անում, փոքրիկը լուացք անում, գուլպա գործում, նորահարսը ջուր բե-րում, և այլն: Կեսօրին, իսկական ձաշի ժամանակ, եթէ քաղցած են լինում՝ տղամարդիկ իրենց խանութում և կանայք տանը փոքր ինչ հաց ու պանիր կամ բոսկեռած են ուտում և շարունակում աշ-խատել: Ձաշից յետոյ, մօտ ժամը 3-ին, սկեսուրը ընթրիքի հա-մար պատրաստում է 2—3 տեսակ կերակրներ: Ժամը 7-ին տղա-մարդիկ փակում են խանութները Քաղաքամիջում և զալիս գնում, նստում նախ իրենք և ապա կանայք ընթրում: Սրանից յետոյ

տղամարդիկ առանձին, կանայք առանձին մի քիչ ժամանակ են անցկացնում և պառկում քնում: Հնումը շատ, իսկ այժմ մի քանի տներում հախ քան քնելը «Եկեսցէ» են անում: Այսպէս ընթանում է սովորական կեանքը: Այժմ նկարագրենք այս կեանքի մանրամասնութիւնները:—

Թէ տղամարդիկ և թէ, մանաւանդ, կանայք սովորաբար հագնում են հին, կիսամաշ հանդերձներ, նորը պահելով կիրակի, տօն և հրաւերքի օրերին: Միևնոյն հանդերձը կրում են նրանք ամբողջ օրը, թէ աշխատելիս և թէ հանգիստ առնելիս: Լուացուելիս նախ լուանում են ձեռները, երեսը և ապա բերանը՝ մի քանի անգամ ողողելով: Ատամի փոշու և խոզանակի գործածութիւնը դեռ ևս մուտք չէ գործել: Սովորութիւն ունին նաև ձեռները լուանալու ճաշից յետոյ և ընթրիքի սկզբին ու վերջին, և այն էլ սապոնով, մինչդեռ առաւօտները սապոն չեն գործածում: Սրբւում են գրեթէ բոլորը միևնոյն երեսօրեիչով: Ընդհանրապէս գործ են ածում Հալէպի և Կրեմէի սապոնները, երբեմն նաև տողտ կամ տեղտ բոյսի արմատը, սր չողան է կոչւում: Լուացքի համար գործ են ածում վանում ճարպից ու դմակից պատրաստած սապոնը: Կանայք սովորութիւն ունին շաքաթը մի անգամ, շաքաթ օրերը, լողացնել երեխաներին և լուանալ իրենց գլխը: Երբեմն էլ լողանալ, իսկ ամիսը մի անգամ, այն էլ մեծ ներք, երբեմն էլ լողանալ, իսկ ամիսը մի անգամ, այն էլ մեծ մասամբ ձմեռը, գնալ բաղանիս: Տղամարդիկն էլ ամիսը մի անգամ կամ տանն են լողանում և կամ բաղանիս գնում, թէև կան նաև այնպիսիներ, որոնք տարեկան միայն երկու անգամ են լողանում, հաղորդուելիս և մեծ պասի երկուշաբթի օրը, ինչպէս պահանջում է վանեցիների կրօնական հայեացքները: Քաղաքում միջում կայ միայն մի տղամարդկանց և մի կանանց բաղանիս, իսկ Այգեստանում միայն մի բաղանիս, որ բաց է լինում չորս օր կանանց և երեք օր տղամարդկանց համար: Ամառը տղամարդիկ շաքաթը մի անգամ դնում են վանի լճի մէջ լողանում, իսկ կանայք գուրկ են այս բաւականութիւնից, որովհետև ոչ մի յարմարութիւն չկայ:

Վանեցիներն ընդհանրապէս նստում են ծալապատիկ կամ չորած: Ի նշան յարգանքի մեծերի մօտ չորում են և ոչ նստում: Կանգնած միջոցին էլ ձեռները կրծքին են դնում, «բաբն բռնում» կանգնում դարձեալ ի նշան յարգանքի: Առանց հրամանի չեն չորում և առանց հարցման չեն խօսում:

Նորահարսերը ի նշան յարգանքի բարե բռնած այնքան են կանգնում, մինչև որ հրամայում են նստել: Այս ժամանակ էլ սրանք չեն համարձակւում ոչ ծալապատիկ նստել և ոչ էլ չորել:

այլ մի ծունկը ցցում են, միւսը չորում և անձայն լուռ մնում, գլուխը փոքր ինչ խոնարհած:

Մեծերի ներկայութեամբ բարձրաձայն ծիծաղելը, առանց հարցի մէջ ընկնել խօսելը ամօթ է համարւում: Ամօթ է համարւում նաև մեծերի ներկայութեամբ լաց լինելը: Այսպէս նորահարսը իւր ամուսինը պանդխտութեան գնացած միջոցին և նոյն իսկ մեռած ժամանակ չպէտք է բարձր ձայնով և կամ յայտնի լաց լինի, մեծ ամօթ է:

Թէ նստելիս, թէ ճաշելիս և թէ քնելիս խստիւ պահպանւում է աւագութեան կարգը: մինչև մեծը չսկսէ, նրանից կը բացուի չի համարձակուիլ առաջ ընկնել: Ճաշելի է, որ կանանց ամենամեծը, տղամարդկանցից ամենափոքրից էլ ստոր է համարւում, այսպէս մինչև վերջին տղամարդը հնարի կամ չքնի, կանանցից ամենամեծն անգամ իրաւունք չունի նստելու կամ քնելու:

Հաց ուտելիս մի սփռոց (դաստախուն) ձգում են յատակին, մի կլոր, յատուկ այս նպատակով շինուած, առանց թիկունքի աթոռ դնում այս սփռոցի մէջ տեղում և ապա սրա վրայ դնում մի պղնձէ մեծ սկուտեղ (սինի), իսկ չքաւորները այս աթոռի և սկուտեղի փոխարէն գործ են ածում խոնջա, որ մի կլոր, 1—1½ մետր տրամագծով տախտակ է, յանկած մօտ կէս մետր բարձրութեան և միևնոյն երկարութեան երկու տախտակների վրայ, որոնք միացած են 10 սանտիմետր լայնութեան մի փայտէ ձողով: ճաշողներն աւագութեան կարգով բոլորում են այս սկուտեղի կամ խոնջի շուրջը չորած կամ ծալապատիկ նստած: Հասկանալի է, որ նախ միայն տղամարդիկ են ճաշում և յետոյ կանայք: Սկուտեղի շուրջը շարում են մեծ քանակութեամբ հացեր, մէջ տեղում դնում փայտից շինած թոչնածե աղամանը, մի ամանով ժածիկ կամ պանիր: Դանակ կամ պատառաքաղ միմիայն ամենահարուստ տներում կան, այն էլ ամեն օր չեն գործածում: Անձեռոցիկներն էլ հազուադէպ են, սովորաբար մի շոր են դնում սկուտեղի վրայ, որպէսզի բոլորն էլ ձեռքերը սրբեն: Կերակրողներ մատուցանում են միայն մի մի ամանով, դնելով սկուտեղի մէջ տեղում: Բոլորն էլ այդ միևնոյն ամանից են ուտում, գգալով և կամ, շատ յաճախ, ձեռքով, այս պատճառով և անհրաժեշտութիւն են զգում ճաշից յետոյ սապոնով ձեռքերը լուալու: Միջին և ստորին դասակարգերի մէջ տան մեծը և կամ ամենափոքր երեխան ճաշի սկզբում և վերջում հայր-մեր է ասում:

Քնելիս միջին և աղքատ դասակարգը պառկում է տան-տանը և կամ քջօշկում, հիւրանոցում, հարուստ տներում միայն իւրաքանչիւր ամուսնացած զոյգ ունենում է մի առանձին նըն-

Ջարան: Մահճակալներ չափազանց հազուադեպ են, քնում են յատակին և կամ կանապենների վրայ: անկողինները գիշերը ձգում և ցերեկը վերցնում դնում են յատակ այս նպատակով շինուած ծալքառեղում: Անկողիններ ցկելու պարտականութիւնն ընկնում է տան նորահարսի կամ չափահաս աղջկայ վրայ: Թէ ցկելիս և թէ հաւաքելիս պէտք է պահպանել աւագութեան կարգը: Նորահարսը պարտաւոր է նաև սկեսրայրի հանդերձները հանել, նրա վերմակը ծածկիլ և ոտները միառժամանակ մաժել, մինչև որ նա քնի: Նոյն պարտականութիւնը սակայն փոքր ինչ աւելի թեթև, ունի նա դէպի մեծ տեղը և սկեսուրը:

Պէտք է նկատել, որ ընդհանրապէս ամուսինները միասին են քնում, փոքրիկ երեխաներին էլ իրենց կողքին քնացնում, իսկ օրօրոցի մանկիկը մօր կողմն է դրուած լինում, որ գիշերն օրօրէ, վեր կենայ ծիծ տայ:

Տան մէջ գրեթէ ամբողջ օրը տիրում է մեռելային լուծութիւն, որովհետև տղամարդիկ ամբողջ օրը բացակայ են լինում, իսկ կանայք հարսնութիւն են անում, այսինքն կրտսեր հարսերն սկեսրոջ և աւագ հարսերի հետ կամ բոլորովին չեն խօսում մի քանի տարի շարունակ և կամ խօսելիս էլ աշխատում են ցածր, քանի տարի շարունակ և կամ խօսելիս էլ աշխատում են ցածր, մեղմ ձայնով խօսել: Երեխաներն էլ մեծ մասամբ դպրոցներումն են լինում, տանը եղած ժամանակ էլ չափազանց զսպուած են. թոյլ չի տրուում նրանց մեծերի ներկայութեամբ խաղալ, խօսել, վազվզիլ: Սրանք ստիպուած են աւագութեան կարգով լուռ ու մունջ նստել, և կամ դասերը պատրաստել: Այս պատճառով և չափազանց ճնշուած, տխուր են լինում:

Երբ մի տղամարդ հիւր է գալիս, անմիջապէս կանայք թագնւում են. շատ շատ՝ պառաւ սկեսուրը դուրս է գալիս ընդունելու: Այցելուն աջ ձեռքը նախ շրթունքներին և ապա ձակաթին դնելով՝ բարևում է: Նոյն կերպ առնում են նրա բարևը և հրամցնում նստելու: Եթէ հիւրը մօտ ազգական է՝ հարսները մէկ մէկ դուրս են գալիս, մօտենում նրան, կանգնում, և միևնոյն կերպ բարևում, իսկ եթէ պառաւ է կամ մի ծերուկ, համբուրում են նրա ձեռքը, իրենց ճակատին դնում և կրկին համբուրում: Զուր սեղմելու սովորութիւնը նոր նոր մուտք է գործուում: Զուր սեղմելու սովորութիւնը նոր նոր մուտք է գործուում: Հիւրը աշխատում է ներքև նստել, սակայն տնեցիներն ստիպում են բարձր նստելու: Անմիջապէս ներկայ եղողներին ամէն միւր կրկին գլխով բարևում է և ասում. Բարև եկար: Հիւրը գլուխը շարժելով ասում է. Բարին վերադ: Անմիջապէս տան փոքրիկներից մինը ծխախոտ է հրամցնում: Միքիլ յետոյ տաճկական սև սուրճ են մատուցանում, օրուայ սր ժամանակն

էլ որ լինի: Ծխախոտով ու սրճով աւարտում է սովորական հիւրասիրութիւնը. հիւրը կարող է մի քանի ժամ նստել և վերկենալ գնալ, սակայն եթէ նա պատուաւոր է՝ առանձին հիւրասիրութեան արժանի՝ մի բաժակ օշարակ են մատուցանում, իսկ եթէ ձմեռ է՝ քաղցրաւենիք: Մի մատուցարանի մէջ դրուած է լինում մի կամ երկու տեսակ քաղցրաւենիք, մի կողմը մի ափսէի մէջ թէյի գդալներ, իսկ միւս կողմը մի բաժակ ջուր և կամ մի ափսէ: Նախ հիւրը և ապա տնեցիները վերցնում են մի թէյի գդալ, նրանով քաղցրաւենիք առնում միայն մի գդալ, անմիջապէս ուտում, և այդ գդալը ձգում բաժակով ջրի կամ ափսէի մէջ: Եթէ ստիպեն երկրորդ անգամ վերցնելու, նա նոր գդալ է վերցնում: Հարուստ տներում այս քաղցրաւենու հետ երբեմն մատուցանում են նաև կոնեակ և միրգ:

Երբ կանայք են հիւր գնում, այս կերպ հիւրասիրելուց դառն՝ եթէ ցանկանում են իրենց խորին յարգանքը ցոյց տալ՝ ձեռաց մի երկու տեսակ կերակուր են պատրաստում և ձաշով հիւրասիրում, թէպէտ և՛ ձաշի ժամանակ չի լինում:

Թէ կանայք և թէ տղամարդիկ սովորաբար շատ հազիւ են միմեանց մօտ հիւր գնում: Ամբողջ օրը, առաւօտեան ժամը 7-ից մինչև երեկոյեան 7-ը խանութում անցկացնելուց յետ՝ տղամարդիկ վերադառնում են տուն ժամը եօթ և կէսին, ընթրում մինչև 8^{1/2}—9, և ապա 9^{1/2}-ին, 10-ին պառկում են քնելու՝ որպէսզի առաւօտ վաղ կարողանան վեր կենալ, գնալ գործի: Զմեռը, երբ համեմատաբար աւելի շուտ են փակում խանութները և գիշերն էլ շատ երկար է, ընթրիքից յետոյ գնում են միմեանց մօտ ժամանակ անցկացնելու: Ամառները սովորաբար իւրաքանչիւր գերդաստան լուսնկայ գիշերներին դուրս է գալիս իւր տան առջև տարածուած այգին և այնտեղ փոքր ինչ ժամանակ անցկացնում: Պատահում է, որ լուսնի լուսից դեթուած երկու, երեք դրկիցները հաւաքում են մինի այգում, կանայք կանանց հետ, տղամարդիկ տղամարդկանց, փոքր ինչ ժամանակ անցկացնելու: Ծխախոտն ու սուրճը դարձեալ մատուցանում են, իսկ եթէ մրգերն արդէն հասած են լինում, իրենց ձեռքերով քաղում են և ինչքան ուզում՝ ուտում, առանց կպչելու կամ լուսնալու:

Հասարակական տեղեր՝ ժողովարան, դրօսավայր, բոլորովին չկան, կան միայն մի քանի սրճարան, որոնք նոյնպէս երեկոյեան դատարկ են լինում. այդ տեղ յաճախում են գլխաւորապէս ցերեկները և այն էլ անգործ մարդիկ: Ժամը երեկոյեան ութից Այգեհտանի բոլոր փողոցները ամայացած են լինում:

Տարին մի քանի անգամ Կենտրոնական և Երաման դպրոցների դահլիճներում ներկայացումներ են տրվում հայերէն լեզուով և ի՞նչ, ոչ միայն դերակատարների, այլ և հանդիսականների մէջ ոչ մի կին չի լինում, նոյն իսկ վարժուհիները ոչ միայն սիրտ չեն անում դեր վերցնել, այլ և ներկայացման չեն յաճախում: Պատահում է, երբեմն, որ յատկապէս միմիայն կանանց համար ներկայացում են տալիս, և այս միջոցին կանայք շնորհ են բերում:

Կանանց յատուկ հրաւերներ համարեն թէ տեղի չեն ունենում. գնում են միմեանց մօտ՝ երբ օտարութիւնից մինը վերադառնում է՝ նրա գալուստը շնորհաւորելու, երբ մինը գնալու է օտարութիւն՝ բարի երթ և վերադարձ մաղթելու. նաև երբ մի մօտիկ ազգական տղոցկան է, հիւանդ է, սգաւոր է կամ զաւակը նշանի է: Միակ տեղը, ուր կանայք ազատօրէն կարող են գնալ՝ այդ եկեղեցին է, ուր ոչ միայն ժամասացութեան միջոցին, այլև աւարտից յետոյ մի քանի ժամ շարունակ կանգնած կամ նստած խօսում են, միմեանց վիշտ, ուրախութիւն բաժանում, սրան նրան բամբասում: Սակայն այս ազատութիւնն էլ միայն պառաւ կանանց է տրուած, նորատի կանայք, նորահարսերն ու աղջիկներն իրաւունք չունին սրտերն ուղած միջոցին եկեղեցի գնալու, նրանց համար որոշ օրեր կան՝ ծաղկազարդին, մեծ պասի վերջի շաբթին, Լուսաւորչի տօնին, տաղաւարներին:

Մտքերի փոխանակութեան մի տեղ էլ ունեն վանեցի կանայք, դա բաղանիսներն են, ուր նրանք ամէն անգամ գնալիս 5—6 ժամ անց են կացնում, խօսելով ու բամբասելով սրան նրան: Պէտք է նկատել, որ բամբասանքը շատ է զարգացած Վանում, և այն ոչ միայն կանանց, այլ և տղամարդկանց մէջ:

Այսպէս ուրեմն, տեսնում ենք, որ Վանում չկայ հասարակական կեանք, իւրաքանչիւր գերդաստան կամ ընտանիք ապրում է առանձնացած, ինքն իրեն: Սակայն այս կղզիացած գերդաստանի մէջն էլ դժբախտաբար չի թագաւորում սէր և խաղաղութիւն:

Տեգերկիներին մէջ խռովութիւնը, բամբասանքը, ատելութիւնը, նախանձը մշտապես երևոյթներից են. պուտկի ետ՝ տեգերկնկան խեռ (խռովութիւն, քենախնդրութիւն) ասում է տեղական առածը, նմանեցնելով սրանց խռովութիւնը խեցիի մէջ դրուած կերակրի եռման, որ երբէք չի դադարում: Ողբալի է մանաւանդ այն տիգերկնկայ դրութիւնը, որի ամուսինը պանդխտել է և փող չի ուղարկում տուն: Սրա ամուսնու անտարբերու-

թեան, անյաջողութեան, վատ կեանքի, մի խօսքով բոլոր յանցանքների վրէժը այս խեղճ կնոջից են լուծում: Միակ հանգիստը հարսը կարողանում է իւր ծնողների գրկում գտնել, ուստի և շատ յաճախ պատահում է, որ վայր ձգելով նոյն իսկ երեխաներ՝ հարսները գնում են իրենց ծնողների տունը 15—20 օր անընդհատ ֆնալու, շունչ քաշելու: Եւ այս այնքան բնական է համարւում, որ սովորութիւնների կարգն է անցել և «տուն տանիլ» է կոչւում: Եւ որովհետեւ որքան ճնշումը զսպանակի վրայ սաստիկ լինի, այնքան նրա թռուցքը ուժգին կը լինի, ուստի դարմանալի չէ, որ այժմ Վանում և սրա շրջակայ գիւղերում յառաջ են նկել նոր սերնդականներ, որոնք հակառակ ծայրայեղութեան են հասել՝ ժխտելով միանգամայն ընտանիքը և ազատ սէր քարոզելով:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ *).

Հիւանդի ազգականներն ու բարեկամները շարունակ այցելութեան են գալիս և շատ անգամ իրենց հետ զանազան ուտելիքներ են բերում, ստիպելով հիւանդին ուտելու: Այցելուները և տնեցիք աշխատում են գուշակել, թէ հիւանդը առողջանալու է, թէ ոչ, ուստի և դիմում են հետեւեալ միջոցների. — Հաշւում են թէ հիւանդը լուսնի քանիսին է հիւանդացել, և այդ օրը բարձր է եղել, թէ չար. բարի օրում հիւանդացողը ինչ հիւանդութեամբ էլ որ բռնուի, կառողջանայ, իսկ չար օրում հիւանդացածին ոչ մի ճար չի լինի:

Եթէ հիւանդը ձեռքով շարունակ քիթը պծի՝ նշան է որ մեռնելու է:

Եթէ կատուն գայ, պառկի հիւանդի անկողնի վրայ, նշան է, որ հիւանդը պիտի առողջանայ:

Եթէ Ագռաւը կռռայ կամ բուն բւայ և կամ շունը ոռնայ հիւանդի տան մօտ՝ հիւանդին փրկութիւն չի լինելու:

Եթէ հիւանդութիւնը մի քանի անգամ կրկնուի՝ նշան է որ անփառ պիտի անցնի:

Եթէ երազում տեսնեն, որ իրենց տունը և կամ նրա մի պատը փուլ է գալիս, և կամ հին ննջեցեալներից մինը երևում է, նշանակում է, որ հիւանդը մեռնելու է:

*) Բացի իմ հաւաքած նիւթերից օգտուել եմ նաև յատուկ իմ խնդրով հաւաքած արժ. Կէորդ քահանայ Շաքարեանի և պ. Մ. Տէր Մկրտչեանի նիւթերից:

Եթէ հիւանդի մարմնի վրայ կապոյտ բծեր են նկատուում, ապա նա «Գրողի կանաչ ձիպոտի նշանն է» և գուշակուում են որ հիւանդն անշուշտ մեռնելու է, որովհետեւ հաւատուում են, որ գրողը կանաչ ձիպոտի հարուածով նշան է անում այն հիւանդի վրայ, որի հոգին մի քանի օրից անհետիւ է:

Երբ միւսի հիւանդութիւնը շատ երկար է տևում, հաց են թխում և փողոցի դռանը կանգնած անց ու դարձ անողներին մի մի բաժանում, որպէսզի հիւանդն էլ հացերի պէս կամ աջ դնայ կամ ձախ.—կամ առողջանայ և կամ մեռնի:

Նոյն նպատակով քաղաքամիջի Տիրամայր եկեղեցուց բերել են տալիս «Մարխաս» կոչուած աւետարանը և քահանային կարգաւ տալիս հիւանդի գլխին:

Նաև եկեղեցիներում «Տէր ողորմեա» են ասել տալիս, այսինքն քան քահանան առաւօտեան ժամասացութիւնից կամ պատարագից յետոյ ծանուցանելով ժամուորներին հիւանդի ծանր դրութեան մասին, խնդրում է «Տէր ողորմեա» ասել, որպէսզի Աստուած լսելով ժամուորների ձայնը՝ ողորմի. և ընդ որ ժամուորները բարձրաձայն ասում են. «Տէր, ողորմեա»:

Հիւանդի հոգևորքի միջոցին շրջապատողները զսպում են իրենց լացը և կամ հեռանում, որպէսզի իրենց լացով հիւանդին «հոգադարձ չանեն» և մի քանի օր ևս տանջուելու պատճառ չըլինին:

Մեղաւոր մարդու հոգին առնելիս հրեշտակը «խրեղէն սուրը» ձեռին ներկայանում է և խստիւ հոգին պահանջում, որից հիւանդը դարձանդու է և ընկնում երեսի վրայ, ձեռներով ճանկում բարձր ու վերմակը և անոնի ձայներ հանում, իսկ արդար մարդուն ներկայանում է ծաղիկը ձեռին, ժպիտն երեսին ու հիւանդը ամենայն հանգստութեամբ աւանդում է հոգին:

Մեղաւորի հոգին սև և գարշահոտ շնչի պէս է լինում, իսկ արդարինը՝ դեղին լուսի պէս և անուշահոտ, այնպէս որ հետաքրքիր մարդիկը հոգևորքի միջոցին կտուր են բարձրանում և յառած նայում ու հոտոտում, որ տեսնեն հոգին:

Եթէ ննջեցեալը «թևթրիկ (թեթև) ցաւիկ, հանգիստ մահիկ» է ունեցել, ասում են թէ արդար է եղել:

Եթէ ննջեցեալի գոյնը թարմ է մնացել, ողջախոհ և արդար է եղել:

Եթէ ննջեցեալը եկեղեցի կամ գերեզմանատուն տանելիս դադարը կրողների անզգութեամբ շարժում է դադարի մէջ, ապա նա, թէ նոյն տանից մի ուրիշն էլ շուտով մեռնելու է:

Եթէ ննջեցեալը մեռնելուց առաջ հաղորդութիւն է առել, արդար և երջանիկ է համարւում:

Հոգին աւանդելուց յետոյ շրջապատողները, մանաւանդ սիրելիները, բարձրաձայն լալիս են, իսկ մի քանի սրտաւորներ ննջեցեալի ձեռները խաչում են.—(կրծքին դնում), աչքերը, եթէ բաց է մնացել, փակում, գուշակելով հանդերձ, որ այնպէս զեռ ևս չէ կշտացել, ռախիւր պարզում և բերանը փակում: Ապա պառկեցնելով ննջեցեալին արեւելից արեւմուտք՝ մի ճրագ են դնում սնարի մօտ: Անմիջապէս հրաւիրում է քահանան, որին ուղեկցում է ժամկոչը՝ բերելով իւր հետ եկեղեցապատկան նաշը: Քահանան «Հոգւոյ» է ասում, որից յետոյ ժամկոչը և կամ, եթէ ննջեցեալը կին է, մի քանի պառաւ կանայք, ննջեցեալին վերջնում տանում են մի առանձին տեղ և դնելով ապխտակների վրայ տաք կամ սառն ջրով լողացնում:

Յաճախ ննջեցեալին մի սաւանի մէջ փաթաթած, նաշով և եկեղեցի են տանում և այստեղ, մեռելատանը, այսինքն մեռելներ դնելու համար յատկապէս շինուած սենեակում, լողացնում և պատնջում:

Լողացնելու համար բերուած ջուրը եթէ աւելանայ, անշուշտ թափում են, կաթսան քրիւքսվայր դարձնում:

Պատանքիւ շապիկ և վարտիկ չեն հագնում, այլ մի հաստ, հասարակ կտաւ պարկաձև կարում են և դրոց մինչև գլուխ անցկացնում, ծածկելով նաև երեսը: Երբեմն երեսաղէմից բերած լուսոտ պատանքով են պատանքում, որը դրուած է լինում ս. գերեզմանի վրայ և որի վրայ բանում է մարդու ամբողջ պատկերը: Ոմանց աջ ձեռն էլ նոյնպէս երեսաղէմից բերուած լուսոտ մոմ են տալիս, իսկ ընդհանրապէս մանուկների ձեռքը մոմ տալու սովորութիւնը չկայ:

Միայն շատ հարուստներն են առանձին զագագ պատուիրում, սև գոյնի Աղբատներն ու գիւղացիները հասարակաց նաշն են գործածում:

Շուտով բարեկամ կանայք ու տղամարդիկ հաւաքում են և ննջեցեալին, որոշ եկեղեցական կարգը կատարելուց յետ, եկեղեցի փոխադրում: Այստեղ, կամ սրա խորանում, մնում է ննջեցեալը մի քանի օր, մինչև որ թաղման պատրաստութիւն են տեսնում:

Ննջեցեալին տանից հանելիս մի բուսն հող են ձգում ետևից, որպէսզի անեցիները ցաւն էլ իւր հետ տանի, այս սովորութիւնից յառաջացել է «ցաւդ տանեմ» դարձուածքը:

Ննջեցեալը տանից հանելուց յետոյ սենեակի բոլոր պատուհանները ու դռները բաց են անում և խզնի ծխում: Նոյն գիշեր այդտեղ ոչ ոք չի քնում և մինչև լոյս ճրագ են վառում: Գիւղերում սովորութիւն կայ, որ ազգական և բարեկամ անեցիք մի մի

ձիթի ճրագ է ուղարկւում այս սենեակում վառելու, այնպէս որ երբեմն 40—80 ճրագ են վառւում մինչև լոյս: Մօտիկ, ազգական տներից էլ երկական հաց և մի մի պնակ կերակուր է ուղարկուում ննջեցեալի տունը:

Ննջեցեալին եկեղեցի տարած օրը եկեղեցական միաբանութեան ճաշ է ուղարկւում ննջեցեալի տանից, որ ամբիօք է կոչւում:

Թաղում.—Ընդհանրապէս ննջեցեալներին, բացի մանուկներից, պատարագով են թաղում, ուստի և մեռնելուց 1—3 օր յետոյ, թաղման նախօրը օրը, եկեղեցի են ուղարկում մի շիշ գինի և ալիւր՝ նշխարքի և բաժակի համար, նաև ընթրիք քահանաներին, որոնք ուտում են ժամկոչին յատկացրուած եկեղեցու սենեակում:

Պատարագի աւարտին պատարագիչ քահանան ննջեցեալի վրայ մի նշխարք է դնում, որը ննջեցեալին գերեզման իջեցնելիս ժամակոչը վերցնում է և պատանքի կարը մի քիչ քանդելով, ննջեցեալի մերկ կրծքին է դնում:

Վարչամակ գործածելու սովորութիւնը չկայ:

Վերջին հրաժեշտի ժամանակ կանայք ընկնում են դագաղի վրայ, սաստիկ և բարձրաձայն լալիս. գիւղերում և երբեմն քաղաքումն էլ գանձ են ասում: Դիակառք քաղաքում չկայ, սակայն կան աղքատ մարդիկ, որոնք յայտնի են իբրև դագաղակիրներ, սրանք են տանում և իբր վարձատրութիւն ճաշ ստանում սգատանը: Դագաղը նախ կրում են ննջեցեալի ամենամօտ ազգատանը: Կանայք եկեղեցուց վերադառնում են սգատուն, գազանները: Կանայք եկեղեցուց վերադառնում են սգատուն, իսկ տղամարդիկ, մեծ մասամբ, գնում մինչև գերեզմանատուն: Թաղման կարգը կատարելուց և ննջեցեալին գերեզման իջեցնելուց յետ յուղարկաւորողները մօտենում են ննջեցեալի ամենամօտ անձնաւորութիւններին և տաճկական ձեռով աջ ձեռքը բերնին ու ճակտին տանելով ասում են. «Գլուխդ ողջ, ս. Հոգւով բերնին ու ճակտին տանելով ասում են. «Գլուխդ ողջ, ս. Հոգւով մխիթարուես»: Փահանան, սգատիրոջ յանձնարարութեամբ, հրաւիրում է յուղարկաւորողներին սգատուն՝ «հոգու ճաշի»:

Այստեղ, սգատանը, կրկին եկեղեցական պաշտօն են կատարում յուղարկաւորողների ձեռներին վառուած մոմեր տալով: Ապա ճաշում են. նախ օրհնում են սեղանը և մի բաժակ գինի Ապա ճաշում են. նախ օրհնում են սեղանը և մի բաժակ գինի

Ապա ճաշում են. նախ օրհնում են սեղանը և մի բաժակ գինի Ապա ճաշում են. նախ օրհնում են սեղանը և մի բաժակ գինի

մարդ յուղարկաւորողները մեկնում են «Աստուած ողորմի հոգւոյն» ասելով ու կանայքն են սեղան նստում:

Եօթն օր յետոյ ննջեցեալի «էզ եօթը» է տրւում: Պատարագ են մատուցանում, որին ներկայ են լինում ազգական ու բարեկամ տղամարդիկ և մանաւանդ կանայք, ապա խմբով գնում են գերեզմանատուն հոգեհանգիստ կատարում և յետոյ գալիս սգատուն՝ ճաշում: Ծառ է տրւում նաև աղքատներին:

Միևնոյն ժէսը կատարւում է նաև քառասունքին և տարելիցին, սակայն այժմ քաղաքում և հետգհետ սրա շրջակայ գիւղերում թէ եօթը և թէ քառասնից ու տարելիցի ժէսերը վերանում են:

Թաղումից յետոյ այն բոլոր ազգական կանայք, որոնք չէին կարողացել թաղման ներկայ լինել, մի մի գլուխ շաքար առած գալիս են սգատունը զլուխ խարցումի—տեսութեան. իսկ աւելի մօտիկ ազգականներ մի քանի շաքարից կամ ամիսներից յետոյ գալիս են սգահան.—մեծ դժուարութեամբ սպուրներին տանում են եկեղեցի, իրենց տուն, քաղանիս և այլն:

Թաղումից մի քանի օր յետոյ մօտիկ ազգականներ գալիս են սգատուն և ննջեցեալի հանդերձներն ու անկողինը լուանում, մաքրում: Հանդերձներից մի մասը նուիրում են այս շորեր լուացող կանանց, մի մասը ննջեցեալին լողացնողին, մի մասն էլ իբր կողոպուտ տալիս էին իրենց թեմի վանքին, որտեղի միաբաններից միինը տարին մի քանի անգամ յատկապէս այս նպատակով շրջում էր գիւղերը:

Ննջեցեալի շորերը լուանալիս աւելացած սապոնը անշուշտ տալիս են լուացող կանանց:

Մեռելուց.—Տարուայ հինգ նաւակատեաց մեռելոցի օրերը ննջեցեալի տնեցիները մօտիկ ազգականների հետ գնում են գերեզմանատուն, օրհնել տալիս գերեզմանը, նրան շրջապատած լալիս ու բարձրաձայն ողբեր ասում: Սովորաբար իրենց հետ տանում են թխուածքներ և պտուղներ, ուր թէ իրենք են ուտում, և թէ աղքատներին բաժանում:

Ունևորները Աւագ և սուրբ Խաչի ուրբաթ օրերը յատկապէս փայնաքէօշ (համիմով հաց) են թխում և աղքատներին բաժանում, նաև համբարձման, վարդավառի և Աստուածածնի վերափութման շաքար օրերը բաղադր (իւղաբլիթ) են պատրաստում և բաժանում, իսկ այգետէրերը խաղող և խնձոր են ցրում աղքատներին:

Սովորաբար ննջեցեալի անունը դնում են նոր ծնուած երեխայի վրայ, կամենալով նրա յիշատակը վառ պահել տան մէջ: Եթէ տան մեծի, հօր, անունն են դնում երեխային, քաշում են

ուղղակի պնդումը տալ, ուստի և կոչում են այնպէս, ինչպէս կոչում էին նրան, օրինակ աղան, ջոջ աղա, խէր, հայրիկ և այլն: Միևնույն ժամանակ զգուշանում են կենդանի ազգականի պնդումը դնել նորածնի վրայ, որովհետև հաւատում են, թէ այս գէպքում այդ ազգականը շուտով կը մեռնի, իւր արևն արդէն այս նորածնին պարգևած լինելով:

Նշնցեալի ամենաբոլոր ազգականները մի քանի ամսից մինչև մի տարի սուգ են պահում. տղամարդիկ մի քանի օր գործի չեն գնում և ընչ էլ մագերը կամ մարգար խուզում: Տեղու ազգականները գալիս են սրանց ստիպմամբ տանում իրենց տուն, սպիրիչին կանչում, խուզել տալիս սրանց մագերը և ապա, հիւրասիրելուց յետ, առաջնորդում գէպի իրենց աշխատանքի տեղը: Կանայք իրենց մագերի հիւսերը քանդում են, զգգգուած ձգում ուսիրին, բոլորովին սանր չեն դպցնում և նոյն իսկ, երբեմն, ճողածում գլխներին, սև լաչակ կապում, տան մէջ փակելում: Սգահան եկողները փոքր առ փոքր համոզում են գործի լինել և գուրս գալ տնից և թոյլ տալ գլխները լուանալու: Բայց և այնպէս՝ գրեթէ ամբողջ տարին նրանք զբոսանքի, ուրախութեան և հարսանքի չեն գնում, զատկին հաւկիթները սև կամ կապոյտ են ներկում, բարեկենդանին ուրախութիւն չեն անում:

Գորեզման. — Գորեզմանատները սովորաբար գտնւում են գիւղերի մօտ՝ ճանապարհների վրայ, որպէսզի անցուղարձ անելիս կարելի լինի ողորմիս տալ, այցելել: Ամէն մի գերեզման և նոյն իսկ տոհմ աշխատում է իւր նշնցեալ անդամներին միմեանց մօտ ամփոփել, ուստի և շատ անգամ օտար գիւղում մեռածներին բերում, ամփոփում են իրենց տոհմական գերեզմանատանը: Շատ անգամ որք երեխաներին թաղում են իրենց մօր կամ հօր գերեզմանում, փոքր ինչ բարձր սրանց կմախքից: Գորեզմանների խորութիւնը լինում է 1—2 մետր, փորում են կամ ժամհարները և կամ նշնցեալի ազգատ ազգականները: Տապանաքարեր գիւղերում ընդհանրապէս սակաւաթիւ են, իսկ քաղաքում գրեթէ բոլոր գերեզմանների վրայ էլ կան:

Տապանաքարերի մեծագոյն մասը, մանաւանդ ճները, խաչքարեր են, նշնցեալի դռների մօտ, արկելեան կողմը, կանգնեցրած, իսկ նշնցեալի վերան քառակուսի քար է ձգուած: Կան նաև դազադաձև տապանաքարեր: Գրեթէ բոլոր գերեզմանաքարերի վրայ կայ փոքրիկ փոս, որ յատկապէս շինւում է, որպէսզի այդ տեղ կրակ լցնեն և խուսկ ծխեն:

28-

3.

6799
6800
6801

0002783
0002784
0002785

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0002785

ՀՀ Ազգային գրադարան



NL0002784

ՀՀ Ազգային գրադարան



NL0002783

